

ՏՈՆԱԽՈՍԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ

Ա





ՀՐԱՄԱՆԱԲ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԳԱՆՈՒՍՏՅԱՆ**

**ՄԵԾ ՊԱՆՔԻ
ԿԻՐԱԿԻՆԵՐԻ
ՈՍԿԵ ՇՂԹԱՆ**

Բ հրատարակություն

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՆՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷԶՄԻԱԾԻՆ - 2008

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37
Շ - 757

*Արևմտահայերենից փոխադրեց
Գայանե Անրոնյանը*

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՆՈՒՍՅԱՆԸ

Շ - 757 Մեծ պահքի կիրակիների ոսկե շղթան: - Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008.- 216 էջ:

Շնորհք արքեպիսկոպոս ԳԱՆՈՒՍՅԱՆԸ «Մեծ պահքի կիրակիների ոսկե շղթան» գրքում անդրադառնում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առանձնահատկություններից մեկին՝ Մեծ պահքի կիրակիներին տրված առանձին անուններին: Հեղինակը բացատրում է յուրաքանչյուր կիրակիի մեջ խտացված իմաստը, ինչպես նաև ներկայացնում բոլոր կիրակիների ամբողջությունը:

Գիրքը գրավում է գեղեցիկ, հյութեղ ու պատկերավոր լեզվով և մատչելի է ընթերցողների լայն շրջանակներին:

ԳՄԴ 86.37

Տպագրվում է մեկենասությամբ՝

ISBN 978-99930-75-72-1

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008 թ.

Երկու խոսք

*«Գրված է՝ միայն հացով չի ապրի մարդ, այլ՝ այն ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից»
Մատթեոս Դ 4*

Հայ Եկեղեցու ծիսակարգում պահոց օրերը շատ են: Այդ օրերին Եկեղեցին թելադրում է հրաժարվել կենդանական ծագում ունեցող կերակուրներից և սնվել բուսական կերակուրներով: Պահքի խորհուրդը, անշուշտ, չի սահմանափակվում միայն կերակուրների ու ըմպելիքների վրա ինչ-որ արգելքներ դնելով. պահոց օրերին Եկեղեցին պատգամում է սնվել նաև կենդանի հացով՝ Աստծո խոսքով: Այս առումով նշանակալի է Մեծ պահքի շրջանը՝ իր յուրահատուկ խորհրդաբանությամբ՝ հրավիրելով հավատացյալներին ինքնաքննության, զղջումի, ապաշխարության:

Մեր Եկեղեցու ծիսակարգում Մեծ պահքի շրջանը «ոսկե շղթա» է կազմում, ուր ամեն օղակ՝ կիրակի, ունի իր խորհուրդը, իսկ բոլորը միասին կարծես ներկայացնում են Եղեմական պարտեզից մինչև Գողգոթա տանող ճանապարհը, այսինքն՝ մարդկության փրկագործության ուղին:

Առաջին կիրակին **Բուն քարեկենդանն** է, որը խորհրդանշում է Եղեմական պարտեզում Ադամի և Եվայի՝ Աստծո ներկայությամբ ապրած երանության օրերը:

Արտաքսման կիրակին խորհրդանշում է անհնազանդության պատճառով Եղեմական պարտեզից ար-

տաքսվելը: Արտաքսված այդ վիճակը, անշուշտ, միայն Ադամին և Եվային չի վերաբերում, այլ նաև բոլոր նրանց, ովքեր հեռացած են Աստծուց, Եկեղեցուց դուրս են, սուրբգրային կենարար պատգամներին անհաղորդ: Հենց այստեղ է ի հայտ գալիս Աստծո փրկարար սերը հեռու-հեռվում գտնվող Իր գավակների հանդեպ: **Անատակի կիրակին** այդ հետդարձի ճանապարհն է նկարագրում:

Տնտեսի կիրակին պատգամում է մեզ տրված տնտեսության մեջ հավատարմություն ցուցաբերել, քանի որ այս աշխարհում ամեն մի մարդ տնտես է իր ունեցվածքի վրա, այդ թվում նաև իր կյանքի, իրեն տրված շնորհների և անհրաժեշտ է, որ լավագույնս տնօրինի այդ տնտեսությունը՝ գիտակցելով, որ մի օր հաշիվ է տալու Աստծուն:

Դատավորի կիրակին անձանձրույթ աղոթելու, ձեռնարկած բոլոր գործերը մինչև վերջ հասցնելու պատգամն է խորհրդանշում, որպեսզի Դատաստանի՝ **Երկրորդ Գալստյան** օրը (Գալստյան կիրակի) մաքուր սրտով ու անկեղծ հավատով դիմավորենք մեր Տեր Հիսուս Քրիստոսին:

Հուսով ենք, որ ներկա հրատարակությունը օգտակար կլինի կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների, աշակերտների, ուսանողների և ընթերցող լայն հասարակայնության համար:

ՂԵՎՈՆԴ քահանա ՄԱՅԻՆԱՆ

Մ Ո Ւ Տ Ք

Հայաստանյայց Եկեղեցին այնպիսի յուրահատկություններ ունի, որոնցով մյուս եկեղեցիներից ոչ թե զարտուղվում, այլ զատորոշվում է ինքնատիպ անհատականությամբ: Այդպիսի համակրելի երևույթները շատ են, որոնցից են Մեծ պահքի կիրակիներին տրված հատուկ անունները: Բոլոր մյուս եկեղեցիները նրանց տալիս են թվական անուններ՝ Մեծ պահքի առաջին, երկրորդ և այլն կիրակիներ: Իսկ մեր Եկեղեցին դրանց հատուկ անուններով է օժտել՝ Բարեկենդանի, Արտաքսման, Անառակի և այլ կիրակիներ: Այդ անուններից յուրաքանչյուրն իր մեջ խտացնում է Մեծ պահքի նպատակի հետ կապված մասնահատուկ մի իմաստ, և կիրակիները, իրար միանալով, հոյակապ ամբողջություն են կազմում:

Տարիներ առաջ, ամերիկահայոց առաջնորդարանի «Հայաստանյայց Եկեղեցի» պաշտոնաթերթի 1952 թ. մարտի համարում մի հոդվածով անդրադարձել էինք հատկանշական այս երևույթին: Գրվածքների ներկա շարքը շատ քիչ առնչություն ունի մեկ հոդվածում:

խտացած այդ համառոտագրության հետ: Սա բոլորովին նոր մշակում է: 1971 թվականի փետրվարին և մարտին, «Մարմարա» օրաթերթում, «Մեծ պահքի խոկումներ» ընդհանուր խորագրի ներքո հաջորդաբար լույս տեսան ներկա գրքույկում համադրված գրվածքները՝ բացի առաջին գլխից: Փափագեցինք գրվածքների այս շարքը մեկտեղել՝ հագուստ մյուսների: Վերահրատարակության ընթացքում կատարել ենք կարևոր նշումներ, հավելումներ և հապավումներ՝ գրվածքների պարունակությունն, անշուշտ, իր մեծագույն գանգվածով նույնը պահելով:

Գիտենք, որ ընդհանրապես հայերեն գրքի ընթերցումը և մասնավորաբար կրոնական գրականությունը Սփյուռքում նահանջ են ապրում: Այսուհանդերձ, այս գրքույկի ընթերցումը եթե մինչև իսկ չա՛տ սեղմ ու սահմանափակ շրջանակների մեջ իր նպատակին ծառայի, իզուր անցած չպիտի նկատենք նրա պատրաստությանը հատկացված թանկագին ժամանակը, որն առհասարակ գողացել ենք մեր հանգստի պահերից:

Շնորհք արքեպիսկոպոս
15.10.1971, Ստամբուլ

ԳԼՈՒԽ Ա

Պահքի մասին ընդհանրապես

«Եվ արդ, - ասում է ձեր Տեր Աստվածը, - դարձե՛ք
ի՛նձ ձեր ամբողջ սրտով, ծոմապահությամբ,
լալով ու կոծելով»:
Հովել Բ 12

Միաստվածություն երեք կրոններն էլ՝ մոլիսիսականությունը, քրիստոնեությունը և մահմեդականությունը, ունեն և կիրարկում են պահեցողության օրենքը: Սակայն պահքը հատկապես քրիստոնեական կրոնի մեջ է ստացել իր գերագույն կարևորությունը և միջին դարերում իր խստագույն գործադրության՝ գազաթին հասել: Այդ դերերի պահեցողությունն օրացույցների մեջ գոյություն ունեցող մի կանոն կամ անհատական խղճի հարց չէր միայն, այլ եկեղեցական և ընկերային (սոցիալական կամ հասարակական - թարգմ.) ամենախիստ մի օրենք էր, որին, լինելով Արևելքում, թե՛ Արևմուտքում, հավաքաբար ենթարկվում էին բոլոր քրիստոնյաները: Վա՛յ պահքը լուծողին. թե՛ հանրային կար-

ծիքը և թե՛ օրենքը լախտի հարվածի նման կիջնեին նրա գլխին: 350-ական թվականներին Գանգրայում գումարված ժողովի 20-րդ կանոնն ասում է. «Չափահաս և մարմնով առողջ այն մարդը, ով քրիստոնյա անունն է կրում և քառասնօրյա պահքը մինչև վերջ չի պահում, նզովյալ լինի»:

Այսօր, սակայն, թե՛ եկեղեցիների օրենքներում և թե՛ անհատ քրիստոնյաների առօրյա կյանքում պահեցողությունը խորագույն տեղատվություն է կրում: Այս տեղատվությունն սկսվեց միջնադարի վերջերին, Արևմուտքում և շարունակվում է ցայսօր: Նախ Հռոմի քահանայապետերը շինարարական կամ պատերազմական գործողությունների համար նյութական միջոցներ հայթայթելու նպատակով պահեցողության խստություններից ազատ մնալու արտոնություններ չնորհեցին ազնվապետական ընտանիքներին, պայմանով, որ նրանք որոշ գումարներ հատկացնեն Հռոմի աթոռին: Ապա այս տեղատվությունը հզոր թափ ստացավ Վերածնունդով ու մանավանդ բողոքականության ծագումով, իսկ մեր ժամանակներում հրապարակ իջած ազատականության, հեղափոխությունների, անհավա-

տություն և կրոնական անտարբերության ծավալումով իր լրումին հանգեց: Այնպես որ, այսօր ընկերային հին կարգերի և մտայնությունների գրեթե իսպառ փլուզումով պահքն էլ իր նախկին փայլը կորցրեց, առանց, սակայն, կիրարկությունից բոլորովին դադարելու: Պահեցողությունից հրաժարումն այն աստիճան համատարած է, որ Հայաստանյայց Եկեղեցու բարձրագույն իշխանությունը 35 տարիներ առաջ* Հայ Եկեղեցու «Բարեկարգություն» վերաբերյալ իր գեկույցի մեջ ասում էր. «Կյանքն ինքնին լուծել է պահքի խնդիրը...»:

Սակայն, հակառակ այս իրողության, պահքը չպետք է դադարի իր կրոնական արժեքը և կարևորությունը պահելուց: Երբ կրոնական ինչ-ինչ կարևոր սկզբունքներ և հավատալիքներ, օրինակ՝ աղոթքը, ապաշխարանքը, հաղորդությունը և նմանները, ընկերային լայն խավերի մեջ կորցնում են իրենց գործնական կիրարկումները, ինչպես մեր ներկա ժամանակներում է, երբեք չի նշանակում, որ դրանք

* Այսինքն՝ 1936 թ., քանի որ սույն գիրքն արևմտահայերեն առաջին անգամ հրատարակվել է 1971 թ., որից և կատարվել է այս թարգմանությունը:

ըստ ինքյան նաև իրենց կարևորությունը և արժեքն են կորցնում: Երբ Աստծո Հոգուց այլևս պարպված որոշ աստվածաբաններ հայտարարում են, թե «Աստված մեռած է» կամ միլիոնավոր զանգվածներ չեն իսկ անդրադառնում Նրա գոյությունը, երբեք չի նշանակում, որ Աստված արդարև դադարել է գոյություն ունենալուց և գործելուց: Նույն հանգամանքն է պահեցողության դեպքում:

Ի՞նչ է պահքը

Մեր ժամանակակից սերունդը պահեցողություն ասելով, թերևս, հասկանում է մսեղենից, կաթնեղենից և հավկիթեղենից հրաժարում: Սա, սակայն, պահքի մասին վերջին ժամանակների և քաղքենի դասակարգի ըմբռնումն է. սկզբից այդպես չի եղել: Ըստ Աստվածաշնչի, պահեցողությունը սգի և ցավի մի շրջան է, ինքնազրկանք կամ ինքն իրեն տրված կամավոր պատիժ, որն իրագործվում էր որոշ ժամանակ ուտելուց և խմելուց, ինչպես նաև ՀԱԾՈՒՅՔԻՑ ամբողջովին հրաժարվելով: Կարևորը վերջին հանգամանքն է, այսինքն՝ նաև հաճույքի՛ց հրաժարվելը, քանզի

պահքը և հաճույքն իրար հակադիր երևույթներ են, և, հետևաբար, պահեցողություն, որին ընկերանում են նաև խաղը, ուրախությունը և պարը, երևակայել անհնար է: Ուրեմն՝ կրոնական նպատակով ինքն իրեն որևէ զրկանք պարտադրելը պահեցողություն է:

Սկզբնական շրջանում պահքից անբաժան էին լացն ու կոծը և սրանց արտահայտման արտաքին ձևերը՝ հագուստ պատռելը, քուրճ հագնելը, մոխրի վրա նստելը և այլն: Առհասարակ կիրարկվում էին որևէ ընկերության կամ խմբի կողմից՝ վշտառիթ և հոգեպես ցնցող տխուր իրադարձությունների դեպքում: Օրինակ՝ երբ Դավիթը և յուրայիններն իմացան Սավուղի ու Հովնաթանի եղբերական մահը և Իսրայելի ժողովրդի չարաչար պարտությունը, «իրեմց հագուստները պատռուեցին... ողբացին, լաց եղան ու միգն էրեկո ծոմ պահեցին» (ԲԹագ. Ա 11-12):

Պահքից անբաժան էր ԱՂՈԹՔԸ: Ս. Գրքում որտեղ էլ պահքի մասին հրահանգ է տրվում, միաժամանակ հանձնարարվում է աղոթքը: Երբ մարդիկ պահեցողություն են անում, միաժամանակ կիրարկում են նաև աղոթքը: Ս. Գրքում ասված է. «Բարի են աղոթքները՝ պահեցո-

դուրյուններով» (Տորիթ ԺԲ 8), *այլ տեղում*. «Բայց այս տեսակ դևը (այսինքն՝ արմատացած հոգեկան բարդությունները և կատաղի մոլությունները) այլ կերպ դուրս չի ելնում, եթե ոչ աղոթքով ու ծոմապահությամբ» (Մատթ. ԺԷ 20):

Պահեցողությունն էին անում նաև որևէ կարևոր նպատակի հաջողության համար: Ըստ այսմ, երբ Եսթեր թագուհին, հակառակ պալատի օրենքներին, որոչեց, կյանքը վտանգի ենթարկելով, ներկայանալ թագավորին՝ իր ժողովրդի փրկությունը հայցելու համար, մարդ ուղարկեց իր ազգական Մուրթքեի մոտ՝ ասելով. «Դու գնա՛ և հավաքի՛ր Սուսա քաղաքում եղած հրեաներին, ինչ համար ծո՛ւմ պահեցեք և երեք օր՝ ո՛չ ցերեկը, ո՛չ գիշերը չուտեք ու չխմեք, իսկ ես և իմ անժիշտները անուպես ծոմ կպահենք: Ապա ես կմտնեմ արքայի մոտ...» (Եսթեր Դ 16):

Պահքը, սակայն, հետզհետե ավելի կիրարկելի դարձավ իբրև ապաշխարանքի նշան և արտահայտություն: Սրա ամենաբացահայտ օրինակը գալիս է նինվեացիներից: Երբ նրանք Հովնան մարգարեից իմացան, թե քաղաքն իրենց ամբարշտության պատճառով պիտի կործանվի, «նինվեացի մարգիկ հավատացին Աստծու պատգամին, պահեցողություն հայ-

տարարեցին և մեծից մինչև փոքրը քուրճ հագան: Լուրը հասավ նինվեացիների թագավորին: Սա ելավ իր գահից, հանեց իր պատմուճանը, քուրճ հագավ և նստեց մոխրի վրա: Թագավորի ու նրա մեծամեծների կողմից նինվեում հայտարարվեց ու ազգարարվեց, թե մարդ և անասուն, հոտ և արջառ թող ոչինչ չուտեն, չճարակեն և ջուր չխմեն: Եվ մարդ ու անասուն քուրճ հագան, ի սրտե ազոթեցին Աստծուն, բոլորը հետ կանգնեցին իրենց չար ճանապարհներից և անօրենություններից, որ իրենց ձեռքով էր կատարվում, և ասացին. «Ով գիտե, թերևս Աստված միտքը փոխի և ճետ կանգնի իր խիստ բարկությունից, և կորստի չմատնվեմք» (Հովնան Գ 5-9):

Պահքի ներկա ձևին, այսինքն՝ համազամ կերակուրներից և մսեղենից հրաժարվելու սովորությունը, առաջին անգամ հանդիպում են Դանիելի մարգարեական գրքում, ուր ասված է. «Այդ օրերին ես՝ Դանիելս, երեք շաբաթ սուգի մեջ էի: Լավ հաց չկերա, միս և գինի չմտավ իմ բերանը, յուղով չօծվեցի, մինչև որ վերջացան երեք շաբաթները» (Դան. Ժ 2-3):

Մեծ պահեցողներ Ս. Գրքից

Հին Կտակարանի մեծ պահեցողներից առաջինը մեզ ներկայանում է նույն ինքը՝ Հին Ուխտի մեծագույն մարգարեն. Սինա լեռան վրա «Մովսեսը Տիրոջ հետ էր քառասուն օր և քառասուն գիշեր: Նա հաց չկերավ, ջուր չխմեց» (Ելք ԼԴ 28): Եղիա մարգարեի մասին էլ է հաստատվում, որ քառասուն օր պահեցողություն է արել (ԳՐԱԳ. ԺԹ 8): Դավիթ թագավորը պահք պահեց՝ իր ապօրեն զավակի կյանքը փրկելու համար, բայց չկարողացավ (ԲՐԱԳ. ԺԲ 16): Հուդիթը, հրեա ժողովրդի հերոսուհիներից մեկը, իր այրիությունը բոլոր տարիներին պահեցողության մեջ է եղել (Հուդիթ Ը 5-6): Նեեմիին, գերությունից հետո Երուսաղեմի պարիսպները վերաշինողը, երբ տեսնում է գերությունից դարձողների կրած նախատինքները և նեղությունները, Երուսաղեմի այրված ու ավերակ վիճակը, ասում է. «Նստեցի, լալիս էի, օրեր շարունակ սուգ արեցի ու ծոմ պահեցի, աղոթքի կանգնեցի երկնքի Տեր Աստծու առջև» (Նեեմի Ա 4): Աննա մարգարեուհին, այն երջանիկներից մեկը, որոնք իրենց կյանքի վերջալույսին տեսան Փրկչի մարմնացումը, «չէր հեռանում տաճարից,

այլ ծոմապահությամբ և աղոթքով գիշեր-ցերեկ ծառայում էր Աստծուն» (Ղուկ. Բ 37):

Երբ մտնում ենք Նոր Կտակարանի ավելի լուսավոր շրջանը, տեսնում ենք, որ պահքի սովորությունը շարունակվում է նաև այստեղ: Նոր Ուխտի առաջին պահեցողը նույն ինքը՝ նրա հիմնադիրը և մեր Փրկիչն է: Իր մկրտությունից հետո Հիսուսը «չոգով ամապատ առաջնորդվեց ու քառասուն օր փորձվեց սատաճալից: Չկերավ և չխմեց այն օրերից» (Ղուկ. Դ 1-2): Եկեղեցին այս պահեցողությունը մեկնաբանում է նախ իբրև տնօրինություն (այսինքն՝ աստվածային մի արարք, որը կատարվում է հանուն և ի դեմս մարդկության՝ նրա փրկության համար), որի կարգում են նաև Մկրտությունը, Չարչարանքը, Խաչելությունը, Մահը և այլն: Հիսուսն իրեն ծոմապահության ենթարկեց ոչ թե որովհետև ապաշխարանքի պետք ուներ, այլ դա կատարեց մարդկային ցեղի փրկության համար. մարդկության փոխարեն ի՛նքն ապաշխարեց, որպեսզի բոլոր պահեցողություն անողների ապաշխարանքն իմաստ և իրականություն ստանա շնորհիվ Իր ծոմապահության: Այս գաղափարը շեշտում են ապաշխարության մեր շարականները: Օրի-

նակ՝ «Այսօր Երկրորդ Ադամը (Քրիստոսը) պահեցողություն անելով՝ քավեց [արգելված] պտուղն ու տողների պարտքը»: Կամ՝ «Եկեղեցին էլ, Փրկչի քառասնօրյա պահեցողության օրինակով պահք պահելով, արժանի կլինի մասնակցելու Հարուցյալի հետ երանական ուրախությանը» (տես՝ Մեծ պահքի Ա և Բ կիրակիների հարցերը)*: Բացի այս, Հիսուսը ծոմ պահեց նաև որպես օրինակ Իրեն հետևողների: Ինչպես մկրտվել էր, որպեսզի ոչ միայն քավեր Իրեն հավատացողների մեղքերը, այլ նաև Իր հետևորդներն էլ անպատճառ ենթարկվեն այդ խորհրդին, այնպես էլ պահեցողություն արեց, որպեսզի Իրեն հավատացողները ևս նույնն անեն:

Հիսուսի և առաքյալների ուսուցումը պահքի մասին

Կրոնա-քարոյական հարցերի մասին Հիսուսի հիմնական ուսուցումները համադրված են «Լեռան քարոզում», ուր կարևոր տեղ է տրված նաև ՊԱՀՔԻՆ: Այնտեղ Հի-

* «Ձայնքաղ շարական», 1888 թ., Վաղարշապատ, էջ 88, 108:

սուսն ասում է. «Երբ ծոմ պահեք, տրտմերես մի՛ լինեք կեղծավորների մնաց, որոնք իրենց երեսները այլաճակում են, որպեսզի մարդկանց այնպես երևան, թե ծոմ են պահում. ճշմարիտ են ասում ձեզ, ա՛յդ իսկ է նրանց վարձը (այսինքն՝ մարդկանց երևալը և նրանցից գովվելը): Այլ երբ դու (խոսքն ուղղված է Հիսուսին հավատացողին և հետևողին) ծոմ պահես, օժի՛ր քո գլուխը - լվա՛ քո երեսը, որպեսզի չերևաս մարդկանց որպես ծոմ պահող, այլ քո Հորը՝ գաղտնաբար, և քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ» (Մատթ. 23:16-18):

Ուրեմն, Հիսուսը, առանց ընկնելու պահեցողության գործնական մանրամասնությունների մեջ, սովորեցնում է, թե ինչ ոգով պետք է այն կատարել:

Ուրիշ առիթով փարիսեցիները Հիսուսին քննադատեցին, թե Նա և Իր աշակերտները պահք չեն պահում, ինչպես իրենք և Հովհաննես Մկրտչի աշակերտները: Դիտողությունն անհիմն չէր. արդարև Հիսուսը և Իր աշակերտները պահեցողություն չէին անում: Սակայն մենք, ի պաշտպանություն նրանց, կարող ենք ասել, որ Հիսուսի և Նրա աշակերտների գրեթե ամբողջ կյանքը պահեցողություն էր: Ուրիշների ողորմությամբ ապրող և քաղաքից քաղաք կամ գյուղից գյուղ թափառող

մարդիկ էին. ի՛նչ ունեին կամ ի՛նչ էին ուտում, որ պահեցողությունն անեին: Իրենց անտխոթությունը հագեցնելու համար հաճախ արտերից ցորենի հասկեր էին պոկում և ավերի մեջ տրորելով՝ ուտում (Ղուկ. 9: 1): Սակայն Հիսուսը տարբեր անկյուններից է հարցին նայում և նրանց պատասխանում հետևյալ ձևով. «Մի՞թե կարող եք հարսանքավորներին հրամայել, որ ծոմ պահեն, որքան ժամանակ որ փեսան արանց հետ է: Կգան օրեր, երբ փեսան արանցից կվերցվի, ապա այդ օրերին ծոմ կպահեն» (Ղուկ. Ե 34-35): Ուրեմն Հիսուսը նախատեսում և անուղղակի թեղադրում է, որ արդարև իր հետևորդները իր մահից հետո պահեցողություն կանեն:

Եվ արդարև, տեսնում ենք, որ Եկեղեցին Քրիստոսի համբարձումից հետո կիրարկում է պահեցողության սկզբունքը, առանց, սակայն, այն հատուկ օրենքի վերածելու կամ ուրոշ օրերի ու շրջանների հետ կապելու: Պահքը տակավին բնական և ինքնաբերական մի սովորույթ է, որը որևէ անհատ կամ խումբ կատարում է, երբ դրա պետքը զգում է: Ըստ այսմ, առաջին քրիստոնեական քարոզչական պաշտոնական ձեռնարկն սկսվում է պահքով և աղոթքով: Անտիոքում, որը Երուսաղեմից հե-

տո դարձավ քրիստոնեական երկրորդ մեծ կենտրոնը, կային մարդիկ, ովքեր կոչվում էին «մարգարեներ և վարդապետներ»: Երբ նրանք «Տիրոջ պաշտամունքի մեջ էին և ծոմ էին պահում, Սուրբ Հոգին ասաց արանց. «Բառնաբասին և Սողոսին առանձնացրե՛ք Ինձ համար, որ անեն այն գործը, որին Ես դրանց կոչել եմ»: Այն ժամանակ ծոմ պահելով և աղոթելով՝ ձեռք դրեցին արանց վրա և ուղարկեցին» (Գործք. ԺԳ 2-3): Գրեթե նույնը Պողոսը և Բառնաբասն արեցին, երբ, իրենց կարգին, նորակազմ քրիստոնյա համայնքների համար «երեցներ ձեռնադրեցին, պահեցողությամբ համդերձ աղոթք արեցին և արանց հանձնեցին Տիրոջը, Որին հավատացել էին» (Գործք. ԺԳ 22): Պողոս առաքյալը, երբ հարկադրվում է հիշել իր «վաստակները», հաստատում է, որ հաճախ ենթարկվել է նաև «քաղցի և ծարավի, առանց մի պատառ հացի» (հմմտ. Բ Կորնթ. 9: 5, Բ Կորնթ. ԺԱ 27):

Աստվածաշնչի թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարաններից մեզ ավանդված հրահանգների և տրված օրինակների այս լույսի տակ մեզ համար անհասկանալի է մնացել, թե ինչպե՞ս կարող են պահքի օրերը անտեսել կամ բացահայտորեն նրա դեմ պայքարել հատկապես այն քրիստոնյաները, ովքեր իրենց հավատքի

և գործի ամբողջ շենքը ցանկանում են կառուցել լոկ Աստվածաշնչի տվյալների վրա:

Մասնավորաբար Մեծ պահքի մասին

Իբրև պահեցողության քառասնօրյա շրջան, Մեծ պահքը որպես հիմք ունի մեր Փրկչի՝ վերևում հիշված 40 օրերի ծոմապահությանն անապատում: Եվ որովհետև մարդկային սովորական բնությունը գրեթե անկարող է սոկալ 40 օրերի՝ ցերեկ և գիշեր միանվագ ծոմապահությանը, ուստի եկեղեցին տնօրինել է կատարել 40 օրերի պահեցողություն՝ օրական միայն մեկ անգամ ուտելով: Սա կոչվել է Մեծ պահք, ի հակադրություն մյուս պահքերի, որոնք շաբաթական հինգ կամ երկու օր էին: Մեծ պահքի գլխավոր նպատակը հավատացյալին նախապատրաստելն էր, որ Ավագ շաբաթվա ընթացքում արժանապես մոտենա ս. Հաղորդությանը և ավելի մեծ ուրախությունը տոնի ս. Զատիկը:

Գրգ դարից առաջ քրիստոնեական հին գրականության մեջ գրեթե ոչ մի հիշատակություն չկա քառասնօրյա պահեցողության որևէ շրջանի մասին՝ ուրբաթ օրերի պահքի

մասին բացահայտ հիշատակություն ունենալով հանդերձ: 2-րդ դարի վերջերին և 3-րդ դարի սկզբներին ապրող Տերտուղիանոս մատենագիրը հիշատակում է, որ Մոնտանական կոչվող, խիստ հոգևոր հակումներ ունեցող աղանդը, որին հարում էր նաև ինքը՝ Տերտուղիանոսը, Զատիկից առաջ երկու շաբաթ պահեցողություն էր անում, մինչդեռ ուղղափառ քրիստոնյաները Զատիկից առաջ մեկ, առավելը երկու օր էին պահք պահում: Ուրիշները նախքան Զատիկը 40 ժամ խիստ պահեցողություն անելու սովորություն են ունեցել:

«Քառասնօրյաց» բացատրությունն առջին անգամ հիշվում է Նիկիայի ժողովի (325 թ.) Ե կանոնում՝ հավանաբար ակնարկելով Մեծ պահքի 40 օրերի շրջանը, որից առաջ հարկավոր էր անցկացնել եպիսկոպոսական տարեկան երեք ժողովներից մեկը: Ալեքսանդրիայի հայրապետներից ս. Աթանասն է, որ 330-ական թվականներին իր հոտին բացահայտորեն թելադրում է նախքան Ավագ շաբաթը 40 օր պահեցողություն անել: Ըստ արդի բանասերների և կանոնագետների՝ Գրգ դարի երկրորդ կեսերին խմբագրված «Առաքելական կանոններ» կոչվող կանոնախմբի

Ճ-րդ հողվածում ասված է. «Առաքյալները տնօրինեցին, որ 40 օր պահք նշանակվի՝ հրաժարվելու համար ամեն չարությունից, մեղքից և կերակրից՝ անխառն Փրկչի չարչարանքների օրը, և ասպա կատարեն չարչարանքների օրը՝ Տիրոջ Պատեքը, և Փրկչի Հարության տոնը... Քանզի Նույն Ինքը՝ Տերը մեր Քրիստոս, տերը տոների և տարեկան հիշատակությունների, 40 օր և 40 գիշեր պահք պահեց» (Կանոնագիրք հայոց, էջ 32)*:

Առաջին չորս դարերի պահեցողության բնույթը կամ կերպերն էլ դեռ հստակ չեն: 5-րդ դարի հույն պատմիչներից Սոկրատես ասում է, որ Մեծ պահքի ընթացքում ոմանք հրաժարվում են բոլոր կենդանական մսերից, ուրիշները ձուկ են ուտում, ոմանք ձկանն ընկերակցում են նաև հավեղեն, կան, որ հրաժարվում են վերոհիշյալներից և հավկիթեղենից ու կարծր կեղև ունեցող պտուղներից՝ ընկույզ, նուշ և այլն, ոմանք էլ լոկ չոր հացով են զոհանում: Պահեցողության առօրյա տևողության մասին էլ հստակ գրեթե ոչինչ չկա հիշված: Ոմանք պահել են մինչև երեկոյան ժամը երեքը, որից հետո ամեն տեսակ կե-

* Կանոնագիրք հայոց, հտ. Ա, Սահմանք և կանոնք գոր եղին աշակերտքն Քրիստոսի Եկեղեցույ Սրբոյ յետ վերանալոյ Տեսում, Ը, Երևան, 1964, էջ 32-33:

րակուր թույլատրվել է ուտել, իսկ խստապահներն այն աստիճան են առաջ զնացել, որ շաբաթական մեկ կամ երկու անգամ են ճաշել: Ամենից սովորականը, սակայն, օրական մեկ անգամ ուտելն է եղել՝ լոկ մսից և գինուց հրաժարումով: Կաթնեղենի և հավկիթեղենի օրինական խիստ արգելք, ըստ երևույթին, տակավին չկար: 7-րդ դարի վերջերին և ճ-րդ դարի սկզբներին ապրած հայտնի անգլիացի պատմիչ Բիլդը հաստատում է, որ սուրբ նկատված մի եպիսկոպոս 7-րդ դարում Մեծ պահքի իր մեկ անգամվա ուտելու ընթացքում կերել է «մի քիչ հաց, մի հավկիթ, և ջրախառը փոքր-ինչ կաթ»: Մինչև իսկ 9-րդ դարում Արևմուտքում Մեծ պահքի ընթացքում հավկիթից, պանրից և ձկնից հրաժարվելը նկատվել է բացառիկ առաքինություն: Առաջին անգամ Հռոմի Գրիգոր Մեծ պապն է, որ 7-րդ դարի սկզբներին, գրելով Անգլիայի առաջին եպիսկոպոսին՝ Օգոստինոսին, ասում է, որ Մեծ պահքի ընթացքում «մենք հրաժարվում ենք մսից և կենդանական բոլոր արտադրություններից, այսինքն՝ կաթից, պանրից, հավկիթից և անանիսից»:

Սա էր վաղ միջնադարում համայն քրիստոնեությունը ընդհանուր օրենքը թե՛ Արևել-

քում, թե՛ Արևմուտքում: Սակայն աստիճանաբար Արևմտյան Եկեղեցում թույլտվություններ մտան նախ ձկնեղենի, կաթնեղենի ու հավկիթեղենի վերաբերյալ և ապա օրական գլխավոր ճաշին զուգահեռ առավոտյան ու երեկոյան ևս արտոնվեցին թեթև ուտելիքներ, մինչև Արևմտյան Եկեղեցուց ողջօրյա ծոմապահությունը գրեթե իսպառ վերացավ, և պահեցողության օրենքը լուրջ մսի համար մնաց: Այս օրենքն էլ մի քանի տարի առաջ Վատիկանի 2-րդ ժողովի բարեկարգական կանոններով գործնականապես գրեթե վերացավ կաթոլիկ եկեղեցուց:

Պահեցողությունն ընդհանրապես և մասնավորաբար Մեծ պահքը Արևելքում ավելի խիստ են եղել: Արևելյան եկեղեցիներում երկար դարեր պահվեց սկզբնական սովորությունը, այսինքն՝ օրական մեկ անգամ միայն ուտելու և բոլոր մսեղեններից ու կենդանական արտադրություններից հրաժարվելու կանոնը: Ի վերջո, սակայն, աստիճանաբար, Արևմուտքին հետևելով, թույլտվություններն Արևելք էլ մուտք գործեցին. նախ արտոնվեցին օրական մեկ անգամից ավելի ճաշերը և ապա՝ Մեծ պահքի շաբաթ ու կիրակի օրերին բացի մսե-

ղենից ամեն տեսակ կերակուրներ ուտելը: Սակայն գեղջկական շրջանակները շարունակեցին, և որոշ տեղեր մինչև օրս շարունակում են հնագույն կանոնը՝ օրական մեկ անգամ ուտել՝ միանգամայն հրաժարվելով կենդանական ամեն տեսակ արտադրություններից:

Հայաստանյայց Եկեղեցու օրացույցում տարվա մեջ ունենք պահքի 158 օրեր, որոնցից 40-ը զուտ Մեծ պահքին են*, մնացածի ճիշտ կեսը՝ 59 օր, կազմում է տասնմեկ շաբաթապահքերը, և մյուս կեսը չորեքշաբթի և ուրբաթ օրերի պահքերն են, որոնք վերոհիշյալներից դուրս են մնում:

Պահքի նպատակը

Ինչո՞ւ ենք պահք պահում. կարևոր մի հարց, որին տրված պատասխանից կախում ունեն մեր պահեցողության կրոնական արժեքը և իմաստ ունենալ կամ չունենալը: Հարցին պատասխանելը դյուրացնելու համար ցանկանում ենք հաստատել, որ շատ սերտ

* Իրականում 40 օր է միայն Բուն Բարեկենդանից՝ Մեծ պահքի առաջին կիրակիից, մինչև Ավագ շաբաթվա սկիզբը: Այլապես, Ավագ շաբաթն էլ ներառյալ, Մեծ պահքը 48 օր է: Այստեղ հեղինակը թերևս Ավագ շաբաթը Մեծ պահքից առանձին մի շաբաթապահք է դիտում:

զուգահեռ կա հիվանդություն համար սահմանված ռեժիմի (սնուցակարգ) կամ դիետայի և կրոնական պահանջություն միջև՝ թե՛ նպատակի և թե՛ մեթոդի տեսակետից: Երկուսի վրա գցված բաղադրատարր մի ակնարկն ավելի կհստակեցնի պահանջի դերը և նպատակը: Ինչ հիվանդությունն է մարմնի համար, նույնը մեղքն է հոգու համար: Կարող ենք մինչև իսկ ասել՝ մեղքը հոգու հիվանդությունն է, և հիվանդությունը մարմնի մեղքն է: Հիվանդությունը մարմնի ֆիզիկական ներդաշնակ գործունեությունը խանգարող գործոն է, իսկ մեղքը՝ հոգեկան կյանքի մեխանիզմին:

Հայտնի է, որ բժիշկները հիվանդին կա՛մ դեղը, կա՛մ պահանջությունը, կա՛մ երկուսը միանգամից են հանձնարարում: Որոշ հիվանդություններ առանց պահանջություն չեն բուժվում, օրինակ՝ խոցը, շաքարախտը և նմանները:

Նույնն է հանգամանքը մեղքերի դեպքում: Մեղքերի կարևոր տոկոսը ցանկությունների սանձարձակ գործունեություն արդյունք է: Իրենց բնական չափի և սահմանի մեջ ցանկություններն աստվածազիր ուժեր են՝ մարմնի կենսական գործունեությունը դյուրացնե-

լու համար: Ուտելու կենսական գործողություն հետ կապված՝ ախորժակը մարդուն պարտադրում է ուտել՝ մարմինն առողջ և կենսունակ պահելու համար: Սերնդագործելու կենսական գործողության հետ առնչված ցանկությունը մարդուն պարտադրում է կյանքը տևականացնել երկրի վրա: Սակայն միանգամայն հայտնի է, որ ցանկություններն առհասարակ իրենց չափի և սահմանի մեջ չեն մնում, դառնում են իսկական բռնակալներ, և մարմինը, փոխանակ մեր կամքի և բանականության կողմից կառավարվելու, դառնում է ցանկությունների խաղալիք: Որկրամոլությունը, որն ուտելու ախորժակի սանձարձակությունն է, ոչ միայն ֆիզիկական ու բարոյական բազում ախտերի մայրն է, այլ նաև պատճառ՝ կյանքի այլասերման:

Հեշտախտը և այլ սեռային ստահակություններ, որոնք սերնդագործման աստվածազիր օրենքի անսանձ գործունեություններն են, մեզ ծանոթ է, թե ինչ ավերներ են գործում անհատի և ընկերության ներսում:

Զգացական այս ուժերն առանց պահանջություն դժվար է իրենց բնական չափի և սահմանի մեջ պահել: Ուստի պահքը կարևոր

դեր ունի ցանկությունների բռնակալության առաջն առնելու տեսակետից: Սա է իմաստը Պողոս առաքյալի՝ գաղատացիներին ուղղած այս խոսքի. «Բայց ասում եմ ձեզ, Հոգո՛ւ ընթացե՛ք և մարմնի ցանկությունը մի՛ կատարեք, քանի որ մարմնը հոգու հակառակն է ցանկանում, իսկ հոգին՝ մարմնի հակառակը» (Գաղ. Ե 17):

Պահքի նպատակը, ուրեմն, հոգու կյանքը զորացնելն է՝ տկարացնելով զգացական հաճույքների քաշող ուժը:

Ինչպես ականարկեցինք, պահեցողության գերագույն նպատակն ապաշխարանքն է, այսինքն՝ մեղքից և հոգեկան ծուլությունից ազատագրվելու ճիգ է, այդ իսկ պատճառով ունի ինքն իրեն տրված պատժի հանգամանք: Ապաշխարանքի էությունը մեղքի պատճառով զգացած ցավը, զղջումը և մտահոգությունն են այն պարզ պատճառով, որ մեղքն անհատի և ընկերություն մեծագույն չարիքն է և մեզ Աստծուց բաժանող միակ պատճառը, աստվածային ու մարդկային մի շարք թանկագին շնորհներից ու ուժերից մեզ պարպող միակ ազդակը: Արդ, մեղքի հետևանքով զգացած ներքին ցավի արտաքին արտահայտություններից գլխավորը պահե-

ցողությունն է, որը մեղավորին պատժի ենթարկելու և մեղքի ավերների առաջն առնելու արարք է:

Որոշ հիվանդություններ մահացու են, այսինքն՝ եթե իրենց սկզբնական շրջանում չդարմանվեն, վաղահաս մահվան պատճառ կլինեն. օրինակ՝ քաղցկեղը, թոքախտը, սրտի և այլ կենսական օրգանների հետ կապված տկարությունները:

«Մահացու» կոչված մեղքեր էլ կան. օրինակ՝ ամբարտավանությունը, չար նախանձը, ջղազար բարկությունը, անսահման ազահությունը և սրանց տարատեսակները: Սրանք մահացու են, որովհետև մարդու մեջ մեռցնում են բարոյական գիտակցությունը, մարդկային արժանապատվությունը և, ի վերջո, այլասերում մարդու նկարագիրն ու բնությունը: Երբ մարդը զրկվում է բարոյական արժեքներից, դադարում է բառի իսկական իմաստով մարդ լինելուց: Արդարև, այս երկոտանի, ուղղաբերձ «մերկ կապիկը» մարդ դարձնողը, այսինքն՝ կենդանական աշխարհի մյուս տեսակներից զանազանողը, ոչ այնքան նրա Ֆիզիկական տարբերություններն են, որքան բարոյական գիտակցությունը, խիղճը,

Աստծուն ճանաչելու և Նրան ղիմելու կարողությունը: Այս և մարդկային ուրիշ ազնիվ հատկություններ էլ վերոհիշյալ մահացու մեղքերից կտուժեն, կայլասերվեն, մինչև իսկ իսպառ կփչանան, եթե դրանց առաջը չառնվի: Եվ պահքը մեծապես նպաստում է այլասերիչ այս հակումների առաջն առնելուն, ինչպես նաև մարդուն հատուկ վերոհիշյալ կարողությունները պահպանելուն:

Պետք է անդրադառնալ նաև, որ Ֆիզիկական հիվանդությունների պարագայում սնուցակարգը կամ դիետան չէ, որ ախտը բուժում են: Բուժողը մարմնի բնական ուժերն են, արյունը, ավիչը և նրանցում պարունակվող կենսական տարրերը: Բժշկի հանձնարարած պահեցողությունը կամ դեղը միայն դյուրացնում են մարմնի բուժիչ ուժերի գործը՝ արգելք հանդիսանալով, որ հիվանդությունն ավելի չխորանա:

Նույնը կրոնական պահեցողության պարագայում է: Պահեցողությունը չէ, որ մեղքը քափում է: Աստված է քավիչը: Սակայն պահեցողությունը կարևոր մի օժանդակություն է քավչարար այս սրբագործության մեջ: Զղջումը, աղոթքը, ապաշխարանքը, որոնք

պահեցողությունից անբաժան պետք է լինեն, այն հիմնական պայմաններն են ստեղծում, որտեղ Աստծո բուժիչ և քավիչ գորությունն է գործում: Ս. Օգոստինոս Ափրիկեցին՝ ասել է. «Պահեցողությունը մաքրում է հոգին, բարձրացնում միտքը, չափի և հակակշռի ներքևում պահում կրքերը, ցրում է ցանկության ամպերը, մարում սեռական կրակը, արծարծում է ժուժկալությունը և վառում ճշմարտության լույսը»:

Արդարև, անկեղծ և առողջ պահեցողության մեջ քրիստոնյան կարող է գտնել ազդու միջոցներից մեկը՝ վերատիրանալու այն բարոյական կորուստներին, որոնց ենթարկվել է չափազանց արձակ ապրելակերպով: Վերաշահում է այն շնորհները, որոնցից զրկված էր իր մեղքերի պատճառով:

Գրվածքիս իբրև բնաբան ծառայող խոսքը, որն ասվել է մեզնից գրեթե 2500 տարիներ առաջ, Հովել մարգարեի բերանով, իր մեջ խտացնում է պահքի էությունը: Մշտնջենա-

* Օգոստինոս Ավրելիոս (354-430 թթ.): Կաթոլիկ և Օրթոդոքս Եկեղեցիների կողմից կանոնացված սուրբ, աստվածաբան հայր: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կողմից պաշտոնապես սուրբ չի հռչակված, սակայն նրա անունն ու գործերը մեզանում ևս լայն տարածում են գտել:

կան մի թելադրանք է, որն ուղղված է բոլոր դարերի բոլոր սերունդներին, որոնք Աստծուց հեռացած լինելու դժբախտությունն են ենթարկված: Ժամանակակից մարդկությունը գերազանցել է նախորդ սերունդներին ոչ միայն իր թվով ու տեխնիկական առաջադիմությունամբ, այլ նաև ամբարշտությունամբ և Աստծուց հեռացած լինելու անչափելի ծավալով: Դեպի ստույգ և անխուսափելի կորուստ առաջնորդող այս ճանապարհից ազատվելու միակ միջոցը «պահքով և լալով», այսինքն՝ ապաշխարանքով ու աղոթքով, «ամբողջ սրտով» ետ՝ առ Աստված դառնալն է:

Կրոնական պահեցողությունն ունի նաև անուղղակի բարիքներ, որոնք ոմանք տգիտաբար նկատում են որպես պահքի նպատակ: Յորենի հետ անպատճառ նաև հարգ է արտադրվում, որը բոլորովին էլ դեն նետվելիք բան չէ, անասուններին իբրև կեր է ծառայում: Բայց ոչ ոք ցորեն չի մշակում հարգ ստանալու համար: Ծիրանի հետ կա նաև նրա կորիզը, որը նույնպես անպետք բան չէ, սակայն ոչ ոք ծիրանի ծառ չի տնկում կորիզի համար: Պահքի անուղղակի բարիքներից են, օրինակ, ֆիզիկական օգտակարությունը՝ հատկապես

մեր ժամանակներում, երբ մարդիկ պետք եղածից ավելի են ուտում, և մարմինն իրեն անհրաժեշտ եղածից ավելի է նյութեր ստանում, որոնք ճարպի ձևով գետեղում է իր զանազան մասերում՝ իզուր ծանրացնելով իրեն և դժվարացնելով սրտի աշխատանքը: Չևականին հակադրված իսկական պահեցողությունը նպաստում է մարմնի ճարպերը հալեցնելուն և սրտի աշխատանքը թեթևացնելուն: Սակայն երբ պահեցողությունը նիհարելու և առողջությունը վերագտնելու նպատակով է արվում, որքան էլ օգտակար լինի, դադարում է կրոնական արժեք ունենալուց:

Պահքի անուղղակի ուրիշ բարիքներից մեկն է ԿԱՄՔԻ ԶՈՐԱՑՈՒՄԸ: Մեր հոգևոր և բարոյական կենցաղում կամքը կենսական դեր ունի: Երբ օրենքի պարտադրանքով կամ մեր ցանկությունամբ պահեցողություն ենք առնում, մեր կամքն աստիճանաբար զորանում է, որովհետև պահեցողությունը հաճելի չէ մեր ֆիզիկական դյուրակեցությունը, որով մարմնական հակումների վրա դրված պարտադրանքը նպաստում է, որ բարոյական կամեցողությունը զորանա՝ ի վերջո դառնալու համար ուժի շտեմարան, որի օգնությամբ ենք

դիմելու ամեն անգամ, երբ բարոյական օրենքներին կամ մեր խղճմտանքին հակառակ արարքների փորձույթյանը ենթարկվենք: Կամեցողության զորացմամբ մենք մեր ունեցած խելքը և ժամանակն ավելի արդյունավոր կերպով կարող ենք գործածել: Թե կամքի պակասի հետևանքով ինչ ահավոր չափերի հասնող վատնումներ ենք ունենում՝ քչերին է հայտնի: Սակայն այստեղ ևս կրկնում ենք. միայն կամքի զորացման համար կատարված պահեցողությունը կամ նման այլ վարժանքներն ու մարզանքները զուրկ են մնում զուտ կրոնական արժեքից՝ ինքնըստինքյան օգտակար ու հանձնարարելի լինելով հանդերձ:

Մեր ներկա պահեցողությունը

Ներկայիս մեր սովորական պահեցողությունը մսից և կենդանական արտադրություններից պարզապես հրաժարվելն է: Ընդունելի է, որ սա էլ ոմանց համար կարևոր մի զրկանք և, հետևաբար, ապաշխարանք է, սակայն մյուս կողմից՝ քանի որ մարդն արտոնված է որևէ ժամանակ և ցանկացած քանա-

կությամբ, բացի վերոհիշյալներից, գրեթե ամեն բան ուտելու, պահքը կորցնում է իր ազդեցողությունը: Երբ գինին էլ է արտոնվում՝ կենդանական արտադրություն չլինելու պատճառով, պահեցողությունը գրեթե չեղվում է իր նպատակից:

Այսօր հազարավոր մարդիկ կան, ովքեր բուսակեր են, այսինքն՝ նրանց առօրյա սովորական ուտելիքները մեր «պահոց» կոչված կերակուրներից տարբեր չեն, սակայն նրանք երբեք չեն հավակնում հայտարարելու, որ բանջարեղեն, ընդեղեն և պտղեղեն ուտելով՝ բառի կրոնական իմաստով պահեցողություն են անում. սա նրանց սնվելու սովորական կերպն է: Արդ, պահքի սկզբունքին, ոգուն և տառին հակառակ է ցանկացած ժամանակ և ցանկացած քանակությամբ ուտելը՝ ճոխացրած «պահոց» կոչվող անուշեղեններով ու համադամներով: Պահեցողությունը կերակրի տեսակի հարց չէ. պահք պահելը «թայինով ապուր» կամ ուսպով «չորբա», կամ «յահնիներ» ու «յալանջի ղոլմաներ»* ուտելու մեջ չէ:

Բացի սրանից, կյանքն այսօր այնպես է դա-

* Պահոց կերակուրներ, որոնք գործածական են պոլսախալ հասակներում:

սավորվել, որ միշտ չէ, երբ հնարավոր է «պահոց» կոչվող կերակուրներ գտնել, օրինակ, հասարակաց ճաշարաններում: Եվ ամեն մարդ չէ, որ միջոց ունի ինքը պատրաստելու իր պահոց կերակուրները: Կաթոլիկ պահեցողությունը, որ ավելի կերակուրի տեսակի հարց էր, քան քանակի, այս իսկ պատճառով այսօր գործնականում գրեթե բոլորովին վերացվել է, և պահվում է միայն Ավագ ուրբաթի պահոցը: Այնպես որ, այսօր անգամ ցանկացողները դժվարությունների են հանդիպում մեր սովորական կիրարկությունը պահքը պահելու մեջ: Ուրեմն ի՞նչ պետք է անել: Պահեցողությունից իսպառ հրաժարվե՞լ, ինչպես բողոքականներն արեցին: Չենք կարծում: Այս մասին մեր Տիրոջ օրինակը և ուսուցումը բացահայտ են: Հիսուսն ասաց, որ աշխարհից իր հեռանալուց հետո իր հետևորդներն էլ պահեցողություն կանեն (Մատթ. Թ 15, Մարկ. Բ 20, Ղուկ. Ե 35): Նրանք, ովքեր կարող են պահքի ներկա սովորական ձևը կիրարկել ու նրա մեջ հոգեկան ազնիվ գոհացում գտնել և ոչ թե ինքնախաբեություն, թող այն շարունակեն: Աստված ընդունելի անի նրանց այդ կերպ պահեցողությունը: Իսկ նրանք, ովքեր գործնական

նում չեն կարող այն կիրարկել կամ դրանից հոգևոր շինություն և օգուտ չեն կարող քաղել, բայց մյուս կողմից անպատճառ ցանկանում են մի կերպ պահեցողություն անել, այդպիսիներին հետևյալ թելադրանքներն են տրվում՝ ընտրելու համար դրանցից մեկը կամ մյուսը:

1. Օրական մեկ անգամ միայն ուտելով՝ վերակենդանացնել հնագույն սովորությունը, առանց նկատի առնելու կերակրի տեսակը և առանց ճաշը համադամներով չափազանցնելու: Այս կերպը զորավոր մի զրկանք է շատերի համար, ովքեր վարժված են օրական երեք անգամից բացի ուտելու նաև ցանկացած ժամանակ:

2. Նրանք, ովքեր Ֆիզիկական լուրջ պատճառներով և իրենց գործի բերումով չեն կարող գործադրության դնել 24 ժամվա մեջ մեկ անգամ միայն ուտելու հնագույն կանոնը, կարող են երկու կամ առավելը երեք անգամ ուտել՝ հրաժարվելով հատկապես այնպիսի ուտելիքներից, որոնք չափազանց սիրում են: Հրաժարվել մասնավորաբար շաքարեղեններից, շոկոլադեից և քիմքը գրգռող անուշեղեններից:

3. Պահճի շրջանում իսպառ հրաժարվել ու գելից ըմպելիքների և անուշեղենի գործածությունից՝ մյուս կերակուրներից ցանկացած ժամանակ չափավոր ուտելով հանդերձ:

Որևէ ձևով պահեցողություն անելու ժամանակ անհրաժեշտ է հրաժարվել կինո և թատրոն հաճախելուց: Հրաժարվել պարահանդեսներից: Հրաժարվել ամեն տեսակ հաճույքի վայրերից: Հրաժարվել հեռուստացույցով ժամանցի համար պատրաստված հաղորդումներ կամ ֆիլմեր դիտելուց՝ մյուս բոլոր բաներով հանդերձ:

Նրանք, ովքեր ի վիճակի չեն կերակրի պահեցողություն անելու կամ հոգեկան որևէ շահ չեն գտնում դրանց մեջ, նրանց համար հանձնարարվում են հետևյալ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՀԵՑՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

1. Հրաժարվել մոլեկան սովորություններից: Անշուշտ, մոլություններից հրաժարվելու համար պետք է սպասել Մեծ պահքին, քանզի նրանցից ազատվելու ճիգ անելը յուրաքանչյուր մարդու բոլոր ժամանակների պարտքն է: Մոլությունները, բացի մեր քսակին վնասելուց, խանգարում են նաև մեր հոգու և մտքի հավասարակշռությանը: Ծնող-

ների մոլությունները խորտակում են անմեղ և խոստումնալից զավակների ապագան: Կործանում են անթիվ ընտանիքներ: Ծանր մոլություններով վարակվածները՝ թմրեցուցիչներին և անբնական սեռական ախորժակներին գերի դարձածները, դժբախտաբար, արդեն իսկ պահեցողության մասին մտածելու ի վիճակի չեն: Բայց նրանք, ովքեր պահեցողությանն արժեք ընծայելու չափ տեր են մնացել իրենց բանականությանը և հավատքին, բայց մյուս կողմից մոլի են թղթախաղի, ոգելից ըմպելիքի, ձիարշավի և այլ տեսակ «ղումարների», սրանց համար, Նոր տարվա որոշումներից ավելի (որոնք առհասարակ չեն պահվում), Մեծ պահքի քառասնօրյա շրջանը սքանչելի առիթ է այս մոլությունների դեմ Աստծո օրհնությանը և Եկեղեցու օժանդակությանը լրջորեն պայքարելու: Ծիսելուց կամ մյուս մոլություններից հրաժարվելու հետ կապված տանջանքն արդարև ինքնազրկանքի մի սքանչելի կերպ է: Այս տեսակ ապաշխարանքն ու պահեցողությունն ավելի ընդունելի են Աստծուն և օգտակար՝ մարդուն: Մեծ պահքի շրջանում խաղաթղթի սեղանի մոտ չնստելը կրոնական տեսակետից ավելի ար-

ժեք ունի, քան խնջույքի՝ մսեղենով սեղաններից հրաժարվելը: Եվ երբ այսպես 40 օրեր շարունակվի, մոլուխյան ենթական հավանաբար ամբողջ տարվա համար կբուժվի խաղաթղթի մոլուխյունից, և բարոյական պահեցողութունը, իսկական ապաշխարանք լինելուց բացի, գոնե այս կերպ գործնական նպատակի էլ ծառայած կլինի:

2. Հրաժարվել լեզվի հիվանդութուններից՝ շատախոսութունից, ստախոսութունից, հայհոյանքից և ամեն տեսակ լեզվագարութուններից, որոնք դեմ են մարդկային արժանապատվությանը և խոր խոցում են մեզ նմանների սիրտը: Հրաժարվել գանգատներից, տրտունջներից, դառն ու հուսահատ արտահայտություններից, որոնք մեռցնում են մեր հոգեկան կենսունակութունը և վնասակար մանրէի նման վարակում նաև ուրիշներին: Հրաժարվել գոռում-գոչյուններից, վիճաբանություններից, կռվազանություններից, որոնք խանգարում են մեր և մեր շուրջ եղողների խաղաղութունը: Չենք անդրադառնում ավելի ծանր և վտանգավոր հոգեվիճակներին՝ դառն ատելությունը, սև նախանձին, նենգություններին, դավադրություններին և

նման լուրջ ախտերին, որոնցից ազատվելու համար ենթական հարատև ու ավելի հետևողական ճիգերի և աստվածային մասնավոր օժանդակության է կարոտ:

3. Սրանք, սակայն, ժխտական թելադրանքներ են ժխտական հոգեվիճակներից ազատագրվելու համար: Ինչո՞ւ ճիգ չանել արժարձելու նաև դրական հոգեվիճակներ՝ կատարելով դրական գործեր, այսինքն՝ պահքի նպատակն իրագործել ավելի կարճ ու գործնական ճանապարհներով: Հետևաբար, բարոյական ապաշխարանքների կարգում կարող ենք հանձնարարել հատկապես բարիք գործելը: Ստույգ է, որ բարիք գործելը բոլոր ժամանակներում սիրո մեր պարտականությունն է և ոչ՝ ապաշխարանք, բայց նրանք, ովքեր տարվա մյուս օրերին թերացել են մարդկային այս հիմնական առաքինության մեջ, մասնավոր ճիգ պետք է անեն և գեթ Մեծ պահքի ընթացքում իրենց մասնավոր նյութական զոհողության ենթարկեն: Օգնել համայնքային հաստատություններին, կրթական, կրոնական ու բարեսիրական նպատակների, օգնել նույնիսկ երբ մեզնից չեն խնդրում, օգնել պարզապես Մեծ պահքի ոգուն հավատարիմ լինելու համար:

Օժանդակել աղքատ ու հաշմանդամ մարդկանց՝ նրանց դրամական պարտքերը թեթևացնելով, օգտակար լինել մեզ նմանների հազարումի կարիքներին: Ինքն իրեն հարկադրելով՝ օրական որոշ գումար մի կողմ դնել, զրկելով քիմքը և քմահաճույքները՝ դրամը բարի նպատակների հատկացնելու համար:

4. Նյութական օժանդակություններին գուգահեռ կամ եթե ի վիճակի չենք նյութական օգնություն ցույց տալու, կարող ենք ժամանակ տրամադրել ազնիվ նպատակներին՝ ծառայություն մեր բաժինը բերելով՝ ուր դրա պահանջը կա: Այցելել հիվանդներին և բանտարկյալներին: Այցելել որբանոցներ և ծերանոցներ: Այցելել տանը մենակ մնացած հոգիներին: Մոտենալ սուգ ու ցավ ունեցողներին և նրանց տրամադրությունը բարձրացնել՝ համեստ, անկեղծ ու մարդկային զրույցով բաժանելով նրանց սուգը և ցավը:

Մանավանդ Մեծ պահքի ընթացքում բոլոր մարդկանց հանդեպ լցված լինել բարյացակամությունամբ, փողոցում՝ փափկանկատությունամբ, փոխադրական միջոցների մեջ՝ մյուսներին տեղ զիջելով, և դեռ բազմաթիվ այլ կերպերով արտահայտել մեր բարյացակամու-

թյունը յուրաքանչյուր մարդու հանդեպ՝ հաճախ մեր փոքր առավելություններից ու իրավունքներից մեզ զրկելով և միշտ մեր եսասեր տրամադրությունները մասնավոր ճիգով զոհելով:

Երբ սրանք առանց հավակնություն կատարվեն, մենք այն համոզումն ունենք, թե ավելի՛ կծառայեն պահեցողության ոգուն և նպատակին, միաժամանակ զուգահեռ կընթանան մեր ժամանակների գործնական մտածողությունը, ինչպես և առողջ ու դրական այնպիսի կրոնի, որպիսին քրիստոնեությունն է, հիմնական սկզբունքներին ու պահանջներին:

Պահքի մասին մեր այս ընդհանուր խորհրդածությունները ցանկանում ենք իրենց եզրակացությունը բերել ու կնքել Եսայի մարգարեի գրքից սքանչելի մի հատվածով, ուր Աստված մարգարեի բերանով հայտնում է, թե ինչպիսին է Իր ցանկացած պահքը:

Այս հատվածում նախ Աստծո ժողովուրդն է, որը գանգատի ձևով հարց է տալիս Աստծուն.

- Այդ ինչպե՞ս է, որ մենք ծոմ պահեցինք, և Դու չտեսար, զրկանքների ենթարկեցինք մեզ, և Դու չիմացար:

Աստված պատասխանում է.

- Որովհետև ձեր պահքի օրերին ձեր ցանկություններն եք կատարում և կսկիծ պատճառում բոլոր նրանց, ովքեր ենթակա են ձեզ:

Հակառակության և կոիվների մեջ եք պահում և բռնաքահարում տկարին:

Իսկ Իմ ինչի՞ն է պետք այդպիսի պահքի օրը, դուք պիտի գաք բողոքեք Ինձ, և Ես չպիտի լսեմ ձեզ:

Այդպիսի՜ պահքը չէ, որ Ես ընտրեցի, և ոչ էլ այնպիսի օրը, երբ մարդն իր անձն է տանջում: Եթե պարանոցդ կորացնես օղակի մման ու տակդ քուրձ ու մոխիր տարածես, այդ էլ, սակայն, չեմ համարի պահք և ընդունելի օր. այդպիսի՜ պահքը չէ, որ Ես ընտրեցի, - ասում է Տերը: -

Քանդի՛ր անիրավության հանգույցը,

խորտակի՛ր քո վաճառակամակամ խարդախությունն ու բռնությունը,

ների՛ր ու արձակի՛ր գեղյալներից

և պատռի՛ր բոլոր անիրավ մուրհակները:

Քաղցածների՛ն բաժանիր քո հացը

և անօթևան աղքատների՛ն տար քո տունը.

եթե մերկ մարդ տեսնես՝ հագցրո՛ւ նրան,

բաց քո ընտանիքի զավակին մի՛ անտեսիր:

Այն ժամանակ այգաբացի պես պիտի ծավալվի քո լույսը,

և արագորեն պիտի հասնի քո ապաքինումը,

քո առջևից պիտի ընթանա քո արդարությունը,

և Աստուծու փառքը պիտի պահպանի քեզ:

Այն ժամանակ պիտի կանչես,

և Աստված պիտի լսի քեզ.

մինչև դու խոսես, Նա պիտի ասի, թե՛ «Ահա հասել եմ»:

Եթե դու քո միջից հեռացնես խարդախությունը,

ձեռնձգությունն ու տրտունջի խոսքերը,

քո հացը հոժար սրտով քաղցածներից տաս

և չքավոր մարդկանց կշտացնես,

այն ժամանակ խավարի մեջ կծագի քո լույսը,

քո խավարը կվերածվի միջօրեի:

Քո Աստվածը ամեն ժամ քեզ հետ կլի՛նի,

քո անձն ըստ ցանկության հագեցում կստանա,

և քո ոսկորները կլի՛անան ու կլի՛նեն ինչպես ջրարբի

պարտեզ,

ինչպես աղբյուր, որից ջուրը չի պակասի:

(Հմտ. Եսայի ԾԸ 3-11)



Ա. Բարեկենդանի կիրակի
[Ծննդ. Բ]

ԳԼՈՒԽ Բ

Երջանկություն

Մարդկային կորած, բայց անկողոպտելի
ժառանգությունը

*«Յորում ցնծայր զուարճացեալ
Անտիարական խնդրութեամբ» (Ծարական):*

Հատկանշական է, որ Մեծ պահքը, ապաշխարանքի և ինքնազրկանքի այդ շրջանը, սկսվում է երջանկության գաղափարին ընծայված մի հիշատակութամբ: Եվ սա՝ պարզապես հիշեցնելու համար, որ մարդը երջանիկ է ծնվել և, ի վերջո, սահմանված է երջանիկ ճակատագրի համար: Մեծ պահքը հիշեցնում է, թե մարդն ինչո՞ւ և ինչպե՞ս է կորցրել այդ հոգեվիճակը և ապա մի առ մի մատնանշում նրան վերատիրանալու կերպերն ու միջոցները:

Ըստ Հայաստանյայց Եկեղեցու, պահքի բոլոր շաբաթների կամ շրջանների նախընթաց

օրը, միակ բացառությունը Մենդյան պահքի, միշտ կիրակի է լինում և կոչվում բարեկեդրան: Ըստ այսմ, Մեծ պահքի նախընթաց օրն էլ կոչվում է Մեծ կամ Բուն բարեկեդրան:

Բարեկեդրան, ավելի ճիշտ՝ բարեկենդանություն, նշանակում է բարի կյանք, այսինքն՝ ուրախ, զվարթ և շեն ապրել, բոլորիս ծանոթ սովորական բացատրությունը՝ երջանիկ լինել: Երբ միմյանց հետ երջանկության բաժակ ենք պարպում, ասում ենք՝ «բարեկենդանություն»: Այս իմաստով Բարեկենդանը հակադիրը, ավելի ճիշտ՝ նպատակն է Մեծ պահքի:

Բուն Բարեկենդանը թեև Մեծ պահքի հաշվեհամարում չկա, բայց, ըստ օրացույցի, կազմում է նրա վեց կիրակիներից առաջինը՝ իբրև «Ա քառասնորդաց», այսինքն՝ քառասուն օրերի շրջանի առաջին կիրակի:

Բարեկենդանը միաժամանակ հիշատակն է մարդկային առաջին երջանկության, որը մեզ պատկերանում է Աստվածաշնչի առաջին էջերում՝ Ադամի և Եվայի «զրախտային» կյանքով: Այս իրողությունը թեև չի նշված օրացույցում, բայց հաստատվում է օրվա շարականներում: Պետք է գիտենալ, որ հաճախ շարականներն օրվա տոնի իմաստի նկարագր

րի ավելի ճիշտ ցուցանիչներ են, քան տոնի օրացուցային անունը: Ահավասիկ Բարեկենդանի օրվա «Օրհնություն» կոչվող հատուկ շարականի առաջին երկու տները.

Բանն որ ընդ Հօր յէութեան,
Եւ համագոյ Սուրբ Հոգւոյն,
Զպատկերն իրական խառնեալ
Ընդ հողանիւթ բնութեանս,
Զոր զարդարեալ փառօք
Եղ ի դրախտին փափկութեան:
Յորում ցնծայր զուարճացեալ
Անխրական խնդութեամբ,
Քանզի զԱստուած տեսանէր
Միշտ խոնարհեալ ի դրախտին,
Յորմէ զլուսոյն ճառագայթ
Տպաորէր ի յինքեան:

Թարգմանություն.

Բանը*, որ Հոր հետ մույնն է էությանը,
Եվ Սուրբ Հոգու հետ՝ գոյությամբ,
Իր պատկերը խառնեց մեր հողանիւթ բնությանը
Եվ այն, փառքով զարդարած,
Եղեմական դրախտի մեջ դրեց:
Այնտեղ հրճվալից ցնծում էր
Տխրություն չճանաչող ուրախությամբ,

* Բանը, բանականություն բառի արմատը, Ավետարանի - աստվածաբանության մեջ գործածվում է Քրիստոսի համար՝ իբր- «Բան Աստուած» կամ «Բան Աստուծոյ»: Բոլորիս ծանոթ է Հովհաննեսի Ավետարանի աստվածաբանական նախերգանքը. «Ի սկզբանէ էր Բան, - Բան էր առ Աստուած. - Աստուած էր Բան» (հեղ.):

Քանզի միշտ տեսնում էր Աստծուն,
Ով իր վեճ բարձունքից իջնում էր դրախտ,
Ումից ճառագայթող լույսը
Թափանցում էր նրա Անձը:

Իսկ Աստվածաշնչում մեր նախածնողների «դրախտային» կյանքը նկարագրված է հետևյալ պարզագույն բառերով. «Աստված դրախտ տնկեց Եդեմում՝ արևելյան կողմը, և այնտեղ դրեց իր ստեղծած մարդուն: Տեր Աստված երկրից բուսցրեց նաև ամեն տեսակի գեղեցկատեսիլ ու համեղ մրգեր տվող ծառեր, դրախտի կենտրոնում՝ կենաց ծառը և տնկեց նաև բարու ու չարի գիտություն ծառը: Գետ էր բխում Եդեմից, որպեսզի ոռոգեր դրախտը... Տեր Աստված իր ստեղծած մարդուն տեղավորեց բերկրության դրախտում, որպեսզի սա մշակի ու պահպանի այն... Ադամն ու իր կինը մերկ էին ու չէին ամաչում (Ռմմտ. ԾԱԱԳ. Բ գլուխ):

Ինչպես երևում է, թե՛ Աստվածաշնչի և թե՛ վերոհիշյալ շարականի հատվածներում «երջանկություն» և «երջանիկ» բառերը չեն գործածված, բայց առկա է գոհունակ և զվարթ այն հոգեվիճակը, որը սովոր ենք արտահայտել այդ բառերով:

Ի՞նչ է երջանկությունը

Եթե այս հարցը տանք, կստանանք այնքան այլազան պատասխաններ, որքան մարդկանց այդ հարցը տվել ենք: Այս պատասխաններն էլ երբեմն իրարից հակասական են լինում: Ինչը երջանկություն է նկատվում մեկի համար, մյուսի համար դժբախտություն է: Մեկն իր երջանկությունը որոնում է խաղամոլության, հաշիշամոլության և սպառող ու այլասերող այլ հաճույքների մեջ, ուրիշ մեկի համար նման կյանքն անդարմանելի դժբախտություն է: Մեկի համար երջանկությունն աշխատանքի մեջ է, և չի կարող ըմբռնել, թե ուրիշներն ինչպես կարող են երջանկություն գտնել ծուլության ու անգործության մեջ: Ըստ մեր կարծիքի՝ երջանկության լավագույն սահմանումը տալիս են մանուկները՝ եթե ոչ խոսքով, գեթ գործերով: Մանուկը բնականից երջանիկ է, եթե կուշտ է և զբաղմունք, այսինքն՝ խաղալիք, ունի ու որևէ ցավ չունի: Սրանում բոլոր մանուկները գրեթե միաձայն են (անշուշտ, խոսքը հոգեպես առողջ, նորմալ մանուկների մասին է): Եվ նկատելի ու մատնանշելի հանգամանք է, որ չչփացած մանուկ

կը չի մտահոգւում իր ուտելիքի ու խաղալիքի որակով, քանակով և տեսակով: Ուրքան ժամանակ նրա քիմքը հանդուրժում է՝ գոհ է կերածով: Խաղալիքի լավին ու վատին էլ չի նայում. ավելի պոչը կամ ավազի դեզը բավական են նրան ինքնամոռացութեան ոլորտները փոխադրելու համար, որը նրա համար երջանկութեան նախապայման է:

Դժբախտաբար, սակայն, երջանկութեան այս տարրական պայմանները մանկան համար նույնը չեն մնում, այլ նրա հետ մեծանում և փոխվում են: Ֆիզիկական այս նախնական պահանջների կողքին ծնվում և աճում են իմացական, ընկերային ու ընտանեկան նոր պահանջներ, որոնք եթե չգոհացվեն, ապերջանկութունը կսողոսկի մարդու կյանքից ներս: Իսկ երբ տարիքն իր զենիթին է հասնում և սկսվում վայրէջքը, մեջտեղ են գալիս ֆիզիկական ու հոգեկան անկարողութուններ, որոնք պատճառ են դառնում, որ երջանկութեան կապույտ թռչունը չկարողանա թառել մարդու կյանքի ծառին:

Քչով գոհանալու և իր բնական ու պարզ պահանջների որակով և տեսքով չմտահոգվելու մանկական այս հոգեվիճակը եթե մանկան

հետ նորմալ աճեր, և մեջտեղ չմտնեն արհեստական կարիքներ ու այլասերված ախորժակներ, մարդ արարածը մինչև իր կյանքի վերջը գրեթե չպիտի կորցնէր երջանիկ լինելու տրամադրութունը և հնարավորութունը:

Այսօր, սակայն, մեր պահանջները ոչ միայն բազմապատկված են, այլ նաև դրանց մեծագույն մասը կա՛մ այլասերված և կա՛մ արհեստական է: Մի պահ թողնենք «մոլութուն» կոչվողները, որոնց մարդն այնքան մոլեգին կերպով է ցանկանում, և որոնք այնքան խենթ ձևով է «վայելում», ամենասովորական ու անմեղ նկատվող մեր հաճույքների մեծ մասը, հանապազօրյա սիգարետից և սուրճից մինչև կինոթատրոններն ու առտնին խաղաթղթի սեղանները, այլասերված սովորութուններ են: Հագուստ-կապուստի գրեթե բոլոր բժախնդրութունները, «մոդա» կոչվող բռնակալ հրեշը, ժամերով ուտել-խմելը արհեստական պահանջներ են: Ստույգ է, սրանք վատառողջ ինչ-որ հաճույք մարդուն մի պահ պատճառում են, բայց տևական երջանկութուն երբեք չեն կարող պարգևել: Ընդհակառակը, կարող են ծնունդ տալ դրամական տագնապների և ֆիզիկական անհանգստութունների,

և մինչև իսկ մարդուն իր բանականությունից ու արժանապատվությունից մերկացնելով՝ կարող են վերածել եսակենտրոն կենդանի «ռոբոտի»:

Անտարակուսելի է, որ սակավապես մարդիկ և բնության հետ հաշտ ու ներդաշնակ ապրող ընկերություններն (հասարակություններ - թարգմ.) ավելի հավանականություն ունեն գոհունակ և երջանիկ ապրելու, քան բազմապահանջ զանգվածները: Ըստ այսմ, հնօրյա հովիվ ժողովուրդները քանի դեռ կռիվ չունեին արոտավայրի կամ ջրհորի համար, երջանիկ լինելու բոլոր բնական պայմաններն ունեին՝ բացօթյա առողջ կենցաղ, սննդարար ուտելիք, բրդից կամ մորթուց հագնելիք և այլն, և այլն: Նույնպես և հողագործ հավաքականությունները. քանի դեռ միմյանց հետ սահմանային վեճեր կամ հասարակաց առվից իրենց արտերը ոռոգելու խնդիրներ չկային, ապերջանիկ լինելու գորավոր պատճառներ էլ չունեին: Այսքան պարզ կամ նախնական կացությունը, սակայն, երկար ժամանակի համար չէր սահմանված: Մարդիկ աճեցին, բազմացան ու լցրեցին երկիրը՝ ըստ սուրբգրային աստվածային պատգամի (ԾԱՌդ. Ա, 28): Պետու-

թյուններ ծնվեցին ու կայսրություններ կազմվեցին, որոնք կաշկանդեցին մարդկային բնատուր կամ աստվածատուր ազատությունը, որը բնական երջանկության նախապայմանն է: Մարդկային բնազդական առողջ կրոնական ըմբռնումը, թե տեսանելի տիեզերքի ետևում կա բանական, արարչագործ և նախախնամող մի էություն, այլասերվեց կռապաշտական, բնապաշտական ու հեթանոսական այլ կրոններով, և վերջապես վրա հասավ «քաղաքակրթություն» ասված հրեշը՝ իր անհագուրդ ու անվերջանալի պահանջներով: Կյանքը գրեթե խաթարվեց, այսինքն՝ քաղաքները, ուր սկսեցին հավաքվել մարդկանց մեծ զանգվածներ, և որոնց ծնունդը եղավ վերահիշյալ չակերտված բառը, իրենց կապը գրեթե խզեցին բնության հետ, որի անբաժան և ամբողջացնող մասն է մարդ արարածը: Այս խզումը պատճառ եղավ, որ մարդը զրկվի բնատուր երջանկությունից և հարկադրվի ստեղծել արհեստական միջոցներ՝ փոխարինելու համար այդ կորուստը: Այսպես ծնվեցին թատրոնները և կրկեսները, որոնցից մեկը կամ մյուսը այս կամ այն շրջանում եթե ազնվական վայելքի նպատակներին իսկ

Հատկացված եղան, խորքում և նպատակով նույնը մնացին՝ իրական և բնական երջանկուլթյունից զրկված մարդուն ժամանակավոր ու զգացահույզ հաճույք պարզեցել: Սրանց հաջորդեցին ավելի ցածրերը և վնասակարները, գինետներ և հանրատներ՝ մնացած բոլորով հանդերձ, նույն նպատակով:

Ներկայում մարդկուլթյունը հասել է այնպիսի մի վիճակի, ուր այլևս գրեթե անհնար է վերադառնալ սակավապետ կյանքին և բնության հետ հաշտ ապրելու պայմանին, ինչը համագոր է ասելու, որ մարդն անվերադարձ կորցրել է իր բնատուր երջանկուլթյունը... Բայց չի կորցրել այն վերստին ունենալու կամ նրան վերադառնալու իր բնատուր ձգտումը: Հաջորդ կիրակին մեզ կբացատրի, թե մարդն ինչն^օ և ինչպե՞ս է կորցրել իր երջանկուլթյունը:

Շարական Բարեկեդանի (Բ պատկեր)

Այսօր յօրինակ նախաստեղծի Ադամայ,
Որ դրախտին փափկութեան ուրախանայր ընդ հրեշտակս,

Ցնծացուք և մեք ի յօրհնութիւնս հոգևորս:

Այսօր ի խորհուրդ աստուածաստեղծ նախահորն,

Որ ի պտղոյն ադեմայ ճաշակելով զուարճանայր,

Մաշակեցուք և մեք զպատուիրանս Աստուծոյ:

Այսօր ի տիպ պատմունճանին առաջնոյ,

Որով պճնեալ զարդարիր ի փառս մարդն առաջին,

Զարդարեցուք և մեք աստուածային օրհնօք:

Ցնծա՛, Մարիամ, արեգական արդարութեան արևելք.

Եւ աղաչեա զառ ի քէն զճնեալն Աստուած վասն մեր,

Զի դարձուցէ վերստին զմեզ ի դրախտին ժառանգութիւն:

Թարգմանուլթյուն.

Այսօր նախաստեղծ Ադամի նման,

Որ դրախտում ուրախանում էր հրեշտակների հետ,

Մենք էլ հրճվենք հոգևոր օրհներգությամբ:

Այսօր աստվածաստեղծ մեր նախահոր հետ,

Որ Եդեսի պտուղներից ճաշակելով ուրախանում էր,
Մենք էլ ճաշակենք ԱՍՏՄՈ ՊԱՏՎԵՐՆԵՐԸ:
Այսօր անմեղության առաջին պատմունճանով,
Որով պճնված՝ փառավորապես զարդարված էր
առաջին մարդը,
Նաև մենք զարդարվենք Աստվածային օրենքով:
Յնճա՛, Մարիամ, արդար արեգակի արևելք.
Եվ քեզնից ծնված Աստծուն աղաչիր մեզ համար,
Որ դրախտի ժառանգությանը վերստին արժանի անի
մեզ:



*Բ. Արտաքսման կիրակի
[Ծննդ. Գ.]*

ԳԼՈՒԽ Գ

Դրախտի կորուստը

Մեղքը՝ բոլոր չարիքների պատճառը և մեր
ապերջանկության արմատը

*«Ծաշակմամբ պտղոյն
Ծաշակեցին զդառնութիւն
Մեղաց և մահու»
Ծարական*

Մեծ պահքի երկրորդ կիրակին իր ա-
նունը և իմաստը ստանում է առա-
ջին կիրակիով հիշատակված մարդկային եր-
ջանիկ վիճակի ողբերգական վախճանից, այ-
սինքն՝ մեզ հիշեցնում է մարդու՝ դրախտից
արտաքսվելը: Օրվա շարականն այդ դժբախտ
դրվագի պաղատախառը եղերերգությունն է:

Որ գօրէնս սրբութեան պահոց
Նախ ի դրախտին աւանդեցեր,
Զոր ոչ պահելով նախաստեղծիցն՝
Ծաշակմամբ պտղոյն ճաշակեցին

Զդսոնութիւն մեղաց և մահու:
Վասն որոյ շնորհեա՛ մեզ, Տէր, ճաշակել
Զքաղցրութիւն Քոց պատուիրանաց:
Որ զանազան վիրօք մեղաց
Հարաք յոգիս ի թշնամտյն
Եւ ի բազմապատիկ հիւանդութեանս
Կարօտացաք Մարդասիրիդ
Բառնալոյ զցաւս մեր:
Վասն որոյ թշկեա՛ զմեզ, Քրիստո՛ս,
Որպէս մարդասէր:

Թարգմանութիւն.

Դու, ով Տէր, նախ դրախտում հաստատեցիր
Պահքի սուրբ օրենքը,
Որը մեր նախածնողները չպահեցին
Եվ արգելված պտուղն ուտելով՝
Ծաշակեցին մեղքի և մահվան դատնությունը:
Ուստի շնորհի՛ր մեզ, Տէր, որ ճաշակենք
Քո պատվիրանների քաղցրությունը:
Թշնամին զանազան մեղքի վերքեր
Բացեց մեր հոգիների մեջ.
Բազմաթիվ հիվանդությունների մեջ ընկանք.
Եվ կարոտ մնացինք Մարդասերիդ,
Որ մեր ցավերը վերցնես:
Ուստի թշկի՛ր մեզ, Քրիստո՛ս,
Իբրև մարդասէր:

Գալով շարականի ակնարկած աստվածա-
շնչյան դեպքին, հակառակ այն իրողության,
որ գրեթե ամեն ոք ծանոթ պիտի լինի այդ հե-

քիաթանման պատմությանը, մենք ավելորդ
չպիտի նկատենք հատկապես Մեծ պահքի այս
օրերին մեկ անգամ ևս այն կարգալ՝ աստվա-
ծաշնչյան բնագրի պարզության մեջ:

Արարիչն Աստված երբ Իր ստեղծած մար-
դուն դրեց դրախտում, նրան հետևյալ պատ-
վերը տվեց. «Դրախտում գտնվող բոլոր ծա-
ռերի պտուղներից կուտես, բայց բարո և չարի
գիտության ծառից չպետք է ուտես, որովհետև
այն օրը, երբ նրանից ուտես, անկասկած
կմեռնես...»

Եվ օձն Աստծո ստեղծած կենդանիներից
ամենախորամանկն էր: Օձը մոտեցավ կնոջը
և ասաց.

- Իրա՞վ է, որ Աստված ասաց, թե դրախ-
տում գտնվող բոլոր ծառերի պտուղներից
չպետք է ուտեք:

- Դրախտի բոլոր ծառերի պտուղներից կա-
րող եմք ուտել, - պատասխանեց կինը, - բայց
Աստված ասաց, որ դրախտի մեջտեղում
գտնվող ծառի պտուղից չուտենք և նրան
չմոտենանք, որպեսզի չմեռնենք:

- Վատա՛հ եղեք, որ չեք մեռնի, - ասաց օձը
կնոջը, - Աստված այդ պատվերը ձեզ տվեց,
որովհետև գիտեք, որ այն օրը, երբ նրանից

ուտեք, ձեր աչքերը կբացվեն, և աստվածների նման կլինեք՝ ճանաչելով բարին ու չարը:

Եվ կինը տեսավ, որ ծառի պտուղն ախորժաբեր ու աչքին շատ հաճելի է և ցանկալի՝ մարդուն իմաստուն դարձնելու համար, առավ նրա պտուղից և կերավ, տվեց նաև իր ամուսնուն, և նա էլ կերավ: Այն ժամանակ երկուսի աչքերն էլ բացվեցին, և հասկացան, որ մերկ են: Ուստի թղթնու տերևները միմյանց կապեցին և իրենց համար ծածկույթ սարքեցին:

Եվ Տեր Աստծո ձայնը լսեցին, որ երեկոյան դեմ դրախտում քայլում էր, և Ադամն ու Եվան Աստծո ներկայությունից պահվեցին դրախտի ծառերի մեջ: Տեր Աստված Ադամին կանչեց.

- Ո՞ւր ես:

Եվ նա ասաց.

- Քո ձայնը դրախտում լսեցի և վախեցա, քանզի մերկ էի և ծածկվեցի:

- Ո՞վ ասաց քեզ, որ մերկ ես, - հարցրեց Աստված: - Արդոք այն ծառի՞ց կերար, որից պատվիրեցի, որ չուտես:

- Կինը, ում ինձ տվեցիր, կերավ այդ պտուղից, - ասաց Ադամը:

- Այս ի՞նչ արեցիր, - կնոջն ասաց Աստված:

- Օձն ինձ խաբեց, և կերա, - ասաց կինը:

Եվ Աստված անիծեց օձին, անիծեց կնոջն ու անիծեց տղամարդուն: Նրանց համար նախապես բնական սովորույթները՝ սողալ, ծնել, աշխատել, հանկարծ վերածվեցին պատժի, և խանգարվեց նաև այն ներդաշնակ հարաբերությունը, որ կար Աստծո և մարդու միջև և ապա՝ բնություն ու մարդու միջև: Բանական և անբան կենդանական աշխարհների միջև թշնամություն մտավ. մարդը՝ գազաններին և գազանները՝ մարդուն թշնամի դարձան: Բնության ամենից հրաշալի երևույթը, այսինքն՝ կնոջ որդեծնություն աստվածադիր օրենքը, վերածվեց ցավագին երկունքի, մարդու ամենից բնական և ամենից հաճելի զբաղմունքը՝ աշխատանքը, վերածվեց տանջանքի: Եվ բոլոր այս դժբախտություններն իրենց լրումին հասան, երբ «Տեր Աստված եդեմական դրախտից դուրս հանեց ու արտաքսեց մարդուն՝ մշակելու հողը, որից նա ստեղծված էր...» (ՄԱՌ. Բ 16-24):

Ադամ-Եվայի պատմությունը յուրաքանչյուրիս պատմությունն է, դժբախտաբար, հավերժորեն կրկնվող և մշտնջենապես ներկա:

Մարդկանցից ո՞վ չի ունեցել իր փորձության ժամերը՝ ճիշտ Ազգամի և Եվայի նման: Ո՞վ չի հրապուրվել «արգելված պտուղի» տեսքով, ո՞վ իր նմանների կամ իր ներաշխարհի ձայնը չի լսել. «Մի վախեցիր, կեր, կհասունանաս, կիմաստնանաս, աչքերդ կբացվեն, կմեծանաս, փորձառություն ձեռք կբերես» և տակավին սրանց նման հազար ու մի փսփսուկներ: Ո՞վ իր ձեռքն «արգելված պտուղին» չի երկարել, և, վերջապես, ո՞վ այն նաև ուրիշներին չի տվել... Ո՞ր մեղքն իր կամավոր կամ ակամա մեղսակիցները չի ունեցել:

Եվ այս բոլորից հետո ո՞վ արդարև չի զգացել իր «աչքերի բացվելը» և թե «մերկացած է» իր անմեղությունից, որն ունենալուն անդրադարձել է միայն այն ժամանակ, երբ արդեն կորցրել է այն: Եվ ինքն իրեն «մերկացած» զգալուց հետո ո՞վ չի խուսափել շրջապատի աչքերից, ծնողներից, անկեղծ ու հարազատ բարեկամներից՝ հակառակ նրա, որ նման զգացումներ չունեն իր մեղսակից «բարեկամների» առաջ: Ո՞վ չի հեռացել իր կրոնից, իր եկեղեցուց, որոնց մեջ մարդն զգում է Աստծո ներկայությունը: Ո՞վ չի թաքնվել սև ակնոցների կամ գանազան դիմակների

ետևում: Ո՞վ չի պնդացրել իր երեսը կամ չի խուսափել դիմացինի աչքերի մեջ նայելուց՝ վախենալով, որ միգուցե կարգացվի իր աչքերի մեջ գրված պատմությունը: Վերջապես, ո՞վ չի զգացել կամ ուրիշի դեմքին չի կարգացել իր կամ նրա՝ «գրախտից արտաքսված» լինելը... Սրանք այլևս Աստվածաշնչի էջերից վերցված պատմություններ չեն՝ մարդու նախածնողների մասին, գրված երեք հազար տարիներ առաջ: Սրանք այժմեական և ամենօրյա երևույթներ են, որոնց դերակատարներն ամեն օր և ամենուրեք ապրող, շրջող ու շնչող մարդիկ են. ե՛ս եմ, դո՛ւ ես, նա՛ է, ամենքս ենք: Ամենքս էլ Շնորհալուհետ կարող ենք առանց ստելու ասել. «Գող եղէ մեղաց, գտող կորստեամ, գութ ինձ փորեցի» (Հայոց ժամագիրք, Գիշերային ժամ, երգ «Աշխարհ ասեմայն»): *Կամ հաստատել սաղմոսի խոսքը.* «Ամենքեան խտորեցամ ի միասին և անպիտանացամ...» (Սաղմ. ԾԲ 4):

Ցանկանո՞ւմ եք, որ շարունակենք նախամարդու և մեր պատմությունների մյուս նմանությունները: Քանի՞ հոգի ենք տեսել, մենք էլ նրանց մեջ, որ կարող են քաջություն ունենալ իրենց անկումի մեջ պատասխանատու

վոլթյան իրենց բաժինը տեսնելու. չէ՞ որ մարդու սովորությունն է իր վրիպումներին իբրև պատասխանատու միշտ ուրիշին մատնանշելը, այս խոսքերն ամենքս էլ չե՞նք ասել. «Սատանան ինձ խաբեց, կանայք անկումիս պատճառը եղան կամ՝ տղամարդիկ ինձ այս վատ ճանապարհով առաջնորդեցին» և նման հազարումի պատճառներ՝ ինքներս մեզ արդարացնելու համար:

Ուրեմն, Ադամի պատմությունը բառի թուրքերեն իմաստով, արդարև, «ադամի»* պատմությունն է, յուրաքանչյուր ազամորդու պատմությունը, բոլորիս ողբերգությունը: «Դրախտում» սկսված պատմությունը նրանից դուրս բոլոր ժամանակներում շարունակվել է, շարունակվում է մեր ժամանակներում, պետք է կրկնվի մինչև այն օրը, երբ վերջին մարդը դառնա հող, որից վերցվել էր:

Ի՞նչ է արգելված պտուղը

Եթե դրախտից արտաքսման պատմության մեջ Ադամն ու Եվան ներկայացնում են

* «Ադամ» թուրքերեն Ազանակում է մարդ: Մագոմ է երբայերեն «ադամ» բառից, որը երկու Ազանակություն ունի՝ հող և մարդ

ընդհանրապես մարդուն, ի՞նչ են խորհրդանշում մյուսները՝ արգելված պտուղը և օձը:

Պետք է իմանալ կամ վերհիշել, որ դրախտում, բացի տարբեր տեսակի սովորական ծառերից, կան գերբնական հատկություն ունեցող երկու ծառեր, որոնք են «կյանքի ծառը» և «բարու ու չարի գիտության ծառը» (ՄԱՌ. Բ 9): Նախածնողներն արտոնված էին ուտելու ինչպես բոլոր ծառերից, նաև՝ «կյանքի ծառից»: Արգելվածը բարու ու չարի գիտության ծառի՝ պտուղից ուտելն էր: Այս ծառերը խորհրդանշում են Աստծո պատվիրանները, որոնք հավաքաբար կազմում են երկու խումբ. դրական պատվիրաններ և ժխտական պատվիրաններ*: Դրական պատվերներ են, օրինակ, «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով և քո ամբողջ մտքով», «Պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը» (Մատթ. ԻԲ 37, 39, Ղուկ. Ժ 27, Մատթ. ԺԲ 30-31): Եվ տակավին բազմաթիվ ուրիշներ, որոնք մեզ ասում են՝ բարի՛ եղիր, արի՛ եղիր, զթա՛ծ ու ողորմա՛ծ եղիր, սիրի՛ր խաղաղությունը և տարածի՛ր, «Արա ուրիշներին այն, ինչ ուզում ես, որ

* «Դրական» և «ժխտական» եզրերին համարժեք գործածական են «հանձնատելի» և «հրաժարելի» ձևերը:

քեզ անեն» (հմմտ. Մատթ. է 12) և այլն, և այլն: Այս տեսակ պատվերները պահելն արդարև «կյանքի ծառից ուտել» է նշանակում, այսինքն՝ տիրանալ անմահությանը, հավերժական կյանքին: Այս պատվիրանները մեզ ներքնապես առողջ են պահում, մտքի և հոգու խաղաղություն օժտում, մինչև իսկ երկարացնում երկրի վրա մեր կյանքը. «Պատվի՛ր քո հորն ու մորը, որպեսզի բարիք գտնես, երկար ապրես բարեբեր այն երկրի վրա, որ Տեր Աստված տալու է քեզ» (Ելք Ի 12), ~ ասում է մեկ ուրիշ դրական պատվեր:

Իսկ գերբնական բնությունն ունեցող մյուս՝ «բարու ու չարի գիտություն ծառը», խորհրդանշում է Աստծո ժխտական պատվիրանները, որոնք միշտ «մի՛» արգելական մասնիկն ունեն, օրինակ՝ «Մի՛ գողացիր», «Մի՛ շնացիր», «Մի՛ սպանիր», «Սուտ մի՛ խոսիր», «Ինձնից բացի ուրիշ աստված մի՛ ունեցիր» (Ելք Ի 3, 13-16), «Մի՛ արա ուրիշներին այն, ինչ չես ուզում, որ ուրիշները քեզ անեն» և այլն, և այլն:

Սրանց պտուղից չպետք է ուտենք. եթե ուտենք, անկասկած բարոյապես կմեռնենք, երբեմն՝ նաև ֆիզիկապես: Արդարև բազմաթիվ օրենքներ կան, որոնք մարդասպանի հա-

մար մահ են վճռում: Շնացողը պետք է քարկոծվի (Բ Օրենք ԻԲ 13-30, Ղևտ. Ի 10-21), ասում է Հին Կտակարանի օրենքներից մեկը, կռապաշտին մի՛ ապրեցրեք (Ելք ԻԲ 20), հրահանգում է մեկ ուրիշ օրենք:

Արդ, «մեղք» ասվածն այս պատվերներին կամ օրենքներին դեմ գործելն է: Երբ Աստված մարդուն որևէ արարք արգելում է, դա անում է ոչ թե քմայքի համար, այլ որովհետև այդ արարքն, ի վերջո, վնասակար է մարդուն, դեմ է նրա բնությանը: Աստված, իբրև տիեզերքի ճարտարապետ և կյանքի ստեղծող, գիտի, թե ո՛ր արարքներն են մարդու համար վնասակար, ճիշտ հոր նման, ով գիտի, թե ինչն է վնասակար իր զավակի համար և ինչը՝ օգտակար, և ըստ այնմ ասում է՝ այս բանն արա և այն բանը մի արա: «Արգելված պտուղն», ուրեմն, այն բոլոր բաներն են, որոնք վնասակար են մարդկային բնությանը:

Իրերի այս լույսի տակ յուրաքանչյուր մեղք իր բնական պատիժը նախ իր մեջ է պարունակում. հաշիշամուլը, խաղամուլը, գինեմուլը, կնամուլը ի վերջո նյութապես և ֆիզիկապես անպատճառ պետք է պատժվեն, այսինքն՝ դրամը վատնելով և առողջությունը կորցնե-

լով: Իսկ բարոյական կորուստն անկասկած է և ամբողջական, հաճախ՝ անդարմանելի ու հավիտենական...

Բացի այս, յուրաքանչյուր մեղանշական արարք արհամարհանք է Աստծո իմաստության հանդեպ, անհնազանդություն՝ Աստծո կամքին, առնվազն անտարբերություն՝ Աստծո սիրուն:

Երբ Աստված «ասում» է, Նրա «ասածն» այլևս տարակույսի տակ չէ: Այդ «ասվածը» բացարձակ և ամբողջական ճշմարտություն է: Եվ Աստծո «ասածը» տիեզերքի մեջ անմիջապես «լինում» է. «Եվ Աստված ասաց. «Թող լույս լինի»: Եվ լույս եղավ» (ԾԱՌ. Ա. 3): Արդ, տիեզերական այս երևույթը պետք է կրկնվի նաև մարդկանց կյանքում, այն տարբերությունով, որ այն պետք է լինի նաև մարդու համագործակցությամբ: Աստված երբեք իր կամքը չի պարտադրում մարդուն, ում ազատ կամքով է ստեղծել. սա է մարդու և կենդանիների միջև հիմնական տարբերությունը: Աստծո կամքը տիեզերքի այլ մարդերում տիրական և վերջնական է, ներառյալ կենդանիները, իսկ երբ հերթը մարդուն է հասնում, Աստված պարզապես ասում է՝ «արա՛» կամ «մի՛ արա»: Նա-

խաձեռնությունը մարդուն է թողնում:

Աստծո «ասածի» հանդեպ անտարբեր գտնվել կամ (ինչը հոռեգույն է) գիտակցաբար անտեսել Նրա պատվերը, նշանակում է իրեն, իր խելքն ու կամքը գերադասել Աստծուն և Նրա իմաստությանը: Սա ամենաաններելի հավակնությունն է մարդու համար: Եվ սրա մեջ է պատժի խստությունն ու լրջության գաղտնիքը, պատժի, որը տրվեց նախաձնողներին և տրվում ու տրվելու է բոլոր դարերի բոլոր անուղղելի մարդկանց, հատկապես հանդերձյալ կյանքում:

Կարող է հարց ծագել, թե ինչպե՞ս իմանանք, որ այդ պատվերները մեզ Աստծուց են գալիս, ինչի՞ց իմանանք, որ մարդիկ իրենց մտածումները, իրենց կամքը և իրենց իմաստությունը չեն վերագրել Աստծուն: Մի պահ իրավունք տանք նման տարակույսի: Սակայն մի՞թե նաև մեր բարձրագույն կարողությունները, մեր բանականությունը և մեր խղճմտանքը չեն հաստատում այդ պատվերների ճշմարիտ լինելը: Բոլոր մարդիկս էլ համաձայն չե՞նք ասելու, որ իզուր տեղը մարդ սպանելը սխալ է: Մի պահ երևակայենք, որ ուրիշները մեզ կամ մեր հարազատներին այն

անեն, ինչ մենք ենք ցանկանում անել ուրիշներին: Եթե գոհ մնացինք, ուրեմն ճիշտ է. շարունակենք այդ անել, իսկ եթե դժգոհ մնացինք, ուրեմն այդ արարքը սխալ էր: Բոլորս էլ համաձայն չե՞նք, որ ստախոսությունը, շնությունը, զրպարտությունն ու նմանները սխալ և ընկերության ու անհատի համար վնասակար են: Արդարացուցիչ պարագաներ մատնանշելը կնշանակի կամ սոփեստության բավիղները մտնել, որտեղից դուրս գալը գրեթե անհնար է և կամ՝ պաշտպանվող հանգամանքները չեն մտնում վերոհիշյալ բառերի սահմանները:

Մեղքի հանդեպ ժառանգական հակում

Արդ, եթե մարդը գիտի ջոկել չարը բարուց, սխալը ճշմարտությունից և համոզված է բարու՝ լավ ու չարի՝ վատ լինելու մեջ, ինչո՞ւ են չարիքներն այնքան համատարած և բարիքներն՝ այնքան սահմանափակ, ինչո՞ւ քաղաքակրթության զարգացման հետ չարիքները շատանում և բարիքները նվազում են: Յուրաքանչյուր «ինչու»-ին խելահաս լինելը մի ուրիշ հավակնություն է, որից պետք

է աշխատենք հեռու մնալ: Սակայն այս հարցը մեզ առաջնորդում է դեպի մի գաղափար, որն աստվածաբանության մեջ ծանոթ է որպես «ադամական մեղք» բացատրություն, իսկ գիտության և ընկերաբանության (սոցիոլոգիա - թարգմ.) մեջ՝ «ժառանգականություն»:

Գիտականորեն հաստատված իրողություն է, որ մանկան ծնողները, մինչև իսկ մի քանի սերունդներ առաջվա նախածնողները ոչ միայն իրենց արյունն են փոխանցում գավակներին, այլ նաև առողջությունը կամ վատառողջությունը: Ժառանգական են որոշ հիվանդություններ, ինչպես նաև մասնավոր հակումներ ու հատկություններ, գեղարվեստի, առևտրի, արհեստների և այլ ճիրքեր ու տաղանդներ: Ժառանգական այս օրենքով փոխանցվում են նաև բարի կամ հոռի բարոյական հակումներ, առաքինություններ և մոլություններ: Արդ, քրիստոնեական աստվածաբանությունն ասում է, որ մարդու բարոյական հակումներն իրենց աղուքից իսկ պղտորված են: Աստվածաշունչը բացեիբաց ասում է. «Մարդկանց միտքը մանկուց չարի ծառայության մեջ է» (ԾԱՌ. Ը 21): Այսինքն՝ մարդկանց միտքը մանկությունից իսկ հաստատված է չա-

րիք «խնամելու»: Սա ահավոր հավաստում է, բայց, դժբախտաբար, ճշմարիտ է նաև կյանքի փորձառությունը: Ներշնչված մի ուրիշ հոգի ասում է. «Մայրս ինձ անօրենույթեամբ հղացավ և մեղքով ծնեց» («մայր» բառն այստեղ ծնողների փոխարեն է, ովքեր միշտ երկուսն են): Հիսուսն իր ժամանակակից սերունդը կոչում է «չար և շնացող»: Սա կարելի է կրկնել գրեթե բոլոր սերունդների համար:

Ուրեմն մարդկության «ջուրն» իր ակունքից իսկ պղտորված է: Աստվածաշնչական և փորձառական այս իրողությունները փրկագործական իր վարդապետության հիմքը դարձրեց Պողոս առաքյալը, և որոնք ավելի մշակեցին ու իրենց լրումին կամ ծայրահեղության հասցրին օգոստինոսները և կալվինյները: Պողոս առաքյալն ասում է. «Մեկ մարդով մեղքը աշխարհ մտավ, և մեղքով էլ՝ մահը» (Հռոմ. Ե 12): Նույն հատվածի շարունակության մեջ աստվածաբան առաքյալն ավելացնում է. «Մեկ մարդու հանցանքով բոլոր մարդիկ դատապարտության մատնվեցին... մեկ մարդու անհնազանդությունը շատ մեղավորներ եղան»: Ուրեմն Աստվածաշունչը և մարդկային փորձառությունը համաձայն են, որ բոլոր մար-

դիկ այս կամ այն ձևով «չարիք խնամելու», չարիք նյութելու են հետամուտ: Չարիքի այս գաղափարը որտեղի՞ց աշխարհ մտավ, որտեղի՞ց սողոսկեց մարդու միտք և երևակայություն, երբ Աստծո ստեղծած բոլոր արարածները, ըստ Աստվածաշնչի հավաստման, «բարի» (Ա Տիմ. Դ 4) էին: Այս հարցումը այնքան բնականորեն ծագում է բոլոր դարերի սերունդների մտքում և, անշուշտ, ծագել է նաև Ծննդոց գրքի հեղինակի կամ հեղինակների մտքում, և նրանք մեզ ծանոթ պատասխանն են տվել՝ մատնանշելով «ՕՁԻՆ»:

Այս պատմությունները բանավոր փոխանցված և գրի առնված ժամանակ մարդկությունը դեռ մանուկ էր: Իսկ մանուկները բարոյական կամ վերացական ճշմարտությունները կարող են հասկանալ լուրջ պատմություններով, հեքիաթներով, առակներով և օրինակներով: Բարձրագույն կրոնական ճշմարտությունները եթե մանուկ մարդկությանը հայտնվեին իրենց վերացական ձևով, ոչ միայն չպետք է հասկացվեին, այլև մոռացման պիտի դատապարտվեին՝ արմատավորված չլինելով մտքերում կամ սրտերում: Բայց երբ աստվածային նախախնամությունը դրանք

դրվեցին պատմութեան հետաքրքրաշարժ ակիսեի մեջ, հրապույր հագան ու հասկանալի դարձան և դրոշմված մնացին հիշողութիւններում:

Չարը կամ չարիքը, որը կյանքում հաշվի առնվելիք շատ կարևոր իրականութիւն է, իր ծագման լուծումը պետք է գտնել մարդկային մտքում: Եվ մանուկ մարդկութեան համար այն իր լուծումը գտել է աստվածաշնչային ներշնչմամբ այս պատմութիւնների մեջ՝ այնքան պարզ, հասկանալի և թելադրական եղանակով, որքան չպետք է կարողանար տալ և ոչ մի իմաստասեր, ոչ մի աստվածաբան, ոչ մի գիտնական: Ծննդոց գրքի արվեստագետ ու ներշնչված հեղինակն այդ դժվար լուծումը գտել է օձի կերպարում:

Մարդը ոչինչ այնքան զգվանքով և սարսափով չի դիմավորում, որքան օձին. կարծես տարօրինակ ժխտական մագնիսականութիւն ունի այս կենդանին: Մարդկային այս խորշանքը կարելի է բացատրել նաև այն իրողութեամբ, որ նախապատմական մարդը թերևս ոչ մի բանից այնքան չի նեղվել և տառապել, որքան օձերից ու բազմատեսակ այլ սողուններից, որոնք, հավանաբար, վխտացել են այդ

դարերում, և որոնց հետ մարդը շարունակաբար պետք է պայքարեր թե՛ նրանցով բնակված քարայրներին տիրելու և թե՛ գրեթե ամեն քայլափոխի նրանցից պաշտպանվելու համար, երբ որևէ սողուն անակնկալ փաթաթվում էր ոտքերին: Եվ զգացած հանկարծական սարսափը մարդու մեջ այլևս վերածվել է նախնական բնազդի, որը շարունակվում է մինչ օրս: Նախամարդու համար բնութեան մեջ օձից ավելի չար և օձից ավելի դարձելիորեն խորամանկ ոչինչ չկար: Խանգարում էր քարայրում նրա հանգստին և արգելք ու խոչընդոտ էր բնութեան մեջ նրա շրջագայութեանը: Ուստի երբ աստվածային հայտնութիւնը անհրաժեշտ համարեց մարդկանց սովորեցնել, թե բնութեան մեջ գործող չար մի ուժ կա, որին հետո «սատանա» անունը պիտի տրվեր և որը մարդկանց ապերժանկութեան պատճառն ու աշխարհում տիրող չարիքի աղբյուրն է, նրան դրախտում օձի կերպարանքով մարմնավորված ներկայացրեց:

Աշխարհում վխտացող բոլոր չարիքների արմատը մարդու մեղանչական բնութեան մեջ է: Այն աղետները, որոնք առաջ են գալիս բնական երևույթներից՝ երկրաշարժից, հեղե-

ղից, հրդեհից և այլն, մարդու գլխին եկած չարիքներից ամենափոքր տոկոսն են և չեն բաղդատվում պատերազմներից, հալածանքներից, հափշտակություններից, չարաշահություններից, անիրավություններից ու սրանց նման ընկերային բազմաթիվ արարքներից առաջ եկած չարիքների հետ, որոնք գործնականում կազմում են մեղք ասված վերացական իմացություն ամբողջությունը:

Ուրեմն, Մեծ պահքի Բ կիրակին նախածնողների ողբերգության միջից մեզ հիշեցնում է, թե մեղք ասվածը Աստծո կամքի և օրենքի անտեսումն է, որը մեզ բաժանում է մեր երջանկության աղբյուրից՝ մեր Արարչից:

Դրախտային այս դրվագը մեզ հիշեցնում է նաև, թե յուրաքանչյուր մեղք ի՛ր պատիժն ի՛ր մեջ ունի: Ինչպես յուրաքանչյուր վնասակար մանրէ իր մեջ իր թույնն ունի, որը կամ հիվանդացնում, կամ մեռցնում է մարմինը, այնպես էլ յուրաքանչյուր մեղք հոգին, այսինքն՝ մարդու մտածումների և ներքին ապրումների իմանալի աշխարհը, խանգարելու, այլասերելու, մեռցնելու կարողություն իր մեջ ունի: Մարդիկ վնասակար մանրէների ավերիչ ազդեցությունը դարձանելու կամ

նրանց գործունեությունը չեզոքացնելու համար դեղեր են հնարել: Նման կարելիություններ չկա՞ն, արդյոք, որոնցով նաև մեղքը չեզոքացվի կամ նրա ավերիչ արդյունքների առաջն առնվի: Աստծո նախախնամությունը մարդու համար այդ դարձաններն էլ է հայթայթել: Աստված նախամարդուն նախ հույսն էր տվել, որ մի օր նրա «զավակը» պիտի ջախջախի «օձի» գլուխը (ԾԱՌ. Գ. 15): Եվ աստվածային այդ խոստումն իրականացավ Աստծո Որդու մարմնացումով, Ով միաժամանակ «Մարդու Որդի» եղավ և հնարավորություն ստեղծեց, որ ազամորդին կարողանա իրեն ազատագրել մեղքի ճիրաններից՝ վերագտնելու համար իր կորուսյալ դրախտը:

Սրա մասին մեզ հետ կխոսի Մեծ պահքի երրորդ կիրակին:

Շարական Արտաքսման կիրակիի (Բ պատկեր)

Որ դառնութեան պտղոյն ճաշակն,
Որով մեռաք արդարութեան,
Պահելով Քո քառասնօրեայ փոխեցեր
Ի քաղցրագոյն օրինաց քոց ճաշակումն:

Աղաչեմք՝ արթո՛ւ մեզ, Տէ՛ր, գուրախարար սիրոյ Քո
զբաժակն:

Որ անապական ծննդեամբդ Քո լուծեր
Զերկունս նախամօրն, Մարիա՛ւ, Մա՛յր Աստուծոյ.
Բարեխօսեաւ առ միածին Որդին լուծանել զկապանս մե-
ղաց մերոց.
Եւ աղաչեա փրկել զանձինս մեր ի փորձութենէ:

Թարգմանութիւն.

Դատը պտուղի մեր ճաշակումը,
Որով կորցրի՞նք արդարությունը,
Քո քառասնօրյա պահքով փոխեցիր
Քո օրենքի ավելի քաղցր ճաշակումին:
Խմեցրու մեզ, Տէ՛ր, Քո սիրո ուրախարար բաժակը:

Մարիա՛ւ, Մա՛յր Աստծո, որ անապական ծնունդովդ
Նախամոր երկունքը մեղմեցիր, բարեխօսի՛ր Միածին
Որդուդ,
Որ քանդի մեր մեղքի կապանքները,
Եվ աղաչի՛ր, որ փրկի մեզ փորձությունից:



Գ. Անառակի կիրակի
[Դուկաս ԺԵ 11-32]

ԳԼՈՒԽ Դ

Դարձը

Ապաշխարանքը կորած դրախտը
վերագտնելու նախապայման է

«Եթե չսպաշխարեք, ամենքդ էլ
նույնպես կկորչեք»:
Դուկ. ԺԳ. 3

Մեծ պահքի երրորդ կիրակիից սկսած՝
դուրս ենք գալիս Հին Կտակարանի
չրջանակից ու մտնում Նոր Կտակարանի
մթնոլորտ: Այս կիրակին և հաջորդող երկու-
սը իրենց անունները վերցնում են օրվա ավե-
տարանական ընթերցվածի գլխավոր առա-
կից: Ուրեմն հետևում է, որ Գ կիրակի կար-
դացվող գլխավոր հատվածը Անառակ որդու
առակն է:

Նոր Կտակարանի ամենաթանկագին գո-
հարներից է այս առակը: Եթե ասենք, որ այն
իր մեջ խտացնում է Ավետարանի հիմնական

ուսուցումները, չափազանցությունն արած չենք լինի: Հիսուսի ուսուցման հիմնական կորիզը Աստծո հայրությունը և նրա անսահման սերն են, որոնք այնքան սրտագրավ եղանակով են պատկերված այս առակում: Սրանից զատ, ոչ միայն Հովհաննես Մկրտիչը, այլ նաև Հիսուսն իր քարոզությունն սկսեց մարդկանց ապաշխարանքի կանչելով: Գաղափար, որն այս առակի կորիզն է: «Ես չեմ եկել արդարեւորիս կանչելու, այլ մեղավորներիս՝ ապաշխարութեան» (Ղուկ. Ե 32), - իր քարոզության սկզբում ասել է Հիսուսը:

Մեծ պահքի կենտրոնական նպատակը, մինչև իսկ գոյություն պատճառը այս կերակրի իմաստի և նրանից եկող թելադրանքի մեջ է: Նկատելի է, որ նախորդ երկու կերակրներով հիշատակված երկու վիճակները՝ երջանկությունը և նրա կորուստը, կրկնվում են նաև այս առակում: Այս կիրակրի գաղափարը անկումից վերելքը, ընկած վիճակից վերականգնումը, կորստի գյուտն է:

ԱՃկումը

Առակի հերոսը երջանիկ ընտանիքի երջանիկ կրտսեր որդին է: Երջանկության բոլոր

պայմանները նրա տրամադրությունն տակ են: Հարուստ ու պատվավոր հոր զավակ է, գեղեցիկ, համակրելի մի երիտասարդ՝ ուրախ, զվարթ, առողջ ու բարեսիրտ: Գյուղում ծանոթ է ամենքին և բարեկամ՝ գրեթե բոլորին: Գյուղի տոնական բոլոր առիթներից անպակաս է: Հատկապես հարսանիքներում փնտրվող երիտասարդ է, ով առողջ զվարթություն է ստեղծում իր շուրջ և ամենուրեք: Հայրը հպարտ և երջանիկ է նրանով: Ասում են՝ առանց փուշի վարդ չի լինում, բայց ամեն վարդի փուշն էլ անպատճառ խոցող չի լինում, կան նաև անվնաս ու փափուկ փշերով վարդեր: Այս տղան էլ մի տկարություն ունեւր, որը, սակայն, մեծահարուստ այս տանը զգալի չէր՝ աշխատելու խնորժակ և հակում չուներ: Իր մեծ եղբոր մշտակա և գործոն հսկողության ներքո ծառաները տան ներսում և տնից դուրս բոլոր գործերն անում էին: Սրանից զատ, նաև փոքր-ինչ շփացած էր:

Այս տղայի «դրախտային» կյանքն էլ երկար չտևեց: «Փորձիչը», դարավոր «օձը», նրա ականջին էլ մի օր փսփսաց. «Քո կյանքը կյանք է՝ այս գեղջկական սեղմ շրջանակում: Ի՞նչ է քեզ պակասում կյանքը լիովին

վայելելու համար: Ազատագրիր քեզ հոր, եղբոր և տգետ գյուղի կաշկանդումներից, զնամի հեռավոր քաղաք, կյանքն ապրիր իր բոլոր հաճույքների մեջ, երկրորդ անգամ աշխարհ չես գալու...»: Որքան քաղցր էին հնչում այս խոսքերը նրա ախանջին, կաշկանդումներից ազատագրվելու հեռանկարն անգամ նրան հաճույք էր պատճառում: Բայց ինչպե՞ս ասեր հորը, ում հանդեպ անկեղծ սեր ունեեր, գիտեր, որ նման գաղափարը խորապես կխոցի ծերունի հոր սիրտը:

Այն օրից, երբ տնից հեռանալու միտքը տեղ գտավ նրա ուղեղում, տղան կորցրեց իր հանգիստը, քունը և զվարթությունը: Հայրը նկատել էր տղայի մեջ առաջ եկած փոփոխությունը, նրա մտախոհ և ցրված վիճակը: Եվ մի օր էլ հարցրեց նրան. «Տղաս, ի՞նչ է եղել, ինչո՞ւ է մարել դեմքիդ պայծառությունը, արդյոք հիվանդ ես»: «Այո, հայր, ներաշխարհս է հիվանդ, ու եթե ավելի երկար մնամ սահմանափակ այս շրջանակում, բոլորովին կխամրեմ ու կխեղդվեմ. արդ, տուր քո հարստությունից ինձ հասանելիք բաժինը, ես ուզում եմ հեռանալ այստեղից»: Հայրը հասկացավ, որ հակաճառելն ավելորդ կլինի: Ա-

ռանձնացավ՝ ծածկելու համար իր արցունքները: Ի վերջո, զգացմունքների վրա քար դրած, ունեցվածքը բաժանեց երկու զավակների միջև: Եվ կրտսերն իր բաժինն ամբողջությամբ դրամի վերածեց ու մի առավոտ էլ գյուղից անհայտացավ՝ առանց ոչ մեկին, նույնիսկ հորը, «մնաք բարով» ասելու:

Հաստատվեց մի մեծ քաղաքի «լյուքս» պանդոկներից մեկում և սկսեց կյանքը «վայելել»: Նրա դրամը, երիտասարդությունը և ուրախ ու առատաձեռն բնավորությունը «բարեկամների» ու «բարեկամուհիների» մի հսկա փաղանգ հավաքեցին շուրջը: Գիշերները մինչև լուսաբաց զվարճանում, իսկ ցերեկները մինչև երեկո քնում էր: Եվ նրա օրերն անցնում էին հազարումեկ գիշերների էջերից պոկված հեքիաթների պես:

Հարստությունը, սակայն, լեռ էլ լինի, սահմանված է սպառվելու, եթե պակասածի տեղը նորը չդրվի: Եվ երիտասարդը մի օր էլ ուշքի եկավ, որ գրպանում դրամի կտոր իսկ չի մնացել: Անմիջապես անհայտացան «բարեկամներն» ու «բարեկամուհիները»: Պանդոկատը մի քանի օրից դուրս նետեց նրան՝ նրա հագուստները և մնացորդ ինչքը պարտքերի

փոխարեն գրավելով: Նրա չար բախտից այդ օրերին սով էլ էր սկսվել երկրում: Ընկավ հետին չքավորության մեջ: Ոչ ոք երեսին չէր նայում, նախկին «բարեկամները» ձևացնում էին, որ չեն ճանաչում նրան: Ոչ իսկ գիշերելու տեղ ունեւր: Մոտակա ագարակից մի մարդ քաղաք էր եկել խոզարած փնտրելու: Հակառակ սովին ու գործազրկությանը, ոչ ոք այդ ստորին և գարշահոտ գործը կատարել չհամաձայնեց: Երբ ագարակապանը դա առաջարկեց այս դատարկապորտ ու հյուձված երիտասարդին, վերջինը սիրահոժար պատրաստակամութուն հայտնեց, և գյուղացին հրամայեց նրան հետեւել իր իշուկին:

Թշվառ տղան խորհում էր, որ առնվազն գլուխը դնելու տեղ կունենա և աղիքների գալարումն ու բողոքը լռեցնելու չափ ուտելիք: Պոռնիկների ընկերակցութունը երբեմնի այս բախտավոր ու հարուստ երիտասարդին առաջնորդել էր դեպի խոզերի ընկերակցութուն: Մենակ էր մնացել ամբողջ աշխարհում, նա, ով ժամանակին ամեն ինչ ունեւր:

Օրերի շղթան դժվար էր քանդվում, միշտ տխուր և կիսաստված էր, տրվող հացը բավարար չէր, խոզերի առջև նետվող եղջերենու

փայտացած ու վատորակ պտուղներից երբեմն փորձում էր ուտել, ստամոքսը կարծես բզկտվում էր, և վա՛յ, որ տերը տեսներ. ապտակն էլ հետն էր ուտում: Նրա պառկելու տեղը խոզանոցում գետնից փոքր-ինչ բարձր մի տախտակամած էր, որի վրա չոր խոտ էր նետված: Գիշերները քունը մշտապես ընդհատվում էր խոզերի խռնչյուններով, որոնք նրան հրեշների ցնորական երազներով էին գալիս: Իսկ գարշահոտութունը... դրան արդեն վարժվել էր:

Վերականգնումը

Երբեմն անձնասպանության կամ տունդարձի մտածումներն ակամա խուժում էին նրա հիվանդ ուղեղը: Դրանք վանում էր իբրև անկարելի մտքեր: Տունդարձի միտքը, սակայն, կամաց-կամաց, համառ և հարատևորեն ուժեղանում էր ուղեղը: Նրա անոթութունը սնունդ էր հայթայթում այդ մտածումի համար: Հիշում էր իր մանկութունը, գյուղը, երջանկութունը և մանավանդ իր տան ծառաներին ու նախանձում նրանց, ում վիճակն արքայական էր իր հետ համեմատած: Այս բոլոր

երևակայությունների մեջ, սակայն, կար մի պատկեր, որը տառացիորեն հալածում էր նրան: Վերջին անգամ տեսած հոր պատկերն էր՝ իր վրա լայն-լայն բացված տամուկ աչքերով: Դա հայրական խանդաղատանքով օծուն և որդուն կորցնելու երկյուղով լեցուն դեմք էր, որ հայրն ընդունել էր այն օրը, երբ որդին նրան հայտնել էր իր աղետաբեր որոշումը: Այս պատկերը ցնորական այցելությունամբ շփոթմունքի էր մատնում նրան, խռովում ամբողջ էությունը և արցունքով ողողում հյուսված ու աղտոտված դեմքը: Այդ պատկերը թեև ծանր տառապանք էր պատճառում նրան, բայց միաժամանակ նրա միակ լույսն էր, միակ փրկագոտին, որը նրան արգելում էր ալեկոծ ծովում ընկղմվել և իսպառ կորչել, ուր ընկել էր իր կյանքի նավաբեկությունից հետո:

Վերադառնալ տուն, հոր մոտ: Մտածումն անգամ նրան երջանկություն էր պատճառում: Բայց ինչպե՞ս, ի՞նչ երեսով նայեր իր գյուղացիներին, ինչպե՞ս հանդուրժեր եղբոր հեգնանքը... Վանում էր աներես ճանճերի նմանվող այս մտածումները, որոնք, սակայն, վերստին թառում էին նրա գլխին: Կյանքը,

սակայն, գլորվում էր թշվառությունից թշվառություն:

Ի վերջո, մտքում հաստատ ձև ստացան երկու մտածումներ, որոնք ստվեր գցեցին մյուս բոլոր նկատառումների վրա: Նախ ներաշխարհում զգում էր, որ հայրը դեռևս սիրում է իրեն և սպասում իր դարձին: Մյուս կողմից սրտի խորքում զգում և ընդունում էր, որ իր հերթին անկեղծորեն սիրում է հորը: Նրա կյանքում ամեն բան թառամել էր, բացի հոր հանդեպ ունեցած իր սիրուց, և այդ սերն այժմ վերածվել էր աղեկեզ մի կարոտի: Նրա համար ամեն ինչ աղարտված էր՝ աշխարհը, իր կյանքը, հոգին և մարմինը: Բայց հոր կերպարն անաղարտ էր մնացել: Արդ, այս երկու սերերը՝ իրենը և հորը, նրա ներաշխարհի առագաստում միացան իրար և ահավոր երկունքով ծնեցին գղջումը: Ամբողջ գիշեր լաց եղավ մի անդիմադրելի լացով, լաց եղավ կորցրած անմեղություն, վատնած երիտասարդություն, մանավանդ իր գերագույն ոճրի՝ հոր սերը կոխոտած լինելու սրբապղծություն համար: Այս սպառող լացից խոնջացած և թեթևացած՝ առաջին անգամ քնել էր խոր ու հանգիստ քնով: Լուսաբացին ար-

դեն արձակել էր իր երկրորդ և այս անգամ՝ փրկարար ու նույնքան անդառնալի վճիռը. «Պետք է գնամ հորս մոտ և ասեմ նրան. «Հայր, մեղանչեցի երկնքի դեմ և քո առջև, այլևս արժանի չեմ որդիդ կոչվելու, ընդունիր ինձ՝ իբրև քո ծառաներից մեկը»։ Իջավ մոտակա գետակը, հագուստներն ու իրեն նետեց ջուրը՝ խոզերի գարշահոտությունից գեթ մասամբ մաքրվելու համար։ Արևի տակ չորացրեց իրեն և հագուստները։ Ապա, ցուպը ձեռքին, ճակատն ուղղեց դեպի տուն։

Արյան և սիրո կապերով զոգված հոգիներն իրար հետ հաղորդակցության մեջ մտնելու անտեսանելի և անբացատրելի կերպեր ունեն, որոնք այսօրվա գիտությունը համադրում է «հեռակրություն» բառում, և որը հաճախ ավելի ծանոթ է «տելեպատիա» միջազգային բառով։ Հայրը զգաց, որ այսօր իրեն մի բարի լուր է սպասում իր կորած զավակից։ Իր ապարանքի վերնատան պատուհանի առջև նստած՝ աչքը գամել էր այն ճանապարհին, որտեղից մեկնել էր կրտսեր որդին։ Քիչ հետո հորիզոնի վրա մարդկային մի ուրվագիծ ձև առավ։ Քանի ճամփորդը մոտենում էր, այնքան հոր սիրտն ուժգին էր տրոփում։ Վաստ

տեսնող աչքերին օգնության հասած հայրական բնագղը նրան ասում էր, որ եկողն իր տղան է։ Դողդոջ քայլերով ցած իջավ։ Ճամփորդը դեպի նրա տունն էր ուղղվել։ Հազիվ բակից դուրս էր եկել, երբ եկվորն արդեն ընկել էր նրա ոտքերը և մեկիկ-մեկիկ լալահառաչ բառերն էր հեգում. «Հայր, մեղանչեցի երկնքի դեմ և քո առջև, այլևս արժանի չեմ որդիդ կոչվելու, ընդունիր ինձ՝ իբրև քո ծառաներից մեկը»։ Հակառակ արևից և աղտից սևացած նրա դեմքին, հակառակ մուրացիկի կերպարանքին, հայրը գտել էր իր հարազատ որդուն։ Բարձրացրեց նրան, գրկեց, ընկավ պարանոցը, և երկուսն էլ լաց եղան իրենց կյանքի ամենաանուշ արցունքներով։ Հայրը, հազիվ կարոտն առած, հրաման արձակեց ծառաներին. «Որդուս տարեք տան իշխանական բաղնիքը, լողացրեք նրան ամենաթանկագին օճառով, հագցրեք նրա նախկին թանկարժեք զգեստները, որոնք պահել եմ սնդուկներումս, նրա ուսերին իշխանական պատմուճանը զցեք, մատին ադամանդով մատանին անցկացրեք։ Մյուսները թող մորթեն պարարտ եզր, կանչեք գյուղի երգիչներին և նվագահարներին, ճաշկերույթի հրավիրեք ամբողջ գյուղը,

ուտենք, խմենք և ուրախանանք, քանզի իմ այս որդին կորած էր՝ գտնվեց, մեռած էր՝ հարուժյուն առավ»:

«Անառակի» դարձի լուրը պայթեց գյուղում. հավաքվեցին գյուղի նահապետի տանը, բոլորի երեսներին ծաղկել էր հին օրերի մտերմական ժպիտը, բոլորն էլ համբուրեցին վերստին որդիական պատվին բարձրացած իրենց երբեմնի բարեկամին, շատերը լաց եղան, բոլորն ուրախացան:

Եվ Ավետարանն իբրև եզրակացուժյուն ավելացնում է. «Այսպես ուրախուժյուն կլինի երկնքում, Աստծո հրեշտակների առաջ, երբ որևէ մեղավոր ապաշխարի»*:

Ի՛նչ լավ կլիներ, եթե առակն այստեղ ավարտվեր, այս երջանիկ վախճանն ունենար՝ «հեփի ֆնդինգը»: Բայց այդ դեպքում այս առակը մի վեպ, հեքիաթ կլիներ և ոչ կյանք: Դժբախտաբար, կյանքում որքան էլ մարդիկ երբեմն-երբեմն երջանիկ պահեր ունենան, դրանց հանկարծ հաջորդում են եղերական երևույթներ, որոնք ստվեր են ձգում ուրախ

տրամադրուժյունների վրա: Եվ կյանքն այսպես շարունակում է իր՝ ժպիտի և լացի քաղցր ու դառը հաջորդականուժյուններով ելևէջվող ընթացքը: Այսպես է նաև Անառակի առակում, որն իրակա՛ն կյանքի հետ կապ ունի և ոչ երևակայական:

Մենք, սակայն, ցանկանում ենք այստեղ մի պահ կանգ առնել՝ նախքան առակի երկրորդ մասին անցնելը, որն ինքնին մի ուրիշ առակ է: Մենք ցանկանում ենք կանգ առնել՝ պարզապես անդրադառնալու, ընդլայնելու, արձանագրելու համար այն հիմնական մեղքը, որն Անառակին կործանման ու այլասերման առաջնորդեց. ո՞րն էր Անառակի գլխավոր և մահացու մեղքը: Մեր հաջորդ խորհրդածուժյունն այս հարցին պատասխանելու ճիգ կլինի:



* Ղուկ. փԵ 10: Այս համարը նախորդում է «Անառակ որդու» առակին, սակայն բնագրում այսպես է:

Անառակի կիրակի

ԳԼՈՒԽ Ե

Վատնում

Վատնումը մեծագույն չարիք է անհատի և ընկերության համար

*«Եվ վատնեց իր ունեցվածքը,
որովհետև անառակ կյանքով էր ապրում»:
Ղուկաս ԺԵ 13*

Ո՞րն էր անառակ որդու հիմնական մեղքը: Ավետարանում դա հիշված է բացորոշ: Զարմանալին, սակայն, այն է, որ Ավետարանի մատնանշած այդ մեղքը չի անցել մեղքերի այն ցանկ, որը մեր ժամագրքի առաջին էջերում է*: Մեղքերի այդ ցուցակում են, օրինակ, անզգամությունը, հանդգնությունը, շռայլությունը, գեխությունը և նմաններ, որոնք ուրիշ մեղքերի կարգում գործել էր Անառակը, և որոնք, սակայն, Ավետարանում իրենց անուններով չեն հիշվում: Իր ա-

* Խոսքը «Մեղայ Ամենասուրբ Երրորդությունն» բառերով սկսվող ընդհանրական խոստովանության աղոթքի մասին է:

նունով հիշվում է լուկ ՎԱՏՆՈՒՄԸ. «Եվ վատնեց իր ունեցվածքը»:

Բայի արմատը վատն է, որը հայերենում ամենատեղի իմաստ ունեցող բառերից մեկն է: Որևէ մեկի մասին ասել «վատ մարդ է», նշանակում է գործածել ամենաստորացնող իմաստ ունեցող բացատրությունը: Արդարև, «վատ մարդուց» ավելի անպետք մարդ աշխարհում չկա: Եթե արմատի իմաստը սա է, տարբեր չպետք է լինի նաև բայի նշանակությունը:

Վատնել բայն ունի իմաստի զանազան երանգներ՝ գույնով մեկը մյուսից մոտ: Նախ նշանակում է իր կամ ուրիշի ունեցածը անհոգությունով կամ դիտավորյալ անօգուտ և իզուր սպառել ու փչացնել, օրինակ, ծորակը բաց թողնելը, որ ջուրն իզուր գնա, գազը բաց թողնելը, որ ցնդի, թույլ տալը, որ զինվորական կամ հանրային միջոցներ փտի և անգործածելի դառնա՝ վատնումներ են բառի մեղմագույն իմաստով:

Նաև նշանակում է սահմանվածից տարբեր և ավելի ստորին նպատակների համար գործածել, օրինակ, եկեղեցական կարգը սին փառքի համար գործածել, կառավարական

դիրքը շահի համար կիրարկել: Սակայն բայի սովորական իմաստը ունեցվածքը կամ կարողությունը վատ բանի համար և վատ միջոցներով գործածելն է. թանկագին հարստությունը չվայտուցելու սեղանների վրա մսխել, առողջությունը՝ գինարբուքի պանդոկներում, կենսական ուժը՝ շնացողների և պոռնիկների ընկերակցությունով:

Վատնումը մեծ մեղք է

Արդարև նյութական հարստությունը փչացնելը մեծ մեղք է, որի ետևում առկա է մեր կամ մեր նմանների ֆիզիկական սպառիչ աշխատանքը: Տանջանքով մեջտեղ եկած արդյունքը նվիրական մի բան ունի իր մեջ, որի հանդեպ հարգանք և հոգածություն է պետք ցույց տալ և ոչ թե վատնել: Արդարև, ինչ մեր ձեռքում ունենք, սկսած տներից մինչև թևերին անցկացրած ապարանջանները, ինչ գործածում ենք մեր մերկությունը ծածկելու համար՝ գլխարկից մինչև կոշիկներ, և, վերջապես, ինչ սպառում ենք մեր կյանքը պահելու համար՝ հանապազօրյա հացից մինչև տանտիկիներին քրտնաջան աշխատանքով

պատրաստված համադրամ կերակուրները, մինչև մեր սպառած ածուխը, գազը, էլեկտրականությունը և ջուրը, ամենի ետևում առկա է սրբազան աշխատանքի տանջանքը: Մեզ նման հազարավորներ իրենց ֆիզիկական և իմացական ուժերը սպառել են դրանք մեր վայելքին մատչելի դարձնելու համար: Իրողության այս լույսի ներքո պետք է արհամարհելի նախապաշարում նկատել բնազդական այն հարգանքը, որ մեր մեծերն ունեին հացի հանդեպ: Նրանից մինչև իսկ փշրանք վատնել հարկավոր էր: Մեր Տերն էլ երբ հազարավոր մարդկանց հացով ու ձկով կերակրեց, իր աշակերտներին հրահանգեց հավաքել «մնացած կտորները, որպեսզի ոչ մի բան չկորչի» (Հովհ. 9 12):

Երբ հացի փշրանք էր գետնին ընկած, պետք էր վերցնել, համբուրել և այնպիսի տեղ դնել, ուր մարդկային աղտոտ ոտքը չի հասնում:

Հացը մարմնավորում է կյանքի բոլոր այն բարիքները, որոնք ճակատի քրտինքով են ձեռք բերվում: Հացը բոլոր բարիքների խորհրդանշանն է նախ՝ իր կենսական անհրաժեշտությամբ և երկրորդ՝ իր ետևում հա-

վաքական աշխատանքների ամենակերկար շարքն ունենալու պատճառով: Այսինքն՝ դաշտի տաժանագին հերկից ու ցանքից մինչև հունձքի և կալի քրտնաթոր տքնություններ, աղացքից մինչև փռի առջև հացի հետ միասին եփվելը:

Հացը նետելը կամ վատնելը նշանակում է նաև արհամարհել այս բոլոր աշխատավորներին: Այդ վատնումը ոճրի է վերածվում, երբ հիշում ենք, որ մեր երկրագնդի վրա մեզ նման միլիոնավորներ կան, ովքեր հացի պակասից տառաջիորեն տվայտում են սովի ճիւղաններում:

Չենք ուզում ասել, որ ավելացած կամ չորացած հացի փշրանքները նետես չունեցողի առջև: Ոչ: Այլ ուզում ենք ասել, որ ավելացած հացդ պետք է բաժանես չունեցողի հետ, երբ այդ հացը զամբյուղում տակավին թարմ է:

Կրոնական և սրբազան իմաստ հազած մի բառով՝ պետք է հացդ բեկանես* նմանիդ հետ, ով այս կամ այն պատճառով զուրկ է մնացել նրանից: Եվ եթե շուրջը չունես մարդիկ, ում հետ պետք է հացդ բեկանեիր, գնիր գոնե քեզ

* Բեկանել (գրաբ.)՝ ձեռքով կտրել, մասնատել, բրդել:

պետք եղող կես հացը միայն, և վատնվելիք մնացյալ կեսի դրամն ուղարկիր այնտեղ, ուր հացը պահասում է: Հացը, արդեն ասացինք, Աստծո բոլոր բարիքների պարզագույն խորհրդանշական պատկերն է...

Ոչ ոք իրավունք չունի իրեն պետք եղածից ավելին ունենալու, դիզելու կամ վատնելու: «Տիրոջն է երկիրն իր ամբողջությամբ, աշխարհն իր բոլոր բնակիչներով» (Սաղմ. ԻԳ 1): Աշխարհի բոլոր բարիքները, հոգ չէ՝ իմ ձեռքում են գտնվում, թե քո կամ մայր երկրի ընդերքում, ամբողջ մարդկության սեփականությունն են՝ Աստծուց տրված. «Ահա ձեզ տվեցի երկրի արտադրած բոլոր բերքերը» (Հմնտ. ԾԱճդ. Ա 29), - նախամարդուն ասում է Աստված: «Ամեն բարի շնորհ և ամեն կատարյալ պարգև վերնից է» (Հակոբ Ա 17), - ասվում է Նոր Կտակարանում: Աշխատանքը մեր սրբազան պարտքն է, բայց դիզելը մեր իրավունքը չէ, երբ բյուրավորներ կան, ովքեր այս կամ այն պատճառով մեր սեղանի պետքն ունեն: Եթե դիզելը ծանր մեղք է (Ավետարանն այս մասին զանազան առակներով ու բացահայտ հավաստումներով տարակույսի նշույլ անգամ չի թողնում մեր մտքերում), հապա ի՞նչ պիտի լինի վատնելը, մեր կամ այլոց ձեռքի

սրբազան պտուղները վատ նպատակների համար գործածելը:

Ստույգ է՝ դրամի վերածած այն հարստությունը, որն Անառակն իր հետ «հեռու աշխարհ» էր տանում, մարդկային ժառանգական օրենքով իրեն էր պատկանում: Բայց Աստծո և բնության օրենքով իրեն չէր պատկանում:

Ինքը չէր շահել այն, դրանում ինքը քրտինքի ոչ մի կաթիլ չուներ: Ուրիշների ճակատի քրտինքով ստեղծված հարստությունը վերցնելը և պոռնիկների ու դատարկապորտների հետ մսխելը, մոխրի վերածելը համազոր է գողություն, ավազակություն և հափշտակություն, քրեական ոճրի, քանի որ ստոր և վնասակար կերպերով փչանում էր մի հարստություն, որն, աշխատանքի հետ միանալով, կարող էր շահաբեր լինել և շատերի կյանքը փրկել:

Այնպես որ, Անառակն ավելի քան արժանի էր այն վիճակին, որին մատնվեց իր ունեցվածքը վատնելուց հետո:

Միայն ունեցվածքը չէր, որ նա վատնեց. նաև իր Ֆիզիկական ու հոգեկան հարստությունները:

Ինչպես ոչ ոք իրավունք չունի իր ունեցվածքը վատնելու, այնպես էլ ոչ ոք, ոչ ոք արտոնություն չունի վատնելու (գիտություն, թե անգիտություն) իր կարողություններն ու կարելիությունները: Թե՛ մեր նյութական ունեցվածքը, թե՛ մեր բարոյական կարողությունները «տաղանդներ» են, որոնք կյանքի և ամեն բանի Տիրոջից տրված են, Ավետարանի այնքան իմաստալից բառով՝ «չահարկվելու» համար: Դրանք տրված են մեծացնելու, շահ բերելու մեզ և ընկերությունը: Այլապես ամեն բարիք պարզևող Տիրոջ սաստիկ ու պատժին կենթարկվենք: Տերը «չար ծառ» է կոչում նրան, ով չէր շահարկել իրեն տրված տաղանդը, և հրահանգում է. «Նրանից վերցրեք ան իրեն տրվածը (որը պահել էր թաշկինակի մեջ կամ թաղել հողում), և անցնեք արտաքին խավարը, ուր անցնում են անասնաբույսը ու լսոց է սպասում» (տե՛ս Մատթ. ԻԵ 14-30, Ղուկ. ԺԹ 11-27):

Անառակը վատնեց նաև իր երիտասարդությունը՝ պարզեցնելու ամենացանկալին, իր անմեղությունը՝ հատկություններից ամենահամակերպին, և, վերջապես, իր ընտանեկան երջանկությունը՝ փափագելի բարիքներից գերազույնը:

Անառակին, սակայն, թողնենք իր լուռ, բայց միշտ խոսուն հավերժական պատվանդանի վրա, Ավետարանի էջերում, իսկ մենք դառնանք մեր ժամանակների անառակներին և նրանց վատնումներին:

Վատնումը մեր ժամանակներում

Ոչ մի դարում այնքան հսկայական դրամագլուխ չի կուտակվել, որքան 20-րդ դարում: Եվ սա՛ն բոլոր մարզերում՝ նյութական և իմացական, գիտական ու տեխնիկական, ինժեներական ու ճարտարապետական: Սակայն, միաժամանակ, քիչ դարեր են այնքան անխնա մսխել իրենց կտակված և իրենց ստեղծած «ունեցվածքները», որքան մեր դարը: Երկու համաշխարհային և բազմաթիվ տեղային հիմար պատերազմների ընթացքում կատարված վատնումները հիշելը միայն բավական կլիներ մեր հավաստումն արդարացնելու համար: Միլիոնավոր կյանքերի մսխումը՝ ամենապիտանիների և ամենաաշխատունակների, այսինքն՝ մեծամասամբ երիտասարդություն: Անհաշիվ հարստություն, տների և մթերքի վատնումը, որոնք բավական էին

պատասպարելու միլիոնավոր անտունների և կերակրելու բյուրավոր սովահարների:

Այսօր աշխարհի պետութայինների բյուջեներին, պատերազմի աստծուն պարարտացնելու համար, տառացիորեն աստղաբաշխական գումարներ են հատկացվում՝ ոտքի հանելով հսկայական բանակներ, որոնք երկիրը միանգամայն զրկում են աշխատունակ բազուկներին և ընտանիքները՝ դրանք պահող նեցուկներին: Ընդունենք, թե ոչ, սրանք վերջին հաշվով վատնումներ են, առնվազն արգելքներ՝ ավելի կենսական ու շինարար պահանջներին գոհացում տալու համար: Ավելի անհետաձգելի պահանջներ կան նոր վարժարանների, հիվանդանոցների, և, վերջապես, մեր երկրագունդը մշակման արդիական գործիքներով օժտելու:

Եվ տակավին ատոմական փորձերի և լուսնից քար բերելու սարսափելի վատնումները, երբ միլիոնավորները հաց են աղաղակում: Չէ՞ր կարելի մսխված այդ գումարները գործածել տառացիորեն երկրի քարերը հացի վերածելու հրաշքի համար: Թող ուրիշները շարունակեն վերհիշել ու լրացնել անհատնում այն վատնումները, որոնք մեր օրերի «անա-

ռակներն» են անում՝ հավաքաբար ու անհատաբար և ի վնաս համայն մարդկութայն, իսկ մենք մեր ակնարկը կկենտրոնացնենք հայ իրականութայն վրա՝ այնտեղ էլ վատնումի մեղքերը մատնանշելու:

Վատնումը հայ իրականության մեջ

Մեծ Աղետից հետո, երբ տառացիորեն արյունաքամ էինք եղել, գրեթե ամեն բան կորցրած՝ պետք ունեինք ծայրահեղ բծախնդրութամբ գուրգուրելու մեր բարոյական ու նյութական ունեցվածքների վերջին փշրանքը և վերջին կաթիլը: Փառք հասարակ ժողովրդին. իր հրաշագործ ջանասիրութամբ և մրջնային խնայողութամբ ու ի գին անասելի զրկանքների, գեթ նյութապես վերաշահեց այն (և ավելին), ինչ կորցրել էր: Սակայն այս ժողովրդին առաջնորդող տարրը՝ հոգևորականը, մտավորականն ու հասարակական գործիչ-վարիչը, վատնեցին մեր մնացած կարողութայինները և օր օրի հասունացող կարելիութայինները:

Կուսակցական և կղերական ամուլ պայքարները (միշտ գլուխներում հորինված)

վատնեցին այս ժողովրդի ժամանակը, նյութական ու բարոյական կարելիությունները, մամուլը, միտքը: Նույն վատնումն է շարունակվում այսօր: Վերականգնումի ու ինքնապահպանությունի սրբազան սկզբունքների շուրջ տարտղնված և ճակատների ենք բաժանված, որոնց նպատակը, կարծես, ավելի դիմացինի գործունեությունը չեզոքացնելն է, քան գրական ու կառուցողական աշխատանք կատարելը:

Երբ գրեթե բոլոր կողմերից հոգևորականների այնքան աղաղակող պահանջը կա, Մարտելի պես սահմանափակ շրջանում երկու եպիսկոպոս ենք պահում, պարզապես որպեսզի գոհացում գտնեն մեկ ժողովրդին հոգեպես երկուսի բաժանող համայնքային վարիչները, որպեսզի մանր մի կաթողիկոսի շուքը հասնի նրա իրավասություն սահմաններից դուրս ընկնող այս թեմ: Նույն վատնումն է նաև Ամերիկայում, ուր ունենք մեկ թեմ և նույն թեմի համար՝ երկու առաջնորդ՝, դիվանական երկու կազմ, երկու պաշտոնավթերթ,

երբ մեկով կարող էին այդ բոլորը լիովին բավարարել, և տակավին բազում այլ երկվություններ:

Սիյունքում, կարելի է ասել, մեկ միլիոն հայ չունենք, բայց բաժանված ենք չորս կրոնական անջատ խմբակների՝ էջմիածնական, անթիլիասական, բողոքական, հռոմեական՝ յուրաքանչյուրն իր եկեղեցական ուրույն կազմակերպությամբ, վարչությամբ, մամուլով և կրթական ու կրոնական հաստատություններով:

Փառք Աստծո, ներկայումս թեև կրոնական մարզում այնքան էլ ոխերիմ հակառակորդներ չենք իրար, որքան էինք թերևս տասնյակ տարիներ առաջ, բայց, դժբախտաբար, չենք կարողանում գործակցել՝ առաջն առնելու համար այն վատնումների, որոնք կատարվում են կրթական ու նյութական մարզերում, մանավանդ՝ մարդկային ուժի դրամազլխի տեսակետից: Եթե մեկ միացյալ հավաքականություն լինեինք, արժեքավոր որևէ անձ, լինի հոգևորական, մտավորական կամ հասարակական գործիչ, օրինակ, կարող էր նույն ծախսով ավելի լայն շրջանակի ծառայել: Քիչ ջրերով փոքր ջրաղացքարեր են

* Այժմ Ամերիկայում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Ամենայն Հայոց կաթողիկոսությանը ենթակա երկու թեմ կա՝ Արևելյան և Արևմտյան:

պատվում՝ փոքր արդյունքներով:

Չենք ուզում կուսակցական վատնումների մանրամասնությունների մեջ մտնել, որոնք այնքան բացահայտ են:

Երեք-չորս խմբակներ, որոնք քաղաքական վարդապետությունների խողովակով իրենց ազդին ծառայելու բարի առաջադրանքով են ծնունդ առել, այսօր դարձել են արտաքին քաղաքական ուժերի կամ իրենց վարչական շահամետ խմբակների ծառաները և ծառայում են լոկ իրենց ճղճիմ գոյությունն ու մի շարք «գործիչների» պահպանելու անփառու նակ նպատակին:

Պատկերը համեմատաբար մխիթարական է, երբ մեր ակնարկը կենտրոնացնում ենք լոկ ստամբուլահայություն վրա: Այս մեծ ու կենտրոնական օջախում, որը ժամանակին ինքն էլ համայնքային ուժերի վատնումի հանդիսավայր էր (սահմանադրական ու հակասահմանադրական բյուզանդական վեճերով և պայքարներով, պատրիարքների հրաժարումով և հրաժարեցումներով, հեղափոխական ամուլ գործունեություններով), այսօր բարոյական ու նյութական մսխումը իջել է նվազագույնի: Երկու մարզերում, սակայն, վատնումի այդ

մեղքն ինքն իրեն զգալ է տալիս նաև ստամբուլահայ կյանքում:

Առաջինը պարահանդեսներն են: Հաստատված իրողություն է, որ մեր գրեթե բոլոր պարահանդեսներից դուրս ենք գալիս նյութական, բարոյական և համայնքային վնասով:

Ստույգ է, մեր համայնքային որոշ հաստատություններ նպաստավորվում են դրանցից, բայց նույնքան ստույգ է, որ ամեն պարահանդեսից ամբողջ համայնքով փոքր-ինչ ավելի աղքատացած ենք դուրս գալիս: Բարեսիրական, կրթասիրական ու այլ նվիրատվությունների ժամանակ միշտ հարստանում են թե՛ տվողը և թե՛ ընդունողը: Պարահանդեսները, որոնք ևս տալիս ենք ի նպաստ որևէ բարենպատակ հաստատության, բացառություն են. այստեղ տալով՝ աղքատանում ենք: Նախ, որովհետև խնդրո առարկա համայնքային հաստատության համար ապահոված գումարից ավելի ծախսում ենք հանդեսի կազմակերպման, ուտել-խմելու և, մանավանդ, հագուստ-կապուստի վրա: Նմանվում ենք մի վաճառականի, ով հինգ ոսկի շահելու համար տասը ոսկի է ծախսում՝ թափված աշխատանքն ու թանկագին ժամանակն էլ վրադիր:

Կարող են ասել, որ մեզ ընկերային հաճույքն է շահ մնում:

Ի՞նչն է, սակայն, այդ «ընկերային հաճույքի» նկարագրերը: Խճողված ու ապականված միջոցառում չնչե՞լը, ականջ պատռող «մյուզիք» ունկնդրե՞լը կամ աչք պատռող և այլասերող արևելյան մենապարեր դիտե՞լը...

Մեր առողջ ու տոհմիկ մշակույթից (պար կամ երգ) ի՞նչ է այնտեղ տրվում: Քաղքենի, հաճոյապաշտ «մշակույթն» է, որ մատուցվում է իբրև վայելք, և որն, ի վերջո, մարդուն դարձնում է ավելի քիչ մարդ և հային՝ ավելի քիչ հայ: Էլ չենք հիշում եռանդի, աշխատանքի, վագվզուքի, ժողովների, կազմակերպությունների և թանկագին ժամանակի վատնումները, որոնց, եթե ոչ ամբողջ, գեթ մի կարևոր մասը եթե ի սպաս դրվեր պարզ նվիրահավաքության, արդյունքը համայնքային հաստատության համար ավելի քիչ չէր լինի պարահանդեսի արդյունքից՝ խնայելով նաև համայնքի նյութական ու բարոյական կորուստները:

Մյուս վատնումն ընտանեկան ու անհատական մարզում է և կատարվում է տներում, խաղաթղթի սեղանների շուրջ: Օրվա ծանր տաղ-

տուկներից ու հոգնությունից հետո, համեղ ու հանգիստ ճաշի վերջում ժամանցի զվարթ խոսակցությունները կամ անմեղ խաղերը յուրաքանչյուր մարդու արդար իրավունքն են, հատկապես նրանց, ովքեր հանգստի են գնացել ամառանոց: Սակայն մարդը պետք է առողջ դաստիարակության որոշ մակարդակի հասած լինի՝ որոնելու և գտնելու համար խաղեր ու խոսքեր, որոնք որքան զվարճացնող, գեթ նույնքան էլ անվնաս լինեն:

Զխաթարված փոքրիկներն ու պատանիները, երբեմն էլ որոշ երիտասարդներ (եթե այդպիսիք կան) այս կետում ավելի իմաստուն են: Իսկ ավագները՝ այլևս հասուն մարդիկ, նստած խաղ են պահանջում: Եվ այս մարզում ամենից դյուրինը, ամենից հրապուրիչը և, հետևաբար, ամենից սատանայականը խաղաթղթն է՝ իր անհատնում այլազանություններով և անսահման անակնկալներով, ու խաղաթղթի մյուս ընկերը՝ «նարդին»: Սրանք էլ եթե լոկ ժամանցի, «նյարդերը թուլացնելու» կամ առօրյա տաղտուկները վանելու համար լինեն, կարող են անմեղ նկատվել: Սակայն այս երկուսն էլ, մոլություն կազմող բոլոր տարրերն իրենց մեջ ունենալով (սիգա-

րետի, գինու նման), գրեթե անկարելի է, որ երկար ժամանակ իրենց անմեղուկությունը պահեն՝ ինչպես Ադամը: Անշուշտ այս խաղերն օրեցօր ավելի պահանջկոտ են դառնում դրանք գործածողների հանդեպ, և փոխարեն հրուհիատակ գործիք՝ հաճելի ժամանց դառնալու, մի օր էլ վերածվում են գործածողների բռնակալ տերերի: Անվնաս հաղթանակ տանելու հաճույքը այլասերվում և վերածվում է շահելու մոլուցքի, հանրածանոթ ժողովրդական բառով՝ «ղումարի», դրամով խաղալու սովորության: Ապա մարդիկ ձեռք են բերում երկար ժամերով, երբեմն ամբողջ գիշեր, սեղանների շուրջ նստելու վատ սովորությունը: Այդ ժամանակ խաղը վերածվում է հարյուր տոկոսով վատնումի ու վնասի: Նախ՝ ժամանակի վատնում, որը կարող էին առնվազն հանգստի հատկացնել, դրամի վատնում, որը կարող էին առնվազն իրենց գրպաններում պահել, առողջության վատնում, որը կարող էին առնվազն նույնությամբ պահել, և, վերջապես, մարդկային արժանապատվության վատնում, քանզի այդ թղթի կտորներին կամ մանրիկ ոսկորների վեցերես բեկորներին գերի լինել ու չկարողանալ ժամանակին խաղա-

սեղանի մոտից վեր կենալ, նշանակում է իրեն զրկել կամքի գորուկությունից, որը մարդկային արժանապատվության ջիղն է:

Վատնելը վատ բան է, վատնելն անառակ և անկարգ մարդկանց գործն է: Դա մեծագույն չարիք է անհատի և ընկերության համար: Եվ եթե Ավետարանի Անառակը, սեփական դառը փորձառությունից ելնելով, մեղուղիելիք բարեկամական թելադրանք ունենար, ենթադրում ենք, որ դա հետևյալ բառերով պիտի լիներ. «Հնարավոր է, որ դուք իմ չափ չեք ապականված. երանի ձեզ: Հնարավոր է, որ մեղքերի մեջ իմ չափ չեք մխրձված. վա՛յ նրանց, ովքեր ընկղմված են այդ տիղմի մեջ: Շատ դժվար կլինի նրանց վերականգնումը, մանավանդ ձեր դարում, նրանց մեծագույն մասը անդառնալիորեն կկորչի: Խոստովանում եմ, որ մեծագույն ցավս, որ մինչև կյանքիս վերջ ինձ նեղեց, հորս հարստության վատնումն էր, որը թափված կաթի նման այլևս անկարելի էր ձեռք բերել, և ժամանակս, որն այլևս անվերադարձ կորած էր: Հորս սերն ու ընտանեկան երջանկությունս ինձ պարզեցին բարոյական, կրոնական և ընտանեկան արժեքների վերագյուտը և իմ

երկրորդ կյանքը՝ տառացիորեն կորած, բայց վերագտնված, մեռած, բայց վերստին հարուխթյուն առած կյանքը: Իմ երկրորդ կյանքում ամբողջ սրտով ու կամքով ջանացի օգտակար լինել նախ տանս, որի ամենաանարժեք նկատված ունեցվածքի և իրի վրա գուրգուրացի, որ չլինի թե որևէ ձևով վատնվեն: Եվ ապա՝ գյուղիս, որին ի սպաս դրեցի իմ պարապ ժամերը՝ մասնակցելով նրա համայնքային բոլոր ձեռնարկումներին, ճիշտ այն ոգով և զվարթությամբ, ինչպես ժամանակին նրա հարսանեկան ու տոնական ուրախություններին էի մասնակցում: Եվ սա կրկնապատկեց ու ամբարապնդեց իմ ընտանեկան երջանկությունը, որը դարձիցս հետո այլևս դրված էր ավելի իմաստուն ու ավելի հաստատ հիմքերի վրա»:



Անառակի կիրակի

ԳԼՈՒԽ Զ

Ավագ անառակը

Չկամությունը և նախանձը մարդուն զրկում են կյանքի կոչումից

«Բարկացավ և չէր կամեմում մտնել»
Ղուկաս ԺԵ 28

Անառակի առակը զույգ անառակների մասին է: Այն երկու անառակ եղբայրների պատմությունն է: Կրտսերի ելևէջող կյանքի դրվագի գրավչությունը, սակայն, սովորի տակ է թողել ավագի վարքը, որը կրտսերի վարքի չափ եղերական, սակայն առանց նրա երջանիկ վախճանի է: Մեր ակնարկն այժմ կենտրոնացնենք երկրորդ անառակի վրա:

Ավագ եղբայրը կրտսերի հակապատկերն է: Նա լուրջ մարդ է՝ հորը հյուսնագանդ և աշխատանքին կապված: Նրա կյանքը մշտական մաքոք է տան և ագարակի միջև: Առավոտյան՝ արտ, երեկոյան՝ տուն: Ուրիշ ճանա-

պարհով չի շեղվել, որովհետև ուրիշ ճանապարհ չի ճանաչում: Ոչ ոք չի տեսել նրա ժպտալը կամ ծիծաղելը, սակավախոս է, գրեթե լուակյաց: Բերանը բացում է լուկ անցորդներին «չալում» (բարև) ասելու համար: Բարեկամներ քիչ ունի, թշնամիներ՝ բնավ: Ամեն ոք առանց սիրո հարգանք ունի այս հասուն երիտասարդի հանդեպ, իսկ ծառաները՝ վախ, քանզի խիստ և կծու է նրանց հանդեպ: Ոչ ոք նրան չէր տեսել հարսանիքներին կամ տոնական ուրախություններին, բայց անպակաս էր հուղարկավորություններից: Այս վերջին առիթներին էր, որ նրա մարդկայնությունը փոքր-ինչ հայտնվում էր, երբ իր հերթին անսեր հարգանքով իր ցավն էր հայտնում ննջեցյալի տիրոջը:

Բժախնդրորեն օրինապահ էր: Շաբաթ օրերին անխափան սինագոգ էր գնում, այդ օրը ձեռքը ոչ մի գործի չէր գցում: Աստծո պաշտոնյաների հանդեպ հարգալից էր: Չէր թերանում իր կրոնական պարտականությունների մեջ, տասանորդը սինագոգին լրիվ վճարում էր: Խղճատորեն պահում էր բոլոր պատվիրանները, որոնք «մի՛»-ով էին սկսվում՝ մի՛ գողացիր, մի՛ սպանիր, մի՛ շնացիր և այլն:

Լուրջ մարդիկ նրան գյուղի մանուկներին իբրև օրինակ էին մատնանշում, ովքեր, սակայն, միայն իրենց հասկանալի պատճառներով, շատ էլ խանդավառված չէին նրանով: Ինչ-որ անսիրելիություն և արհամարհանք ուներ կրտսեր եղբոր հանդեպ՝ պարզապես նրա ծուլության ու զվարթ թեթևամտության համար. գոնե ինքն այդպես էր կարծում: Զարմանում և հաճախ զայրանում էր, թե հայրն ինչո՞ւ էր շփացնում անպետք տղային՝ նրա վրա շռայլելով իր խանդաղատանքը:

Ավագ որդու անկումը

Անառակի վերադարձի օրը ավագ որդին, ըստ սովորության, ագարակում էր: Երեկոյան, գործից հետո երբ մոտեցավ իրենց տանը, թմբուկի և երգերի ձայներ լսեց: Ատում էր աղմուկը, երգից հաճույք չէր ստանում: Կանչեց ծառաներից մեկին և հարցրեց, թե ի՛նչ էր պատահել: «Եղբայրդ եկավ, հայրդ պարարտ եզր մորթել տվեց և հրամայեց ուրախություն սարքել, քանի որ նրան ողջ-առողջ վերադարձած տեսավ»: Ավետարանը մի քանի ժուժկալ բառերով պատկերացում է

տալիս այդ պահին ավագի հոգեվիճակի մասին. «Բարկացավ և չուզեց ներս մտնել»:

Եղբոր վերադարձի լուրը սահմուկեցրեց նրան, խանդարեց նրա եսասեր հանգիստը, որ գտել էր եղբոր հեռացումով, իրեն բոլորովին ազատված էր կարծում նրա ներկայության տաղտուկից, նա իր համար անդարձ կորած ու մեռած էր... Մի անդիմադրելի խռովք պատեց նրա էությունը: Գլուխը ձեռքերի մեջ՝ անխոս նստեց դռան առջևի քարին: Ծառան տեսավ նրա այս վիճակը, վախեցավ փոթորկից, որ կարող էր իր գլխին պայթել, ներս սպրդեց և տիրոջ ականջին ինչ-որ բաներ փսփսաց:

Եվ հայրը, առանց խրախճանքը դադարեցնելու, դուրս եկավ ու «նրան աղաչում էր», որ ներս մտնի: Կյանքում առաջին անգամ ավագ որդին հոր ներկայությամբ ոտքի չկանգնեց ու գրեթե անպատկառորեն գոռաց նրա երեսին.

«Այսքան տարի է՝ ծառայում եմ քեզ և երբեք խոսքիցդ դուրս չեմ եկել: Մի օր ինձ չասացիր՝ տղաս, գնա՛, մի ուլիկ մորթիր ու քեֆ արա բարեկամներիդ հետ: Իսկ երբ քո այդ որդին վերադարձավ, որ ունեցվածքդ պոռ-

նիկների հետ կերավ-փչացրեց, նրա համար պարարտ եզը մորթեցիր»:

«Օձն» այս անգամ նախանձի լեզվով է խոսում ավագ որդու հետ: Նույն պահին ավագն իր հորից այնքան էր հեռացել, որչափ կրտսերը չէր հեռացել իր «հեռու աշխարհ» գնացած ժամանակ: Դիմակը հանեց նաև ավագ որդին:

Հոր երեսին խփեց իր հավատարիմ ծառայողությունը, «քո այդ որդին» կոչեց վերադարձողին՝ ասելու համար, որ ինքը նրան իբրև եղբայր չի ընդունում: «Եղբայրական սեր» ասվածը քիչ անգամներ է այնքան չորացել, որքան ավագ եղբոր մեջ: Նախանձը հազվագեպորեն այնքան տեսանելիորեն էր մարմնավորված, որքան այդ պահին ավագ որդու մեջ էր, ու չկամությունը քիչ անգամներ է այնքան բիրտ կերպով հեռու մղել սրբությունները, ինչպիսիք հոր սերը և եղբորը ներելու մարդկայնությունն են:

Եթե ավագի արարքն անառակություն չէր, ապա գոնե չարություն էր, որն ավելի կարճ ճանապարհով է առաջնորդում (եթե ոչ Ֆիզիկապես, գոնե հոգեպես) այնտեղ, ուր կրտսերն իր անկումից հետո էր հասել: Երկուսի մեղքի

պտուղն էլ երջանկութեան կորուստն էր: Երկուսն էլ հեռացան իրենց հոր տնից: Երկուսն էլ իրենց զրկեցին հոր սիրուց ու սեղանից: Երկուսի կյանքն էլ վատնում արձանագրեց. առաջինը՝ կրտսերը, վատնել էր հոր ունեցվածքն ու իր անմեղութունը, երկրորդը՝ ավագը, վատնեց պատվիրանապահութեամբ և հնազանդութեամբ շահած արժանիքները:

Հայրը, սակայն, ինչպես ներել էր կրտսերի անառակութիւնը, ներեց նաև ավագի անպատկառութիւնը. «Որդյակ, դու շարունակ ինձ հետ էիր», ամենօրյա հացի նման վայելում էիր իմ սերը, բացի այդ, «ինչ, որ ունեմ, քոնն է», ո՞վ քեզ կարգելեր մորթել քո ուզած ոչխարը, «բայց ուրախ լինել և հրճվել պետք էր, որովհետև քո այս եղբայրը մեռած էր, վերստին կյանք վերադարձավ, կորած էր և գտնուվեց»:

Առական այստեղ վերջանում է: Չգիտենք, թե ավագ անառակն էլ մտա՞վ խրախճանքի սրահ, թե՞ ոչ:

Ո՛վ է կրտսեր, ո՛վ է ավագ անառակը

Հիսուսի առականների մեծ մասը երկու մեկ-

նաբանութիւնն ունի: Մեկը ժամանակակից կամ «ավետարանական» կոչվածն է, իսկ մյուսը՝ հավերժական: Որևէ առակի «ավետարանական» իմաստը կապ ունի մի կողմից «Աստծո ընտրյալ ժողովուրդ» կոչված հրեա հավաքականութեան հետ, որի ծոցում ծնվեց Հիսուսը, որտեղ գործեց ու քարոզեց և ում կողմից, ի վերջո, սպանվեց ու մերժվեց, և մյուս կողմից՝ «հեթանոս» կոչված հավաքականութեան հետ, որտեղ, ի վերջո, Ավետարանը քարոզվեց, և որտեղ արմատավորվեց ու հաստատվեց քրիստոնեական Եկեղեցին: Իսկ առակի «հավերժական» կոչված իմաստը պատշաճում է բոլոր դարերին, բոլոր ժողովուրդներին և բոլոր մարդկանց՝ անհատաբար կամ հավաքաբար:

«Ավետարանական» իմաստով Անառակի առակի ավագ որդին հրեա ժողովուրդն է՝ դարերով Աստծուն «ծառայող» և Նրա պատվիրաններն իբրև օրենք ընդունող: Սակայն ինչպես առակում ավագ որդուն տեսնում ենք կյանքը գրեթե բրածոյի վերածած, սիրուց և մարդկայնութիւնից զրկված, այնպես էլ հին Իսրայելը քարացած էր օրինապահութեան և ծիսապաշտութեան մեջ, իրեն զրկել էր օրենքի

ողուց և կառչել նրա տառից: Նրա Աստվածը վրեժխնդիր էր, նրա օրենքը՝ «ակն ընդ ակա- նը»*, նրա ընկերային բարոյականը՝ գողու- թյուն կամ շնություն չանելը, իր կրոնակցին սիրելը և իր թշնամուն ու բոլոր հեթանոսնե- րին ատելը: Իսկ կրտսեր որդին ներկայաց- նում էր հեթանոսությունը, որն իրեն Աստծո «տնից» ու օրենքից դուրս էր նետել և վատն- վում էր հեթանոսական խորդուբորդ կյանքի ճանապարհներին:

Ավետարանը, սակայն, մի նոր կոչ էր, մի նոր բարի լուր՝ ուղղված ողջ մարդկությանը՝ թե՛ հրեաներին, թե՛ հեթանոսներին: Հիսուսի հասկացողությունը երկուսն էլ՝ թե՛ հրեանե- րը և թե՛ հեթանոսները, կորստի էին դատա- պարտված, եթե չարունակեին իրենց բռնած ճանապարհները: Երկուսն էլ Նրա բերած փրկարար պատգամի պետքն ունեին, հետևա- բար, Ավետարանը երկուսին էլ հավասարա- պես քարոզվեց: Առավելաբար հեթանոսներն ունկն դրեցին այդ կոչին, ապաշխարեցին և «իրենց հոր տունը» վերադարձան: Իսկ միշտ Աստծո տանը գտնվող «պատվիրանապահ»

* «Աչքի դիմաց աչք» (Ելք ԻԱ, 24):

հրեա ժողովուրդն ի վերջո «չցանկացավ» հե- թանոսների հետ միասնաբար Աստծո տունը մտնել և քրիստոնեական եկեղեցուց դուրս մնաց: «Բայց ասում եմ ձեզ, - մի օր արդարև ասաց Հիսուսը՝ խոսքն ուղղելով հրեա ժո- ղովրդին, - որ արևելքից ու արևմուտքից շատերը պի- տի գան ու երկքի արքայության մեջ [ուրախության] սե- դան պիտի նստեն Աքրահամի, Իսահակի ու Հակոբի հետ, իսկ արքայության որդիները [հրեաները] պիտի ել- նեն արտաքին խավարը. այնտեղ պիտի լինի լաց և ա- տամների կրճատում» (Մատթ. Ը 11-12):

Սակայն մեզ շահագրգռողն առակի բարո- յական և հավերժական իմաստն է:

Երկու որդիները ներկայացնում են ողջ մարդկությունը՝ իր երկու հիմնական բարո- յական տեսակների մեջ: Մեկը սանձարձակ է, բայց խապռո պարպված չէ սիրելու կարե- լիությունից, իսկ մյուսը մաքրակրոն է, բայց՝ աններող: Մեկն անիշխանական է, բայց զգաս- տանալու ընդունակ, մյուսն օրինապահ է, բայց՝ փարիսեցի: Մեկը հեղափոխական է, ա- մեն ինչ քանդող, բայց օժտված նորը և ավե- լի լավը շինելու բարեմտությունով, մյուսը ցան- կանում է պահել հին կարգերը, որովհետև դա շահավետ է իրեն: Հնարավոր է, որ մեր

ժամանակների նոր սերունդը կրտսեր անառակի մարմնացումը լինի, իսկ ավագ սերունդը՝ ավագ որդու: Արդյոք նոր սերնդի ներկավատնումը և գալիք սովը՝ բարոյական ու ֆիզիկական, կզգաստացնի՞ նրան: Արդյոք ավագ սերունդը կկարողանա՞ հրաժարվել իր փարիսեցիությունից, իր նախանձից և իր չարաշահություններից, երբ տեսնի, որ ամբողջ նոր աճող մարդկությունը՝ նոր սերունդը, հարգանք չունի նրա, այսպես ասած, «բարոյական» չափանիշների հանդեպ, քանի որ ավագ սերնդի խոսքը և կյանքը հակասում ու հերքում են միմյանց:

Նոր սերնդին լավ-լավ խրատներ են տալիս, բայց իրենք դրանք չեն գործադրում: Հներից քանի՞ մարդ է ինքն իրեն ներքնապես հարգում՝ արիություն ու առաքիչություն մշակելով, որպեսզի նորերն էլ հարգանք ունենան իրենց հանդեպ: Քանիսի՞ այոն է այո և ոչը՝ ոչ: Քանի՞ մարդ է, որ իմացական, բարոյական ու ֆիզիկական շնություն, գողություն և սպանություն չի անում: Տարակույս չկա, որ նոր սերնդի մեծ մասն անառակ է, բայց հին սերնդից քանի՞ մարդ է գերծ նախանձից, ատելությունից, բամբասանքից, զրպարտու-

թյունից ու ստախոսությունից, որոնք ավելի ծանր և այլասերիչ մեղքեր են թե՛ ենթակայի և թե՛, մանավանդ, ընկերություն համար:

Եկեղեցականությունը երբեմն չի՞ կարելի նույնացնել ավագ որդու հետ: Ո՞ր եկեղեցականը կարող է ասել, որ իր քարոզածը և ժողովրդի համար կարգացածը ինքը գործադրում է: Ինչո՞ւ զանգատվել եկեղեցիների դատարկությունից (եթե օրը հանդիսավոր կամ տոնական չէ), երբ եկեղեցականն ինքն է խուսափում ամենօրյա ժամերգություն կատարելու իր տարրական պարտականությունից, երբ եկեղեցում գտնված միջոցին անգամ «հոգով և ճշմարտությամբ» այնտեղ չէ, ինչը փաստվում է նրա անիմաստ ու խանգարիչ շարժումներով, անպատկառ խոսակցությամբ և անհոգի աղոթքով:

Իր եկեղեցին սիրելու և հարգելու հավակնություն սնուցող քանի՞ ծնողներ կցանկանան իրենց զավակներին եկեղեցուն տալ, որպեսզի զարգացած հոգևորական դառնա: Ոչ միայն իրենք չեն ցանկանում տալ, այլ հաճախ փափագ ու կոչում ունեցող իրենց զավակներին արգելք են հանդիսանում:

Կյանքում նման անհատնում երևույթներ

կան, ուր բացորոշ երևան են գալիս տարբերությունները և հակասականությունները, որոնք առկա են մեր գործնական կյանքում ու ձևական հավատքում, և այս հակասականությունները ավագ որդու հիմնական հատկանիշն է: Կրտսերը, հակառակ իր գրեթե ամբողջական քայքայման, ուշքի եկավ և զղջումով ու ապաշխարանքով, փյունիկի նման, մոխիրներից վերստին կյանքին տիրեց ու որդիական իր պատվին բարձրացավ: Ավագ որդու առակում հակառակ ընթացքն ենք նշմարում: Առակի երկրորդ մասի եզրակացությունը խորհրդավոր ու ահավոր կերպով բաց է թողնված, և սրանում են Ավետարանի գերագույն իմաստությունն ու իրապաշտությունը: Հաջորդ քայլը թողնված է մարդու կամեցողությունը. եթե ցանկանա, կմտնի ու կմասնակցի խրախճանքին, և եթե չցանկանա, իրեն կգրկի այդ ուրախությունից: Արտաքին արգելող պատճառներ չկան, ընդհակառակը՝ կա հոր հրավերը և «աղաչանքը»: Արգելող պատճառները ներքին, ենթակայական ու, մանավանդ, եսասիրական են: Ավագին նեղություն տվող ու գայրացնող պատճառը նախ այն մտահոգությունն էր, որ կրտսերն ի-

րեն բաժին ընկած ժառանգությունը փչացնելուց հետո տուն էր եկել մասնակցելու նրա՝ ավագին մնացած բաժնին: Ենթադրում ենք, որ շատ-շատերը կարդարացնեն ավագին: Ուրիշ խոսքով՝ եթե շատ-շատերն ավագ որդու տեղում լինեին, ամենայն հավանականությամբ, նրանից տարբեր ձևով չէին շարժվի: Բայց այստեղ է, որ երևան է գալիս Ավետարանի և մարդկանց չափանիշների տարբերությունը. «Պիտի սիրես քո եղբորը կամ ընկերոջը ինչպես քո անձը»: Ո՞վ ունեցածը կխնայի իր անձի համար. եթե եղբորդ պիտի սիրես «ինչպես քո անձը», ինչպե՞ս կարող ես ունեցածդ խնայել նաև եղբորդ համար: Ավագն փսոսում է մինչև իսկ պարարտ եզր, որը մորթվել էր կրտսեր եղբոր վերադարձը տոնելու համար: Ավագի սրտում արմատ էր բռնել բարոյական ահավոր մի ախտ, որից, ինչպես քաղցկեղից, դժվար է բուժել: Այդ ախտը եսասիրությունն է, որից անբաժան և միասին են աճում հպարտությունն ու սրա տարատեսակները, նախանձը, բարկությունը, ագահությունը և սրանց տարատեսակները՝ բոլորն էլ մահացու մեղքեր: Վա՛յ նրանց, ովքեր սրանց ճանկը կընկնեն, ու ավագը, դժբախ-

տաբար, բռնվել էր սրանց թակարդում, և դա է պատճառը, որ առակը չի կարողանում աւել` ի վերջո, նա տեսավ հոր խոսքերի ողջամտութիւնն ու մարդկայնութիւնը, համբուլրով հաշտվեց եղբոր հետ և մասնակից դարձավ խրախճանքին:

Սակայն մոռանանք ավագին` առակի ժխտական կողմը, ու մեր մտքում, հատկապես ապաշխարութեան այս օրերին, կրտսերին պահենք: Նա վերադարձել էր հոր տուն` վերագտած իր նախկին երջանկութիւնը, ավելի հասունացած և իմաստնացած: Ինչպե՞ս պետք էր պահել ու մշտնջենավորել այդ վիճակը: Հաջորդ երկու կիրակիները կպատասխանեն այս հարցին:

Շարական անառակի (Բ պատկեր)

Լոյս ի Լուսոյ, Ծնունդ և Ծագում,
Որ եկիր ի խնդիր մոլորեալ ոչխարի բնութեանս,
Զոր ընդ խաչին բարձեր ի վերայ ուսոյդ,
Մաքրեա զմեզ ի մեղաց մերոց:

Սուրբդ սրբոց էից մաքրութիւն,
Որ ածեր տան Քո անել` ի մեղաց զաշխարհս մաքրելով,
Ի մնա գտեալ զպատկեր Քո նորոգեցեր,
Նորոգեա՛ զմեզ ի հնութենէ մեղաց:

Ընդ անառակին որդոյ գոչեմք առ Հայրդ գթած.
Մեղաք յերկինս և առաջի Քո, քսի՛չ յանցանաց.
Ե՛լ ընդ առաջ սիրով, գրկեա՛ համբուրի՛`
Մաքրել զմեզ ի մեղաց մերոց:

Աղբիր կենաց` բղխեալ յեղեմայ, սուրբ Աստուածածին,
Որով արբեցաւ երկիր ծարաւուտ Հոգւոյն իմաստիւք.
Տալ մեզ մաղթեա աղբիրս արտասուաց`
Մաքրել զմեզ ի մեղաց մերոց:

Թարգմանութիւն.

Լոյսից Լոյս, Ծնունդ և Ծագում [Հիսուս Քրիստոս],
Որ եկար փնտրելու ոչխարի մնաց մոլորված մարդկութեանը.
Որ խաչիդ հետ ուսիդ առար,
Մաքրի՛ր մեզ մեր մեղքերից:

Սրբերի Սուրբ և Էակներին սրբացնող,
Որ տունդ ավլեցիր՝ աշխարհը մեղքից մաքրելով,
Նրանում Քո պատկերը գտար և նորոգեցիր,
Մե՛զ էլ նորոգիր հնացած մեղքերից:

Անասակ որդու հետ Քեզ ենք կանչում, Հա՛յր գթած,
Մեղք գործեցինք երկնքի դեմ և Քո սուսք, քավիչ հան-
ցանքների,
Ընդառա՛ջ արի սիրով, գրկի՛ր, համբուրի՛ր՝
Մեզ մեր մեղքերից մաքրելու համար:

Եղեմից բխող կյանքի աղբյուր, սո՛ւրբ Աստվածածին,
Որից, հոգևոր իմաստով, կուշտ խմեց ծարաված երկիրը,
Մաղթիր, որ մեզ արցունքի աղբյուրներ տրվեմ՝
Մեզ մեր մեղքերից մաքրելու համար:



Դ. Տնտեսի կիրակի
[Ղուկաս ԺԶ 1-8]

ԳԼՈՒԽ Է

Նյութական հարստության տնօրինումը

Նյութական հարստությունը կարևոր դեր
ունի մեր հավիտենական փրկության կամ
կորստի մեջ

«Անիրավ մամոնայից ձեզ համար բարեկամ արեք»
Ղուկաս ԺԶ 9

Մեծ պահքի 4-րդ կիրակին նույնպես
իր անունը ստացել է այդ օրը կար-
գացվող ավետարանական գլխավոր՝ Անիրավ
տնտեսի առակից: Այս առակը դուռ է բացել
թեր ու դեմ վիճաբանությունների համար:
Շատերը տարակույս են հայտնել, թե Հիսու-
սը կարո՞ղ էր այսպիսի առակ ասել: Կարելի՞
է անհավատարիմ ու «անիրավ» կոչված
ստահակի խարդախ արարքը գործածել բա-
րոյական դաս թելադրելու համար: Հուլիա-
նոս կայսրը († 363), ով թեև քրիստոնեական

դաստիարակութիւնն էր ստացել, բայց հետագայում հեթանոսութիւնն որդեգրեց և ջանաց վերահաստատել այն, որի պատճառով պատմութեան մեջ «Ուրացող» մականունը ժառանգեց, այս առակն ընդդեմ քրիստոնեութեան գործածեց՝ Հիսուսին և Նրա հետևորդներին ամբաստանելով իբրև խարդախութիւն և անարդարութիւն քաջալերողների: Տարակույսները և վերագրումները, բնականաբար, արդյունք են սխալ հասկանալու, որից զժվար է զերծ մնալ առակի առաջին և մակերեսային ընթերցումից հետո:

Տնտեսի առակը չի նմանվում, օրինակ, Բարի սամարացու կամ Անառակի առակներին, որոնցով թելադրվում է բարի գործ կատարել կամ զգուշացվում է չար արարքից: Տնտեսի, ինչպես նաև հաջորդ կիրակիի Դատավորի առակը, տարբեր դասավորումների ներքո են: Այս առակների հերոսները շինարար կամ հանձնարարելի ոչինչ չունեն: Ավետարանում երկուսն էլ ծանոթ են «անիրավ» մակդիրով:

Տնտեսի առակով Հիսուսը մի դրվագ է պատմում բոլորովին աշխարհիկ և բարոյական սկզբունքներից զուրկ ինչ-որ անձնավորութեան կյանքից՝ իր աշակերտներին հանձ-

նարարելու համար, որպեսզի նրանք էլ կյանքում նման եռանդ, հնարք և ուշիմութիւն ցույց տան՝ ապահովելու համար իրենց բարոյական ու հավիտեանական ճակատագիրը, ինչպես «Անիրավ տնտեսն» էր արել իր երկրավոր ու ֆիզիկական կյանքն ապահովելու համար:

Ըստ այսմ, առակի բանալին հետևյալ խոսքի մեջ է. «Այս աշխարհի որդիներն ավելի հնարամիտ են իրենց շրջանակում իրենց գործերը և հետապնդած նպատակները հաջողեցնելու համար, քան լուսի որդիները իրենց սերնդի մեջ» (Ղուկ. ԺԶ 8): Իսկ առակի խորհուրդը վերոհիշյալ խոսքին հաջորդող Հիսուսի այս պատգամն է. «Անիրավ մամոնայից ձեզ համար բարեկամներ արեք»: Հիսուսը ցանկանում է ասել՝ ինչպես աշխարհիկ մարդիկ, օրինակ, անիրավ տնտեսը, մամոնան գործածում են վաղաճիկ և անձնասիրական նպատակներով բարեկամներ շահելու, նույնը դուք արեք հոգևոր ու հավիտեանական նպատակների համար:

Նախ ներկայացնենք առակն իր ավետարանական պարզութեան մեջ:

Հարուստ մեկը մի տնտես ունի: Տնտեսը հին աշխարհի մեծահարուստ տների բարձրագույն պաշտոնյան է: Տանտիրոջ լիազոր

գործակալն է, ով տնօրինում է տան բոլոր գործերը՝ լինի արտում, այգում, թե առևտրի պարագայում: Նրանից պահանջվող հիմնական հատկությունները հավատարմությունը, հեղինակությունը և ուշիմությունն են, անշուշտ, տնտեսական բավարար գիտելիքներով: Տանտիրոջ ամբողջ հարստությունը և տնտեսական գործառնությունը նրա ձեռքում են: Տանտիրոջ գործերի բարվոք ընթացքը, բարգավաճումը կամ սնանկացումը կախված են տնտեսից: Արդ, առակի մեծահարուստի ականջին շշուկներ հասան, թե տնտեսը նրա ունեցվածքը վատում է: Ծշտելուց և համոզվելուց հետո, որ ասվածները ճիշտ են, մի օր էլ հանկարծ տնտեսին կանչեց և ասաց. «Քեզ համար աննպաստ այս ի՞նչ լուրեր են, որ ստանում եմ, տնտեսությունդ առկախ հաշիվները տուր, որովհետև այլևս չես կարող տնտես մնալ»: Մարդն անակնկալի եկավ, չփոթոթոթյան մատնվեց, չփորձեց ճիգ անել ինքն իրեն պաշտպանելու՝ վախենալով, որ դուռ կբացվի քննություն համար, որից, գիտե՞ր, որ անմեղ դուրս չի գա: «Հնազանդ եմ հրամանիդ, տեր իմ, ինձ մի փոքր ժամանակ շնորհիր հաշիվս պատրաստելու», - կարողա-

ցավ ասել ու ակնածալից խոնարհությունով դուրս սպրդեց: Սկսեց մտածել. ի՞նչ պետք է անե՞ր գործից ազատվելուց հետո, ինչպե՞ս պիտի շահեր իր օրապահիկը: Ուրիշ աշխատանքի վարժված չէր. ոչ կարող էր արտ հերկել, ոչ էլ՝ պարտեզ փորել: Դրամ էլ չէր խնայել, որ գոնե որոշ ժամանակ ապրեր: Ձեռքն ընկածը վատնել էր կերոլխումի և խաղամուլություն մեջ: Ընտանիք էլ չէր կազմել, որպեսզի գլուխը դնելու տեղ ունենար. նրա նման եսասեր հաճոյամուլի համար ընտանիքը բեռ էր: Սրանից, նրանից դրամ խնդրելով ապրելն էլ ամոթ էր համարում: Օգնություն հասավ նրա բնական ուշիմությունը. «Գիտե՞մ անելիքս, որ երբ տնտեսի իմ պաշտոնից հեռացվեմ, պարապ չմնամ»: Եվ մեկիկ-մեկիկ մոտը կանչեց իր տիրոջ պարտապաններին ու նրանց պարտքերը քչացրեց: Առաջին կանչվածին հարցրեց.

- Ուրքա՞ն է տիրոջս քո պարտքը:
- Հարյուր մար (շուրջ 4 հազար լիտր) ձեթ, - պատասխանեց մարդը:
- Պարտամուրհակդ վերցրու և անմիջապես գրիր հիսուն:
- Երկրորդին հարցրեց.

- Դո՞ւ ինչ պարտք ունես տիրոջս:
- Հարյուր քոռ (չուրջ 40 հազար լիտր) ցորեն, - ասաց պարտապանը:
- Մուրհակդ վերցրու և գրիր ութսուն, - հրահանգեց տնտեսը:

Եվ այսպես մեկիկ-մեկիկ գեղջեց իր տիրոջ պարտապանների պարտքերը, ուրիշ խոսքով՝ նրանց բարոյապես պարտական դարձրեց իրեն և ապահովեց նրանց բարյացակամությունը, որ երբ աշխատանքից ազատվի, գեթ որոշ ժամանակ ապրի երբեմն՝ սրա, երբեմն՝ նրա մոտ:

Տանտերն իմացավ նաև այս խարդախություն մասին և, ավելացնում է Ավետարանը, «գովեց անիրավ տնտեսին, որովհետև իմաստությունը գործեց», այսինքն՝ տանտերը գովեց անիրավ տնտեսին, որովհետև խելացի էր վարվել: Ավետարանի այս խոսքն առակի հարուցած գայթակղությունն իր գազաթնակետին է բարձրացնում: Գործված խարդախությունները կարծես բավական չէին, այդ ամենին վրադիր դրանք գործողին գովում էլ են... Այս առումով աշխարհը տնտեսի առակից այս կողմ շատ քիչ է փոխվել: Մի պահ եթե անդրադարձ ակնարկ նետենք մեր շրջա-

նակի առօրյա կյանքին, պիտի տեսնենք, որ սա աշխարհիկ շրջանակներում ամենաբնական «ռեակցիաներից» մեկն է նման երևույթներին: «Աշխարհի» մարդիկ գիտակից կամ անգիտակից ինչ-որ հիացում ունեն ամեն կարգի հաջողությունների հանդեպ, հոգ չէ, թե այդ հաջողություններն ինչ գնով են ձեռք բերված: Մարդիկ գիտակից կամ անգիտակից ինչ-որ համակրանք ունեն ճարպիկ գողերի հանդեպ: «Վա՛յ, սատանի ձագ, սրանից էլ հաջող դուրս եկավ» և սրա նման ավելի գունազեղ դրվատական արտահայտություններ են ուղղվում նրանց հասցեին, ովքեր ամեն ստահակություն գործում, բայց իրենց օձիքն ազատում են: Արդարև, ինքնավստահ անզգամությունն էլ իր կախարդանքն ունի: Աշխարհիկ շրջանակներում ազվեսությունն առաքինություն է համարվում և դրվատանքի արժանանում:

Աշխարհի որդիներ, լույսի որդիներ

Մեր Տերը, առակն այսպես օգից կախված թողնելով, ավելացնում է. «Որովհետև այս աշխարհի որդիներն ավելի իմաստուն են,

քան լույսի որդիներն իրենց սերնդի մեջ»: Ասացինք, որ առական ուղիղ հասկանալու բանալին այս խոսքի մեջ է:

Ովքե՞ր են «այս աշխարհի որդիներ» և ովքե՞ր «լույսի որդիներ» կոչվածները:

Հիսուսի քարոզութեամբ մեջտեղից վերացված են դասակարգային բոլոր խտրութիւնները: «Ով որ մեծ է ձեր մեջ, թող լինի ինչպես կրտսերը, իսկ առաջնորդը՝ ինչպես սպասավորը», - ասաց Հիսուսը (Ղուկ. ԻԲ 26): Իսկ Պողոս առաքյալն ավելի բացահայտեց այս տեսութիւնը. «Բոլորդ էլ Աստծո որդիներ եք հավատով ի Հիսուս Քրիստոս: Դուք բոլորդ, որ ի Քրիստոս մկրտվեցիք, Քրիստոսով զգեստավորվեցիք. ուրեմն խտրություն չկա ո՛չ հրեայի և ո՛չ հեթանոսի, ո՛չ ծառայի և ո՛չ ազատի, ո՛չ արուի և ո՛չ էգի. որովհետև դուք ամենքդ մեկ եք ի Քրիստոս Հիսուս» (Գաղ. Գ 26-28): Սակայն, միաժամանակ, Ավետարանի չափանիշներով մարդկութիւնը բաժանված է երկու նոր դասակարգերի, որոնք կգոյատևեն մինչև աշխարհի կատարածը (վախճանը - թարգմ.): Այդ երկու դասակարգերը զուտ բարոյական և կրոնական են: Դրանցից մեկը նրանք են, ովքեր ապրում են միայն այս աշխարհի համար, այս աշխարհի չափանիշներով և այս աշխարհի պահանջների համար:

Սրանց համար հանդերձյալ կյանք, երկիրք, դժոխք, վարձք, պատիժ և այլն գոյութիւն չունեն: Եթե անգամ տիեզերքը ստեղծող ինչ-որ Աստված կա, իրենցով չի հետաքրքրվում, հետևաբար, իրենք էլ չպետք է նրանով հետաքրքրվեն: Ինչ կա-չկա՝ մեր այս տեսանկիւն աշխարհն է և նրանում՝ իրենց սահմանավոր կյանքը, որը պետք է ապրեն՝ աշխարհից հնարավորինս համը հանելով: Օրենքներն օգտակար են այն չափով, որչափով նրանց շահին ու հաճույքին են ծառայում և որչափով ընկերութեան մեջ հավանական քառսի առաջն առնում: Նրանց համար բարոյական օրենք գոյութիւն չունի:

Իսկ մյուս դասակարգը նրանք են, ովքեր հավատում են անձնավոր Աստծո գոյութեանը, Ով ոչ միայն Արարիչն է «երկնքի և երկրի», այլ նաև տվիչը կյանքի, և Ով հետաքրքրվում է այդ կյանքի ուղիղ գործածութեամբ: Կյանքի բարվոք գործածութիւնը ենթակային օգտակար է ոչ միայն այս աշխարհում, այլ նաև, ի վերջո, հավիտենական մի ուրիշ կյանք ապահովելու պայմանն է: Հետևաբար, այս դասակարգին պատկանող մարդիկ հավատում են տեսանկիւն այս աշ-

խարհից այն կողմ անտեսանելի ինչ-որ կարգ ու սարքի գոյությունը, որտեղ նրանց գրավելիք դիրքը համապատասխան կլինի այս աշխարհում նրանց ապրած կյանքի տեսակին և որակին՝ ցորենի հատիկի նման, որը որչափ առողջ ու հասուն է, այնքան առատ և առողջ հասկ կտա, և որչափ նվազ ու վտիտ է մնացել, այնքան նվազ ու նիհար հասկ կտա, իսկ եթե հատիկն այս կամ այն պատճառով հասունացած չէ, ոչ մի արդյունք, ոչ մի ցորեն չի տա, նույնիսկ եթե որպես խոտ բուսած լինի: Ուստի, սրանց համար երկրավոր կյանքը կարևոր է այնչափով, որչափով այդ կյանքն ապահովում և արդյունավորում է հավիտենական կյանքը: Նրանք ունեն բարոյական օրենքի ըմբռնում՝ ոչ միայն խղճի տախտակին գրված, այլ նաև Ավետարանով իրենց տրված, որին պետք է հավատարիմ մնան մինչև վերջ, մինչև իսկ իրենց կյանքի գնով: Դժբախտությունը կամ բարեբախտությունն այն է, որ այս երկու դասակարգերը կյանքում խառն են ապրում, միմյանց վրա ազդում և ազդվում են միմյանցից, մի խմբից մյուս խումբ անցնելը ոչ միայն հնարավոր, այլ նաև ամենօրյա երևույթ է: Ավետարանի բառերով՝ առաջին-

ները կոչվում են «այս աշխարհի որդիներ», իսկ երկրորդ խումբը՝ «լույսի որդիներ»:

Տեսեսի առակով Հիսուսը մի օրինակ է բերում «աշխարհի որդիներին» կյանքից՝ «լույսի որդիներին» թելադրանք տալու համար: Տեսեսը «տիպիկ» աշխարհի որդի է՝ ուշիմ, կարող և պաղարյուն մի մարդ, ով գիտի բոլոր պատեհություններն ի նպաստ իր անձնական շահի և օգուտի գործածելու ձևը: Նախ, չի քաշվում իր տրամադրությունն անձնական հաճույքի համար կիրարկել: Եվ երբ նրա անհավատարմությունը երևան է գալիս, չի ընկճվում, վերջին՝ գրեթե անկարելի նկատված պատեհությունն էլ է օգտագործում իր ապագա ֆիզիկական ապահովության համար: Տեսեսի տերն էլ աշխարհի որդի է, կարող է հասկանալ և, հետևաբար, գնահատել ամեն ճարակություն ու «աչքաբացություն», որը գործվում է դժվար կացություններում:

Այս առակով Հիսուսը ցանկանում է ասել. «Եթե աշխարհի որդիներն ի գործ են դնում իրենց տրամադրության ներքո գտնվող բոլոր միջոցները, գործածում իրենց ամբողջ խելքը՝ երկրավոր կյանքն ապահովելու համար, ին-

չո՞ւ նույնը չանեն լույսի որդիները, ինչո՞ւ նրանք էլ իրենց խելքը չգործածեն, իրենց ընձեռված բոլոր առիթները չօգտագործեն և իրենց ձեռքում եղած բոլոր միջոցները չգործածեն ապահովելու համար մի կյանք, որն անբաղդատելիորեն բարձր ու արժեքավոր է երկրավոր կյանքից, որովհետև, նախ, հավիտենական է, ապա՝ անսահմանորեն երանական: Եվ Հիսուսն ավելացնում է. «Եվ Ես ձեզ ասում եմ, անիրավ մամոնայից ձեզ համար բարեկամներ արեք, որպեսզի երբ այն պակասի, հավիտենական հարկերի տակ ընդունեն ձեզ» (Ղուկ. ԺՁ 9):

Մամոնա

Մամոնան դրամն է, նյութական հարստությունը՝ իր բոլոր տեսակներով, որոնցով մարդիկ վայելում են այս աշխարհը և ապահովում իրենց ֆիզիկական գոյությունը. արտ, այգի, կալվածք, տուն, ոսկի և ամենը, ինչ կարող ենք հարստություն կոչել, մամոնա է: Ավետարանը դրամի և հարստության հանդեպ ոչ միայն անտարբեր է, այլ նաև արհամարհանք ունի, և բոլոր սրբերն էլ ունեցել են: Դրամն ահավոր բան է, նման է հրացանի,

որը կարող էս գործածել ընդդեմ արչավող ավազակների՝ հայրենիքիդ փրկության համար, կամ ուրիշ ազգերի հարստահարելու: Կարող էս գործածել անիրավված ընկերոջդ և սպառնալիքի ենթարկված անձիդ պաշտպանություն կամ ոճրագործություն անելու համար:

Դրամն «անիրավ» է կոչվել, քանզի գրեթե անխուսափելիորեն առաջնորդում է անիրավություն և, առհասարակ, շահվում է (մանավանդ երբ դիզված է) անիրավությունը: Երբ ապրանքը գնվում է դրամով, նրա վրա ավելացվում են գործառնություն ծախսերն ու օրինավոր մի շահաբաժին՝ իբրև ծառայության վարձ, և վաճառվում է շահով՝ օրինավոր ու արդար է: Իսկ երբ այդ շահաբաժինն անցնում է օրինավորության սահմանները, այն ժամանակ մտնում է անիրավության և վաշխառության սահմանները: Բացի այս, դրամն ահավոր է, որովհետև բոլորովին էլ ինչ-որ չեզոք տարր չէ, իր մեջ սադայելական մի մագնիսականություն ունի, օժտված է ձգողական զորությունը: Բնական օրենք է, որ բոլոր մարմինները ձգվում են երկրի կողմից, ձգողականության օրենքը հաղթահարելու և երկրի վրա «չընկնելու» համար հարկավոր է

կիրարկել ուրիշ օրենքներ: Թուշունները և օղանավերն այդ օրենքը գտել և կիրարկում են: Նույնքան բնական օրենք է, որ գրեթե բոլոր մարդիկ ձգվում են դրամի կողմից: Բարոյական կոչվող օրենքներն են, որ կարող են հաղթահարել դրամի ձգողականությունը, և միայն այդ օրենքները կիրարկողները գերի չեն դառնում դրան. իրենց ցանկացած ժամանակ, այսինքն՝ անհրաժեշտ պարագային, տեղի են տալիս այդ ձգողականությանը, ինչպես թուշունները՝ երկիր իջնելու ժամանակ, իսկ պետք եղած ժամանակ իրենց ձերբազատում են նրա ուժից, մի խոսքով՝ գերի չեն դառնում դրամի մագնիսականությունը:

Դրամը նաև օժտված է մարդու կյանքում և հոգեկան աշխարհում փոփոխություն առաջ բերելու կարողությամբ: Դրամն ինքնին կարողություն ու գորություն է և, բոլոր կարողությունների նման, կարող է վատնվել՝ չգործածվելով կամ սխալ, հոռի և ստորին նպատակներով գործածվելով, այսինքն՝ ի վնաս դրանից կախյալի և ընկերության: Կարող է նաև գործածվել բարի, ազնիվ ու օգտակար նպատակների համար: Եվ գործածություն այս եղանակները կարող են փոփոխու-

թյուններ առաջ բերել մարդու հոգեկան աշխարհում: Դրամը վատնելը, մսխելը, անհաշիվ և չարաչար գործածելը մարդուն դարձնում է անառակ, այլասերում, բարի և ուրախ մարդուն վերածում մոլի ու անզգամ խլյակի: Դրամ կուտակելը խնայասեր ու աշխատասեր մարդուն դարձնում է կծծի, անբարտավան ու ազահ. երեքն էլ մահացու մեղքեր են, որոնք բարոյապես մեռցնելուց հետո կաթվածի ու մտազարուկության են առաջնորդում մարդուն: Դրամն ընտանիքի բնական և բանական հանգստավետության համար կիրարկելը և մանավանդ դրանից ընկերային նպատակների, հատկապես դրամ չունեցողներին, մասնավոր ու մշտական բաժին հանելը մարդուն օժտում է մտավոր ու ֆիզիկական առողջությամբ, սրտի ու մտքի խաղաղությամբ, որոնք մարդու ամբողջական երջանկության հիմնական պայմաններն են:

Աղքատին տրված յուրաքանչյուր դրամ մի միջոց է բարեկամներ ձեռք բերելու թե՛ երկրում և թե՛ երկնքում: Գանձ դիզել է հավիտենականության բանկերում: Մինչև իսկ եթե բարերարյալները ապերախտ գտնվեն կամ «դժոխք» գնան ու չկարողանան «բարեխոսել»

բարիք անողի համար, հավիտենական Տերը պիտի ասի. «Անոթի էի՝ հաց տվեցիր, ծարավ էի՝ ջուր տվեցիր, նեղության մեջ էի՝ օգնության հասար... Քանի որ քո եղբայրների և իմ զավակների համար արեցիր, ինձ համար արեցիր. մտիր և մասնակից եղիր, ուրեմն, այն ուրախությանը, որը պատրաստված է նրանց համար, ովքեր արժանի կլինեն դրան՝ իրենց կյանքը, հարստությանը և կարողությանը ճիշտ տնօրինելով» (Հմմտ. Մատթ. ԻԵ 35-40):

Ուրեմն, մեկ անգամ ևս ունկնդիր լինենք Հիսուսի խոսքերին, որոնք այս առակին իբրև եզրակացություն են տրվում.

«Եվ ես ձեզ ասում եմ. անիրավ մամոնայից ձեզ համար բարեկամներ արեք, որպեսզի երբ այն պակասի, հավիտենական հարկերի տակ ընդունեն ձեզ: Քիչ բանի մեջ հավատարիմը շատի մեջ էլ հավատարիմ է. իսկ քչի մեջ անիրավը, շատի մեջ էլ անիրավ է: Արդ, եթե անիրավ մամոնայի մեջ հավատարիմ չեղաք, ձեզ ո՞վ կվստահի ճշմարիտը: Եվ եթե օտարիճը եղող բանի մեջ հավատարիմ չեղաք, ձերը ո՞վ կտա ձեզ: Ոչ մի ծառա երկու տիրոջ ծառայել չի կարող. որովհետև եթե մեկին ասի, մյուսին կսիրի. կամ եթե մեկին մեծարի, մյուսին էլ կարհամարհի: Չեք կարող և՛ Աստծուն ծառայել, և՛ մամոնային» (Ղուկ. ԺԶ 9-13):

Ուրեմն, այս կիրակիի թելադրանքը նաև «անիրավ մամոնան», այսինքն՝ նյութական հարստությունը, մեր խելքը, մեր ժամանակը և մեզ ներկայացող բոլոր պատեհություններն ու մեր ամբողջ խնայողությունը «հավիտենական հարկեր» գնելու համար օգտագործելն է: «Անիրավ» մամոնան ճիշտ գործածելն ինքնին երաշխիք է, որ «ճշմարիտը», այսինքն՝ Աստծո հոգևոր և հավիտենական շնորհները, կկարողանանք ըստ արժանվույն վայելել: Եթե մեր բարոյական ու հոգեկան բնությունը «օտար» նյութը պետք եղած ձևով չենք կարող արժեցնել, «մերը», այսինքն՝ մարդուն վերապահված շնորհները, ոչ ոք մեզ չի տա:

Այս առակից բխած կենտրոնական թելադրանքը քաջալերական է նաև նրանց համար, ովքեր թեև «հեռու չեն արքայությունից» (հմմտ. Մարկ. ԺԲ 34), բայց գաղջ քրիստոնյաներ լինելով՝ դեռ չեն մտել այնտեղ: Քրիստոնյաներ, ովքեր տարված լինելով աշխարհիկ մեծ ու փոքր հոգսերով, չեն կարող հետամուտ լինել հոգևոր գանձեր զիզելու: Նրանց տրված է գոնե բարեգործություններով երկնքում բարեկամներ շահելու կարելիությունը: Յուրաքանչյուր բարեգործություն Աստծո աթո-

ուի առջև ինքնին բարեխոս է նվիրատուի համար: Ինչպես ճարպիկ տնտեսն իր կյանքի «ամենակրիտիկական» պահն անգամ օգտագործեց Ֆիզիկական գոյություն ունեցող և ապահովության համար, նույնպես և մարդիկ մահվան անկողնում անգամ կարող են իրենց հավիտենական երջանկությունն ապահովել սրտագեղ մի նվիրատվությամբ՝ դրան ընկերացնելով գործած մեծ կամ փոքր անիրավությունների համար անկեղծ զղջումը: Եթե ինչ-որ ավագակ մահվան գալարումներում «դրախտը» ժառանգեց՝ պարզապես իր կողքի անմեղ խաչակցի հանդեպ անկեղծ համակրանք տածելով, Նրանում երկրի վրա Աստծո մարմնացումը ճանաչելով ու հայցելով նաև իրե՛ն հիշել Նրա հավիտենական փառքի մեջ, նույնն անելու հնարավորությամբ օժտված է յուրաքանչյուր «ավագակ», եթե իր խիղճը, խելքը և ունեցածը գործածի: «Հավիտենական հարկերի» մեջ ընդունվելու պայմաններից մեկն, ուրեմն, աշխարհիկ հարստության լավ տնօրինումն է, իսկ մյուսը՝ աղոթքը, որի մասին մեզ կհիշեցնի առաջիկա կիրակին:

Շարական Տնտեսի կիրակիի

Որ արարեր զօրութեամբ զիմանալեացն աշխարհ վերին Եւ ի նմա հաստատեցեր տնտես զպետս հրեղինացն, Օրհնէմք զանհասանելի զօրութիւնդ:

Որ տիրապէս Մեծատունդ ստեղծեր երկրորդ աշխարհ զգալի Եւ ի դրախտն որ յաղենի տնտես եղեալ զմարդ առաջին, Օրհնէմք զանհասանելի զօրութիւնդ:

Որ շինեցեր բարձրագոյն զեկեղեցի Քո խորհրդեամբ Եւ ի սմա կարգեալ տնտես զքարոզս բանին ճշմարտութեան, Օրհնէմք զանհասանելի զօրութիւնդ:

Անտանելոյն Տաղաւար բարձող Էիցս Բարձողին, Որ ծնար զԱստուած մարմնով զանմարմնաբար Ծնունդն Հօր, Բարեխօսես վասն մեր, Աստուածածի՛ն Մարիամ:

Թարգմանություն.

Դու, ով Տեր, ստեղծեցիր իմանալի էակների վերին աշխարհը Եվ նրանում իբրև տնտես հաստատեցիր հրեղենների պետերին, Օրհնում ենք անճատելի զորությունդ:

Դու, որ իբրև մեծատուն ստեղծեցիր զգալի երկրորդ աշխարհը
Եվ Եղեմի դրախտին իբրև տնտես առաջին մարդուն
կարգեցիր.
Օրհնում ենք անճառելի զորությունդ:

Դու, որ բարձրագույն իմաստությամբ Եկեղեցիդ կառուցեցիր
Եվ նրանում տնտես կարգեցիր ճշմարիտ խոսքի քարոզիչներին.
Օրհնում ենք անճառելի զորությունդ:

Տաղավար Նրա, Ում անհնար է կրել,
Քո մեջ կրեցիր Նրան, Ով էակներին մեղքը կրեց.
Դու Աստծուն մարմնով ծնեցիր,
Նա, Ով Հոր ծնունդն էր անմարմնաբար.
Բարեխոսի՛ր մեզ համար, Աստվածածի՛ն Մարիամ:



Ե. Դատավորի կիրակի
[Դուկաս ԺԸ 1-8]

ԳԼՈՒԽ Ը

Ադոքք

Ադոքքը երկրից երկինք սանդուղքն է,
կյանքի պլեկոծված նավը խաղաղության
նավահանգստին կապող պարանոց

«Մի առակ էլ ասաց նրանց այն մասին, թե նրանք
ամեն ժամ պետք է աղոթեն ու չձանձրանան»:
Ղուկ. ԺԸ 1

Ադոթքի գաղափարին է ընծայված Մեծ
պահպանող հինգերորդ կիրակին: Ադոթ-
քը կրոնի հոգին է, ուղնուծուծը, կյանքը:
Կրոնն առանց ադոթքի աներևակայելի է,
քանզի կրոնի առարկան նույն ինքն Աստված
է և հոգևոր կյանքը, իսկ ադոթքն անպայման
ենթադրում է իր դիմաց աներևույթ հավիտե-
նական էակին ունենալ, Ով Արարիչն է տիե-
զերքի և Տերը կյանքի: Իսկ հոգևոր կյանքը և
ադոթքը գրեթե նույնն են, ինչպես ընտանե-
կան կյանքը և սերը: Ըստ այսմ, առանց ա-

ղոթքի քրիստոնյան թռչունն է առանց թևի, ձուկ՝ առանց լողակի:

Այս իսկ պատճառով Ավետարանում գորավոր շեշտ է դրված աղոթքի վրա: Մեր Տերը թե՛ Իր խոսքով և թե՛ կյանքով է հաստատել դրա կարևորությունը: Երբ ցերեկները հատկացնում էր քարոզություններին ու գյուղեգյուղ ճամփորդություններին, հաճախ «ամբողջ գիշերը» (Տե՛ս Դուկ. 2 12) աղոթքով էր անցկացնում, երբեմն էլ «խույս էր տալիս դեպի ամառի տեղեր և աղոթքի էր կանգնում» (Դուկ. Ե 16): Ավետարաններում շատ են հիշատակությունները, ուր Հիսուսն աղոթում է. Մկրտությունից մինչև Գեթսեմանի, Պայծառակերպության լեռից մինչև Գողգոթայի բարձունքը:

Ըստ երևույթին, մարդն ունի երկու տեսակ կյանք՝ անհատական և ընկերային: Նմանապես կա աղոթելու երկու ձև՝ հավաքական և առանձնական: Հիսուսը հավաքական աղոթքի մասին ոչինչ չի խոսել: Աղոթքի մասին Նրա ուսուցումը գրեթե ամբողջությամբ վերաբերում է առանձնականին: Եվ սա՝ կարևոր հոգեբանական պատճառով: Փաստված է, որ առանձնական աղոթքի նվիրված մարդն անպակաս կլինի նաև հավաքական աղոթքներ

րից: Փաստված է նաև, որ անհատական կյանքում շիտակ և առաքինի մարդն ավելի պիտանի ու օգտակար գործունեություն է ունենում ընկերային կյանքում: Անհատական աղոթքում Աստծո ներկայության մեջ գտնվող մարդը հավաքական պաշտամունքից չի բացակայի: Անհատական աղոթքը կյանքի հոգևոր շենքի անտեսանելի հիմքն է, որը պահում է հավաքական աղոթքի տեսանելի կառույցը: Առանձնական աղոթքը կյանքի նավի՝ ծովի մեջ մխրճված մասն է, իսկ հավաքականը՝ ծովից վեր երևացող մասը: Երկուսն իրարից անբաժան են, երկուսը միասին կազմում են աղոթքի կյանքի ամբողջությունը: Ով հոգնել է առանձնական աղոթքից, անխուսափելիորեն պիտի հոգնի հավաքականից: Այդպիսին եթե ներկա իսկ լինի եկեղեցական պաշտամունքին, ապա՝ աղոթասացությանը մասնակցելուց տարբեր շարժառիթներով: Ուղիղ շարժառիթով հավաքական աղոթքին մասնակցողը փաստում է, որ անհատական աղոթքը կիրարկող մեկն է:

Ինչպես պետք չէ աղոթել

Ավետարանն այս մասին բացահայտ թե-
լադրանքներ ունի: Նախ ասում է, որ ցուցա-
դրելու, երևալու համար չպետք է աղոթել:
Հիսուսը սովորեցնում է. «Եվ երբ աղոթես, չիմես
կեղծավորների մասն, որոնք սիրում են ժողովարաննե-
րում և հրապարակների անկյուններում աղոթքի կանգ-
նել, որպեսզի մարդկանց երևան. ճշմարիտ եմ ասում
ձեզ, ա՛յդ իսկ է արանց վարձը», այսինքն՝ ցուցա-
դրելու համար աղոթողների վարձը մարդ-
կանցից զնահատվելն է, թե աղոթասեր են:
Իսկ Աստուծոց ոչ վարձ և ոչ էլ պատասխան
են ստանում, քանի որ նրանց նպատակն
Աստուծուն աղոթելը չէր, այլ մարդկանց աղո-
թող երևալը:

Փառք Աստծո, ենթադրում ենք, որ «հրա-
պարակների անկյուններում» աղոթողները վաղուց
վերացվել են հրապարակներից, քանի որ այն-
տեղ նրանց ապրանքն այլևս ոչ ոք չի գնում:
Սակայն «ժողովարաններում» (աղոթավայրերում)
ցուցադրելու համար աղոթողների սերունդը
դեռ չի սպառվել: Գրեթե յուրաքանչյուր
պաշտամունքի ընթացքում հանդիպում ենք
նրանց: Առհասարակ բոլորս էլ զգում ենք,

թե ո՛վ է Աստծո առաջ ու սրտանց աղոթում, և
ո՛վ է մարդկանց առաջ ու երեսպաշտորեն աղո-
թում:

Դարձյալ ենթադրում ենք, որ ոչ մի լուրջ
մարդ որևէ ձևով չի զնահատում ցուցադրե-
լու համար կատարվող այս շարժումները,
ընդհակառակը, միայն արգահատանք է ունե-
նում այդպես աղոթողի հանդեպ: Եթե զնա-
հատողներ կան, նրանք էլ կա՛մ նրանց նման
երեսպաշտներ են, կա՛մ աղոթքի արհեստա-
վորներ, որոնք աղոթքի ոգուց արդեն վաղուց
են պարզված՝ լիովին պահելով հանդերձ և
միատեղ պաշտոնապես կիրարկելով աղոթքի
արտաքին ձևերը միայն:

Եթե աղոթք ցուցադրելու համար ծնկի ե-
կողմների և ձեռքերը բարձրացնողների վարձը
մարդկային մակերեսային զնահատանքն է
կամ գիտակից անձերի արգահատանքը, ի՞նչ
պիտի լինի նրանց վարձը, ո՛վ Տեր, ովքեր, գի-
տես, որ հաճախ աղոթարան են գալիս իրենց
կամ արդուզարդը ցուցադրելու համար...

Հիսուսն իր հետևորդներին զգուշացնում
է նաև աղոթքի մեկ ուրիշ սխալ ձևից:

«Աղոթք անելիս, - ասում է Նա, - շատախոս մի՛
լիմեք ինչպես ճեթամուսները, որովհետև արանք կարծում

եմ, թե իրենց շատ խոսքերի պատճառով լսելի կլինեն: Արդ, նրանց չմամսվե՞ք, որովհետև ձեր Հայրը գիտի, թե ինչ է ձեզ պետք, և ավազան որ դուք Նրանից մի բան ուզեք» (Մատթ. 9 7-8):

Այս կետի վերաբերյալ լուրջ և այժմեական հարց է առաջանում: Հավանաբար իրենց առանձնական աղոթքի մեջ «չատ խոսողներ» չեն մնացել, սակայն նույնը չենք կարող ասել հավաքական աղոթքի համար: Տարակույսից վեր է, որ մեր այժմեական պաշտամունքները չափազանց երկար են:

Մեր հանդիսավոր կամ տոնական օրերի ժամերգությունները, ս. Պատարագով միատեղ, երեք կամ չորս ժամից պակաս չեն տևում: Մեծ տոներին հասնում և անցնում են հինգ ժամի սահմանը: Ուրեմն, արդյո՞ք մեր արածն էլ շատախոսությունն է...

Չաճապարենք, սակայն, դրական կամ ժխտական եզրակացությունների հանգել և վճիռներ արձակել: Ընդհանուր մի ակնարկ նետենք խնդրի զանազան երեսներին:

Նախ չմոռանանք, որ Հիսուսի նկատողությունն առանձնական աղոթքի մասին է: Ընդդեմ փարիսեցիական այն սովորության, որով նրանք «պատրվակներով երկարում են աղոթ-

քը», այսինքն՝ Աստուծոց զանազան պարգևները էին խնդրում, որովհետև դրանց պետքն ունեին, որպեսզի դրանք զանազան բարի նպատակների համար գործածեն... Եվ այսպես՝ որովհետևների և որպեսզիների անհատնում պատրվակներով ոչ միայն աղոթքն իր վերջին չէր բերվում, այլ նաև ոգուց պարզվում էր և, ի վերջո, նպատակին չէր ծառայում: Սրանից բացի, պատրվակներով երկարացված այս աղոթքով անուղղակիորեն և անզիտակցաբար Աստուծուն անգետի տեղ դնելու ամբարշտությունն էր գործվում, որպես թե՛ Նա լուր չուներ երկրի կամ աղոթողի ներաշխարհի անցուղարձից, և, հետևաբար, փարիսեցին պետք էր զգուշ դրանք պատճառաբանված բացատրությամբ Աստուծուն հիշեցնելու: Հետևաբար, Հիսուսի դատապարտածը այս դատարկ, եսասեր ու տգետ շատախոսությունն է, որն անպատճառ նույնը չէ ժամերով վերացած ու տարված աղոթելու հետ, ինչը կարող է «հոգով և ճշմարտությամբ» լինել: Պետք է հիշել, որ Հիսուսն էլ, պատահել է,*

* Ղուկ. Ի 47: Սա բառացի թարգմանությունն է Ավետարանի գրաբար թարգմանության («պատճառաբան (պատրվակներով) երկարեմ գաղօթս»):

երբեմն ժամերով աղոթել է. «Լեռ բարձրացավ ա-
ղոթելու և ամբողջ գիշերն անցկացրեց Աստծուն աղոթե-
լով» (Ղուկ. 9: 12): Պատահել է նաև, որ երբ Պողոս
առաքյալը կատարել է հացի բեկանման պաշ-
տամունքը, այսինքն՝ առաքելական ժամա-
նակներին հատուկ ս. Պատարագի խորհուր-
դը, «խոսքը երկարեց մինչև կեսգիշեր» (Գործք Ի 7), այ-
սինքն՝ պաշտամունքը և նրա խոսքը երկարել
են մինչև կեսգիշեր: Այնպես որ, այս երկուսը,
այսինքն՝ աղոթքի ընթացքում «շատախոս լինե-
լը» և երկար ժամեր տարված աղոթելը, ան-
պատճառ նույնը չեն:

Մյուս կողմից, մեր ժամերգություններն, ա-
ռանձին առանձին վերցրած՝ Գիշերային, Ա-
ռավոտյան, Արևագալի, Երեկոյան և այլն, եր-
կար չեն: Ոչ մեկը մի ժամից ավելի չի տևում,
մի քանիսը կես ժամ էլ չեն տևում: Սրանք
միասին կատարելն է, որ ժամերգության եր-
կարացման պատճառ է դառնում: Պետք է
նաև զիտենալ, որ այս ժամերգությունները
ստեղծված են այնպիսի մարդկանց կողմից և
այնպիսի մարդկանց համար, ում գրեթե միակ
նպատակը «ամեն ժամ» (Ղուկ. ԻԱ, 36) աղոթելն
էր, այսինքն՝ ստեղծված են կրոնավորների
կողմից՝ հատկապես կրոնավորների կամ վա-

նականների համար, ովքեր Եկեղեցու աղոթող
բերաններն էին: Օրական յոթ կամ ինն ան-
գամ աղոթելու վանական սովորությունը ժա-
մանակի ընթացքում կամաց-կամաց անցավ
նաև հասարակ հավատացյալներին, նրանց
չըջանում, սակայն, բնականաբար, օրական
յոթ կամ ինն անջատ ժամերգությունների
կատարումն անհնար եղավ, ուստի դրանք ի-
րար միացվեցին և կազմվեցին այսօրվա բա-
ղադրյալ ժամերգությունները: Բացի սրանից,
մեր ժամերգությունները կարգավորվեցին
այնպիսի ժամանակահատվածներում և այն-
պիսի հավատացյալների համար, ում ամենօր-
յա կյանքում աղոթքը կարևոր տեղ էր զբա-
վում, և ովքեր իրենց առօրյա աշխատանքից
ու աղոթքից զատ շատ քիչ բան ունեին անե-
լու և իրենց ժամանակը դրան հատկացնելու:
Ժամերով աղոթելը նրանց ոչ միայն տաղ-
տուկ չէր պատճառում, այլ մինչև իսկ հոգե-
կան պահանջ և վայելք էր:

Ժամանակները փոխվեցին՝ շատ քիչ բան
փոխելով հազար կամ ավելի տարիներ առաջ
կազմավորված մեր ժամակարգությունից:
Ներմուծված գլխավոր փոփոխությունը ե-
ղավ բազմաձայն գործիքավորված երգեցո-

ղուծյունը, հատկապես ս. Պատարագի, որն ինչքան էլ գրավիչ լինի, մյուս կողմից՝ գրեթե կրկնապատկեց նրա երգեցողության տևողությունը: Ս. Պատարագի միաձայն չափավոր երգեցողությունը մի ժամից ավելի չի տևում: Ուստի, եթե մեր ներկա պաշտամունքի վիճակը, հատկապես կիրակնօրյա հանդիսավոր ժամապաշտությունը, ակնկալվածից ավելի երկար է տևում, և երբեմն այդ պատճառով պահանջված չափով չի ծառայում իր նվիրական նպատակին, մեղավորը ոչ պաշտամունքն է և ոչ էլ այն ստեղծող սրբազան հայրերը, այլ այն ավանդապահներն ու կիրարկողները, ովքեր, նախ, վանքերում զանազան ժամերի կատարվող ժամերգություններն իրար կցելով համադրել և փոխադրել են գյուղերի ու քաղաքների եկեղեցիներ և, երկրորդ, չեն կարողացել կիրարկվող բարդ ու բաղադրյալ ժամերգությունը մի կերպ հաստեցնել փոխվող ժամանակների հետ: Կաթոլիկ եկեղեցին ստեղծել է կես ժամանոց «լուռ պատարագը»՝ առանց ժամերգության, և դա՝ օրը մի քանի անգամ, որպեսզի ցանկացողն իր ուզած ժամին կարողանա գալ ու ս. Պատարագին մասնակցելու իր առաջնահերթ

կրոնական պարտականությունը կատարած լինելու ներքին բավարարություն ունենալ: Իսկ բողոքականությունը, մյուս կողմից, իրեն ձերբազատել է «կանոնականացված» պաշտամունքի պարտադրությունից և որդեգրել ազատ աղոթաժողովներ կազմելու կարգը, երբ երգվում են ցանկացած երգերը՝ ցանկացած թվով, ցանկացած ավետարանական հատված կարդացվում է ցանկացած կարճուժյամբ և քարոզի ցանկացած նյութը ընտրվում ու խոսվում է ցանկացած երկարությունամբ: Սրանք հիշելով, չենք ուզում ասել, որ մեկ կամ մյուս կարգը որդեգրենք, քավ լինի: Այլ մատնանշում ենք այս կամ այն եկեղեցում առկա իրողությունները, երբ ժամանակների պահանջին համաքայլ զնալու բացահայտ միջոցներ են ձեռք առնվել՝ հետևելով ավետարանական այն սկզբունքին, թե «Ծաբաթը եղավ մարդու համար և ոչ մարդը՝ շաբաթի» (Մարկ. Բ 27):

Այս հարցի մեջ ավելի խորամուկս լինելը մեր նպատակից չեղում կլինի, քանի որ մեր առաջադրանքը լուկ Մեծ պահքի կիրակիների խորհուրդի շուրջ ընդհանուր խորհրդածություններ անելն է: Հարցի կապակցու-

Թյամբ միայն կարող ենք ասել, որ ամբարշտուկություն կլինի մեր ժամերգությունները «հեթանոսական շատախոսություն» կոչել: Բայց դրանք այդ վտանգին են ենթարկվում, եթե լուր մեքենայաբար ենք կատարում և թուլակաբար ասում, առանց մեր միտքը և հոգին ընկերացնելու այն կենսատու ոգուն ու իմաստին, որ կա յուրաքանչյուր աղոթքում և յուրաքանչյուր շարականի գրեթե ամեն տողում:

Ինչպես պետք է աղոթել

Ավետարանում այս մասին էլ բացահայտ թելադրանքներ կան: Նախ՝ աղոթքը պետք է մարդկանց հետ հաշտված հոգեվիճակով լինի: «Եթե սեղանի վրա քո ընծան մատուցելու լինես, - ասում է Հիսուսը, - և այնտեղ հիշես, թե քո եղբայրը քո դեմ մի ոխ ունի, քո ընծան թո՛ղ սեղանի առաջ և գնա՛ գնախ հաշտվի՛ր քո եղբոր հետ և ապա ե՛կ քո ընծան մատուցի՛ր» (Մատթ. Ե 23-24): «Ընծա մատուցելը» հին հրեաների համար այն էր, ինչ այսօր մեզ համար «ս. Պատարագ մատուցելը» կամ որևէ պաշտամունքի մասնակցելն է: Բացի այս, երբ մեր Տերը «Հայր մեր»-ն է սովորեցնում, հատկապես ծանրանում է նրա «թող մեզ մեր

պարտքերը, ինչպես և մենք ենք թողնում մեր պարտապաններին» խոսքի վրա: «Եթե դուք մարդկանց ներքև նրանց հանցանքները, - ավելացնում է Հիսուսը, - ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ կների: Իսկ եթե դուք մարդկանց չներք իրենց հանցանքները, ձեր Հայրն էլ ձե՛զ չի ների ձեր հանցանքները» (Մատթ. Զ 14-15):

Աղոթքը պետք է նաև «հոգով և ճշմարտությունով կատարել»: Մի անգամ Հիսուսն ասաց. «Աստված Հոգի է և, հետևաբար, Նրան պետք է հոգով ու ճշմարտությամբ պաշտել» (Հովհ. Գ 24): Սա Հիսուսի անմատչելի և անմրցելի խոսքերից մեկն է, որը մի նոր դարաշրջան է բացում կրոնի և պաշտամունքի հասկացության մեջ: Այս խոսքով պաշտամունքը հանկարծ մի նոր և բարձրագույն մակարդակի վրա է դրվում, որին, դժբախտաբար, քչերն են կարող բարձրանալ, ինչպես քչերն են կարող լիովին իրագործել Հիսուսի բարոյական ու ընկերային ուսուցումները:

Հոգին հակադրված է նյութին, երկունս էլ՝ նյութը և հոգին, իրական եմ, տարբերությունն այն է, որ մեկը ենթակա է մեր զգայարաններին, իսկ մյուսն ըմբռնելի և հասանելի է մեր բարձրագույն կարողություններով, իմացա-

կանությամբ ու երևակայությամբ: Կրօնը կամ աղոթքը, որոնց նպատակը մեր առջև հոգեկան աշխարհի դռները բանալն է, դժբախտաբար, երբեմն կարող են ճիշտ հակառակ դերը կատարել. դառնում են վարագույր մարդու և Աստծո միջև: Կան հավատացյալներ, ովքեր եկեղեցասեր են, հետաքրքրվում են եկեղեցու ծեսերով և լավ գիտեն դրանք, մինչև իսկ սրբագրում են պաշտամունքը կատարողներին, սակայն այնքան են տարված պաշտամունքի տառով և գիտությամբ, որ Աստծո հետ «հոգով ու ճշմարտությամբ» հաղորդակցության մեջ չեն կարող մտնել: Աստվածաբաններ կան, ովքեր այնքան շատ բան գիտեն Աստծո և Քրիստոսի մասին, որ իրենց ամբարած չոր գիտությունը արգելք է դառնում իրական Քրիստոսին և կյանք ունեցող ու կենսատու Աստծուն ճանաչելու:

Մարդու պարագայում գործածվելիս «հոգին» նշանակում է նրա բարձրագույն էությունը, մարդու անձը, ինչ էլ այն իրականում լինի: «Հոգով պաշտել», ուրեմն, նշանակում է պաշտամունքի ընթացքում մարդու բարձրագույն էության, այսինքն՝ անձի ներկայությունը: Մարդն անձնապես, այսինքն՝ իր խո-

րագույն գիտակցությամբ, ներկա պետք է լինի պաշտամունքին և, թափանցելով ծեսերի ու արարողությունների իմաստի, բառերի և եղանակների միջով, Աստծո ներկայությանը բարձրանա, Ով հատկապես այդ պահին անկա է աղոթավայրում:

Իսկ ի՞նչ է նշանակում «ճշմարտությամբ պաշտել»: Ըճշմարտությունը նախ հակադրված է ստին, կեղծին և չեղածին և, հետևաբար, նույնացած «իրականության» հետ՝ իրերի հոգևոր մարզում: «Ըճշմարտությունը» իրերի բարոյական և հոգեկան մարզերում նույնն է: Աղոթքը կամ պաշտամունքը հիմնված պետք է լինի Աստծո «իրականության» վրա, քանզի աղոթքի և պաշտամունքի նպատակը մարդուն աստվածային «իրականության» հետ շփման և հաղորդակցության մեջ դնելն է: Իր վերոհիշյալ վսեմ խոսքը Հիսուսը եզրակացության է բերում. «Աստված այսպիսի պաշտողների է փնտրում» (Հովհ. Գ. 23) Ինքն իրեն նրանց հայտնի դարձնելու համար: Ուրեմն, պարտավոր ենք մեր գերագույն կարողությունները՝ միտքը և հոգին, ի գործ դնել իրագործելու համար աղոթքի գերագույն նպատակը՝ բարձրանալ Նրա «իրական» ներկայությանը, հո-

գով «զգալի» և ոչ «բարոյական» կամ «խորհրդանշական» ներկայութիւնը:

Աղոթել հարատւ, ամեն ժամ և անձամբույթ

Այս կետում մտնում ենք այն առակի կալվածքից ներս, որից կիրակին վերցրել է իր անունը:

Մի քաղաքում կար մի դատավոր: Արևելքի գրեթե բոլոր դատավորների նման «ոչ Աստուծոց էր վախենում, ոչ մարդկանցից ամաչում»: Նույն քաղաքում կար նաև մի այրի կին, աղքատ՝ Արևելքի բոլոր այրիների նման: Այս կինը զոհ էր գնացել մի անիրավութիւն, ուստի գրեթե ամեն օր գալիս էր դատավորի դուռը՝ վերջինի քարացած խղճմտանքը բախելու: Անօգուտ: Դատավոր ասված աղվեսը գիտեր, որ խեղճ կինը ուտվող հավ չէ. ոչ կարող է կաշառք տալ, ոչ էլ դատարանի «ծախսերը» հոգալ: Սպասավորներին հրամայում էր դուրս նետել նրան: Սակայն կինն ուներ ազդու մի զենք, որով անդադար ուժբակոծում էր դատարանը և դատավորի գլուխը: Դա հարատւութիւնն էր: Բարե-

բախտաբար, սա մի զենք է, որը ոչ ոք մարդու ձեռքից չի կարող առնել, եթե ինքն այն չհանձնի, և կինը վճռել էր ձեռքից բաց չթողնել այդ զենքը: Եվ դատավորը, որ լավ գիտեր սովորած կամ ունեցած ողջամտութիւնն իր անձի օգուտի համար գործածել, ի վերջո, ինքն իրեն ասաց. «Թեև Աստուծոց չեմ վախենում և մարդկանցից էլ չեմ ամաչում», գոնե օձիքս այս փորձանքից ազատելու համար այրու դատը տեսնեմ, որպեսզի այստեղ գալով՝ իր թախանձանքներով ինձ տաղտուկ չպատճառի: Եվ առակն այստեղ վերջանում է:

Անգամ ասելն ավելորդ է, որ դատավորն Աստուծուն չի ներկայացնում: Առակները կենտրոնական մի պատգամ ունեն, որը տալիս են թափանցիկ ձևով, հետևաբար, պատմութիւնն յուրաքանչյուր դերակատարի մեջ կամ դրվագում ինչ-որ իմաստ դնելը նշանակում է մտնել այլաբանական մեկնաբանութիւնների բավիղները, ինչը, որքան էլ հետաքրքրական կողմեր ունենա, հաճախ կենտրոնական գաղափարը աչքից վրիպեցնելու վտանգին է ծառայում: Դատավորը, նախորդ կիրակիի առակում հիշված տնտեսի նման, «այս աշխարհի որդի» է, ով գիտի իր

գործերը անձնական շահերի համաձայն դասավորել: Ըստ այսմ, անիրավ այս դատավորը նախապատվութուն տալիս էր «հուսալի» դատերին, որոնցից կարող էր դրամ մտնել նրա գրպանը: Նրա ձեռքում դատավորութունը մի միջոց էր դրամ շահելու և ոչ՝ արդարութուն իրականացնելու: Այս առումով անիրավ դատավորը Աստծո հակադիրն է: Այս առակը ցանկանում է ասել, որ եթե Աստծո հակադիրն անգամ ի վերջո զիջեց ինչ-որ այրու թախանձանքներին, Աստված, Ով բարության մարմնացումն է, չի՞ լսի ձեր աղոթքները:

Կյանքի դառը փորձառությունները, սակայն, տարբեր են առակների սփոփարար թելադրանքներից: Տարակույսից վեր է, որ արդարև կան բազմաթիվ երջանիկ հավատացյալներ, ովքեր այս կամ այն ձևով իրենց աղոթքների պատասխանը ստացել են: Սակայն, թերևս չենք սխալվի, եթե ասենք, որ ավելի շատ է թիվը այն աղոթողների, ովքեր անպատասխան են մնացել՝ հակառակ իրենց խնդրանքի արդարության և բարոյական ու հոգևոր օգտակարության (ըստ իրենց անկեղծ համոզումի): Սա կրոնի և աղոթքի ամենա-

դժվար լուծելի խնդիրներից մեկն է. ինչո՞ւմ են աղոթքները երբեմն չեն «լավում»:

Անշուշտ, հաշվից դուրս են մնում այն «աղոթքները» կամ խնդրանքները, որոնք հաճույքի կամ բախտախաղերում հաջողելու և նման այլ բազմաթիվ անլուրջ նպատակների համար են: Մեր հարցը խորապես և բարոյապես ընդգրկում է մարդկային ու հոգեկան պահանջների հանդեպ երկնքի երբեմն կարծեցյալ կամ իրական լուրթյունը:

Առաքյալներից մեկն իրեն հատուկ կտրուկ և մասամբ ստոիկյան պարզությամբ փորձում է այս հարցին պատասխանել. «Խնդրում եք և չեք ստանում, որովհետև չարամտորեն եք խնդրում» (Հակ. Գ 3): «Չարամտորեն խնդրել» նշանակում է Աստծուն դիմել չար, եսասիրական ու աշխարհիկ նպատակներով: Բնականաբար, չի կարելի դրանց պատասխան սպասել բարի, մարդասեր և հոգի Աստծուց: Բայց ի՞նչ ասել այն աղոթքների մասին, որոնք իսկապես արդար և բարի դատաստանների, հիվանդների համար են, ովքեր կարող էին և պետք է դեռ երկար ապրեին, և, վերջապես, տագնապալի մի կացության մասին, որտեղ դրա հպատակը մաս ու բաժին չունի, այլ միջավայրը և մարդ-

կային չարությունն են, որ այն մեջտեղ են բերել: Ինչպե՞ս կարելի է շարունակել աղոթել, երբ Հորի վիճակին ես մատնված՝ հարստությունդ փչված է, զավակներդ կորած, բարեկամներդ՝ թշնամի դարձած, առողջությունդ՝ քայքայված, ընտանիքդ՝ քանդված: Այս վիճակում Աստծուն չուրանալը, չմերժելն ու չանիծելն այլևս անցնում է գրեթե գերմարդկային գործերի կարգը:

Հակառակ այս բոլորին, ամբողջ Նոր Կտակարանը ծայրից ծայր հաստատում է աղոթքի մեջ հարատևության անհրաժեշտությունը, մինչև խի նեղ և անկարելի նկատված կացություններում: Հիսուսը Գեթսեմանիում աղոթում էր, որպեսզի Իրեն մատուցվող չարանքների «բաժակը հեռու անցնի» (Մատթ. ԻԶ 39), բայց «բաժակը» չհեռացավ Նրանից: Աղոթում էր, երբ մուրճի հարվածներն իջնում էին խաչին տարածված Նրա ափերը մխրճված գամերի գլխին. «Հայր, Աեդիդ դուստր, որովհետև չգիտեմ՝ ինչ եմ անում» (Ղուկ. ԻԳ 34): Երբ Ֆիզիկական կյանքը քամվում էր ձեռքերին ու քունքերին բացված արյան աղբյուրներից և մարմնական տառապանքը հասել էր իր գագաթնակետին, աղոթքն է, որ դարձյալ գալիս է Նրա

չուրթերին՝ «Ինչո՞ւ թողեցիր ինձ» (Մատթ. ԻԷ 46): Նրա վերջին շունչը հաղթանակն է աղոթքի և Իր կյանքի. «Հայր, քո ձեռքն եմ ավանդում իմ հոգին» (Ղուկ. ԻԳ 46):

Նրա անմիջական հետևորդներից Ստեփանոսը, գլխին տեղացող քարերի տեղատարափի տակ կարողանում էր աղոթել. «Տեր, սա մեզք մի՛ համարիր դրանց» (Գործք Է 59):

Պողոս առաքյալը կարող էր բանտերն աղոթավայրի վերածել: Նույնը Ղևոնդյաններն արեցին իրենց արգելարանի խոնավ խավարում... Երկար է հոգևոր հերոսների շարքը, ովքեր կենսավորված էին Մեծ Կենսատուից, և ովքեր տազնապալի կացությունները դիմավորեցին բարձր ճակատով, լուսեղեն տրամադրություններ ու աղոթքով: Քանզի նրանց համար աղոթքը լուկ աղերսանք կամ խընդրանք չէր, այլ հաղորդակցության միջոց գործության, ուժի, իմաստության ու հոգևոր կյանքի Աղբյուրի՝ Աստծո հետ, և այդ հարաբերության ուժգնությունը կամ տկարությունը, մշտական կապը կամ խզումը երբեք կախում չունեին նրանց աղոթքների ընդունելի լինելուց կամ մերժվելուց, կամ դրանց ընդունման հապաղելուց:

Աստված երբեմն ուշացնում է մեր խնդրանքներին ընթացք տալը, որպեսզի ժամանակը մեր մտածումները մաքրի դրանց պարունակած զուտ մարդկային տարրերից, եսասիրությունից, շահասիրությունից ու փառասիրությունից: Չի՞ պատահել, որ մենք որոշ ժամանակ հետո բոլորովին տարբեր լույսի տակ տեսնենք այն նույն խնդրանքը, որը ստացած չլինելու համար սրտնեղել էինք Աստծուց:

Աստված մեր աղոթքներին պատասխանելը հաճախ ուշացնում է, որպեսզի մեր առողջ ու բարի փափագներն ավելի զորանան և արմատ բռնեն մեր մեջ, իսկ անօգուտները և վատառողջները՝ մշուշի նման աղոտանան ու անհայտանան:

Երբեմն էլ ուշացնում է՝ փորձելու համար մեր հարատևությունը և հավատքի ուժգնությունը: Մեր մեջ տոկալու, դիմանալու ու համբերելու սովորություն կերտելն անհրաժեշտ է ուժեղ կամք և հաստատ նկարագիր կազմելու համար: Համբերությունը հավատքի փորձաքարն է: Եվ հավատքն այնքան լայնորեն է տարածվում երկրի վրա, որքան մարդիկ հարատև են Աստծո հանդեպ ունեցած ի-

րենց վստահության մեջ՝ հակառակ բոլոր վհատեցնող կացությունների:

Աստված ուշացնում է մեր աղոթքների կատարումը, որպեսզի, ի վերջո, կարողանանք տեսնել մեր որոշ խնդրանքների անհեթեթ և անհիմն, իսկ որոշների էլ՝ մեր իսկ ձեռքով իրականանալի լինելը: Հոգու, մտքի և աշխարհի խաղաղությունը որքան Աստծո պարգևը, նույնքան և ավելի մարդու գործն է: Որքան էլ մեծ փափագով աղոթենք, պատերազմները, սակայն, չեն դադարի, որովհետև դրանք մարդու ստեղծածներն են և մարդկանց ձեռքով էլ կարող են վերանալ: Եթե մարդը կամենա, կարող է: Եվ Աստված մարդու կամքին հակառակ ոչ մի շնորհ չի պարգևում:

Կրքերի և արտաքին բռնությունների դեմ անզոր մարդկությունը պետք է շարունակ բախի Աստծո գուլթի ու ամենակարողության դռները՝ այդ բռնությունների ու անօրենությունների ձեռքից օրերից մի օր ազատվելու հույսով ու հավատով: Աստված հաճախ միայն «համբերատար է» (Ռմմտ. Սաղմ. ԾԲ 8, Բ Պետ. Գ 9), որպեսզի դիմացի, անարդար կողմն էլ դարձի դա և շտկի իր իսկ ստեղծած թնջուկը, «որովհետև Աստված չի կամենում մեղա-

վորի մահը, այլ նրա՝ չար ճանապարհից ետ դառնալը և ապրելը» (հմմտ. Եզեկ. ԺԸ 32): Եվ այս պատճառով Աստված չի պատասխանում մեր աղոթքներին այնքան շուտ ու այն եղանակով, որը մենք ենք փափագում: Առակի բացահայտ թելադրանքը «չձանձրանալն» է: Եթե անաստված ու անպատկառ դատավորը տեղի է տալիս այրի կնոջ հարատև թախանձանքներին, ապա Աստված, Ով բարոլթյան և արդարոլթյան մարմնացումն է, ի վերջո, չպիտի՞ լսի իր ծառաներին, ովքեր գիշեր-ցերեկ Նրան են կանչում:

Ուրեմն, մամոնայի, մեզ ընծայված կյանքի, ժամանակի և պատեհոլթյունների բարվոք ու հավատարիմ տնօրհանման հետ հարատև և թախանձագին աղոթքը հիմնական պայմաններից է այն հոգեվիճակն ու դիրքը պահելու, որին տիրացել է գղջացող, ապաշխարող և դարձի եկող մարդը: Առակի եզրակացնող մասի վերջին տողը կնքում է այդ կիրակիի խորհուրդը՝ մատնանշելով այն էական պայմանը, առանց որի աղոթքը երբեք իր նպատակին չի կարող ծառայել: Այդ էական պայմանը հավատքն է: Նույն այդ եզրակացնող նախադասոլթյունը մյուս կողմից հաջորդ կիրա-

կիի խորհուրդի և անվան վարագույրն է բացում: Եվ այդ եզրափակիչ նախադասոլթյունն է. «Իսկ երբ Մարդու Որդին գա, արդյոք երկրի վրա հավատ կգտնի՞» (Ղուկ. ԺԸ 8):

Շարական Դատավորի կիրակիի

Որ պատուիրան ճշմարտութեան ամանդեցեր Եկեղեցույ Քում արքոյ, Քրիստոս, անսահման ժամանակաւ աղօթել միշտ առ Աստուած հոգուով և մտօք:

Որ զբան քո օրինաց հաստատեցեր գործով՝ մեզ օրինակ հանելով զգիշերն ի գլուխս յաղօթս Աստուծոյ բնութեամբ մերով տնօրհնաբար, Որում կրկնի ծունր ամե՛նայն:

Վասն որոյ և մեք պաղատեսցուք առ Քեզ, Քրիստոս, շնորհեա մեզ յամե՛նայն ժամ յի՛նել քեզ յանդիման մաքուր աղօթիք ըստ անմարմնոցն, որ յերկինս:

Աղաչանօք Աստուածածնի՛ն՝ անապական Քում Ծնողին, զիմանալի զաչս սրտից մերոց բացցես ողորմութեամբ՝ հայիլ ի լոյս Քո, Քրիստոս:

Թարգմանոլթյուն.

Ծշմարիտ պատվիրանն ավանդեցիր Եկեղեցույ, Քրիստոս, թե միշտ պետք է անսահման ժամանակով հոգով և մտքով աղոթել Աստծուն:

Օրենքիդ խոսքը գործովդ հաստատեցիր, երբ ամբողջ
գիշերն Աստծուն աղոթելով անցկացրիր՝ իբրև մեզ
օրինակ, երբ հատուկ տնօրինությամբ մեր բնությունն
էիր առել, Որիդ ստաջ իջնում են բոլոր ծնկները:
Ուստի, մենք էլ Քեզ ենք պաղատում, Քրիստո՛ս, շնոր-
հի՛ր, որ ամբողջ ժամանակ Քեզ մաքուր աղոթքով
աներկայանանք՝ երկնքի անմարմին էակների մեծան:
Աստվածածնի՛՝ անապական Քո Ծնողի աղաչանքով,
Քո ողորմածությամբ բա՛ց մեր հոգու աչքերը, Քրիս-
տոս, որպեսզի կարողանանք նայել Քո լույսին:



2. Գալստյան կիրակի

ԳԼՈՒԽ Թ

Քրիստոսի երկրորդ գալստյան խորհուրդը

«Բայց ձեզ ասում եմ, որ այսուհետև
իմձ այլևս չեք տեսնի, մինչև որ ասեք՝
օրհնյա՛լ է Նա, որ գալիս է Տիրոջ ամուսնով»:
Մատթ. ԻԳ.39

Մեծ պահքի կերակրիներին ոսկե շղթայի
վերջին օղակի համար ավելի պատ-
շաճ և ավելի իմաստալից անուն չէր կարելի
երևակայել: Կիրակիի խորհուրդը մեծանում
և համապարփակ նշանակութուն է ստանում
ներանով, որ այն նվիրված է Հիսուսի ոչ միայն
երկրորդ, այլ նաև Նրա առաջին ԳԱԼՍՏՅԱՆԸ,
ինչպես հաստատում է օրվա շարականը.

Որ գխորհուրդ Քո գալստեանդ
Յառաջագոյն գուշակեցեր,
Մարգարէիքն Իսրայէլի,
Զորս ընտրեցեր յետ Մովսէսի.
Որք խօսեցան Հոգւով Սրբով,

Բազմապատիկ օրինակօք:

Տո՛ւր մեզ, Փրկիչ, ողորմութիւն,

Եւ զմեղաց զթողութիւն:

Ի մերձեւալ ամաց վերջին,

Զոր տեսանողքն ծանուցին,

Զհասանիլ մեր Փրկողիդ

Առ ի վախճան ժամանակի.

Երևեցար ի մէջ մարդկան

Զգեցեալ զկերպ ծառայական:

Տո՛ւր մեզ, Փրկիչ, ողորմութիւն,

Եւ զմեղաց զթողութիւն:

Ի վեցերորդ ատուր զԱդամ

Ստեղծեր ի տիպ Քո տիրական,

Որ ոչ պահեալ զպատուիրանն

Մերկացաւ զպատմունճանն:

Իսկ նոր Ադամդ ի վեց դարուն

Այց արարեր կորուսելոյն:

Տո՛ւր մեզ, Փրկիչ, ողորմութիւն,

Եւ զմեղաց զթողութիւն:

Թարգմանու թյուն.

Քո զալստյան մեծ խորհուրդը

Դու նախապես հայտնեցիր

Իսրայելի մարգարեներին,

Ում ընտրեցիր Մովսէսից հետո,

Ովքեր Սուրբ Հոգով խոսեցին

Բազմապիսի պատգամներով:

Տո՛ւր մեզ, Փրկիչ, ողորմութիւն

Եվ մեղքերին մեր՝ թողութիւն:

Երբ մոտեցան այն տարիները,

Որ կանխատեսները ծանուցեցին,

Հասար մեզ, ո՛վ մեր Փրկիչ՝

Ժամանակները լրացնող:

Երևացիր մարդկանց մեջ,

Ծառաներիդ հետ ապրեցիր:

Վեցերորդ օրը ստեղծեցիր

Քո պատկերով հին Ադամին,

Ով պատվիրանը չպահեց

Ու կորցրեց պատմունճանը:

Իսկ նոր Ադամդ վեցերորդ դարում

Այցելեցիր կորուսչալին:

***Ինչպես բացահայտ երևում է, շարականի
այս առաջին պատկերն ամբողջութեամբ նվիր-
ված է Հիսուսի Առաջին Գալստյանը: Շարա-
կանի երկրորդ պատկերում հանդիպում ենք
նաև Քրիստոսի Երկրորդ Գալստյան ակնար-
կութեանը:***

Յնձամք և մեք ծառք անտառի
Ընդ գալուստ Տեառնդ կրկնակի:

.....
Այժմ յուսով գուարճանալ
Եւ յԵրկրորդին ընդ Քեզ ցնծալ:

*(տե՛ս գրվածքիս վերջում ամբողջական
բնագիրը և թարգմանությունը):*

Որպէս ծանոթություն ավելացնենք, որ ուրիշ եկեղեցիներ էլ ունեն «Գալստյան» անունով կիրակի, որը, սակայն, նրանց տոնացույցում այլ տեղում է դրված: Արեւմտյան Եկեղեցու համար այդ օրն ընկնում է Ծննդյան տոնը կանխող 4-րդ կիրակիին, իսկ Օրթոդոքս Եկեղեցու համար՝ Ծննդից առաջ 7-րդ կիրակիին, ինչը համապատասխանում է մեր «Հիանակաց» կիրակիին, որը Ծննդից 50 օր առաջ է գալիս:

Երբ Քրիստոսի Երկրորդ Գալստյան մասին խորհրդածություն ենք ձեռնարկում, գիտակցում ենք, որ շատ դժվար նյութի մեջ ենք մտնում: Նյութ, որը, նախ, միգամածային է, նյութ, որը դուրս է ժամանակի և միջոցի մեզ ծանոթ ըմբռնումներից: Մյուս կողմից, նյութ, որը սխալ է հասկացվել մինչև իսկ Քրիստոսին ժամանակակից սերնդի կողմից: Վերջա-

պէս, նյութ, որն ամենից ավելի է գայթակղության քար դարձել բոլոր նրանց համար, ովքեր հանդգնորեն են մոտեցել դրան: Ոմանք բողոքովին են այն մերժել՝ ընդունելով հանդերձ Ավետարանի մնացյալ ուսուցումները և պահելով քրիստոնյա անունը: Ոմանք միամիտ դյուրահավատությամբ ճշտել են Երկրորդ Գալստյան թվականները և պարտվել իրենց հաշիվները սխալ դուրս գալու պատճառով: Քրիստոնյա քարոզիչների և հավատացյալների մեծագույն մասը նախընտրել է լուռ մնալ այս մասին՝ այն ոչ մերժել, ոչ էլ, սակայն, քարոզել կարողանալով:

Արդարև, բարոյական նյութ է, որ կարողանաս զարկել կյանքի փորձաքարին: Պատմական դեպք էլ է, որ, հիմնվելով կատարված լուրջ պրպտումների և փաստերի վրա, կարողանաս մերժել կամ ընդունել: Ոչ էլ կիրարկելի խորհուրդ, որը չհասկանալով հանդերձ կիրարկես՝ Հաղորդության, Մկրտության նման: Ապագայի վրա բացված հայտնություն է... Եվ մենք՝ սովորական մարդիկս, արտոնված ենք անցյալով ու ներկայով զբաղվելու: Ապագայի տերն Աստված է:

Ուստի մենք ընտրեցինք ապահովագույնը՝

Ավետարանի ճանապարհը. ուրիշ կերպ արդեն չէինք կարող անել: Ուրեմն, մեր առաջադրանքն այս մասին Ավետարանի ասածները համառոտել և ցույց տալն է, մեր ժամանակների նյութը կիրարկելը՝ եզրակացնելու համար, որ ինչպես յուրաքանչյուր սերունդ, մենք էլ «ժամանակների լրումի» ճանապարհին ենք և ուղիղ գծով, մինչև իսկ գահավիժորեն, գնում ենք դեպի Քրիստոսի Երկրորդ Գալստյան արշավույթը:

Առաջին Գալուստը

Մեծ պահքի վերջին այս կիրակին «Գալստյան» կոչելով, եկեղեցին նախ հիշեցնում է Փրկչի Առաջին Գալուստը, այսինքն՝ մարդեղությունը, հավատացյալների մտքում թարմացնելու համար ավետարանական այն հիմնական ճշմարտությունը, թե մարդու վերականգնումը հնարավոր եղավ Քրիստոսի Առաջին Գալստյամբ, երբ Նա գանազան տնօրինություններ կատարեց, որոնցով մարդու հոգու փրկության կարելիությունը ստեղծվեց:

Հիսուսի Առաջին Գալուստը կատարվեց իբրև Ս. Գրքում խոստացված Մեսիայի հայտ-

նություն: Եվ արդարև, այս կիրակի ավետարանական ընթերցվածքն սկսվում է Հիսուսի մեսիական հանգամանքը հաստատելով: «Մեսիան» հին մարգարեների կողմից կանխատեսված և բոլորի կողմից ակնկալված Փրկիչն էր, Ով, ըստ Ավետարանի և, հետևաբար, քրիստոնեական հավատի, աշխարհ եկել և մարմնացել էր Հիսուսի անձում («Մեսիա» բառի հունարենը «Քրիստոս» է, որը թարգմանվում է «Օծյալ»): Կրոնական այս ճշմարտությունը Հիսուսն իր քարոզության սկզբնական շրջանում քողարկված պահեց, բայց վերջին շրջանում հարկավոր նկատեց խոսքով բացահայտել թե՛ աշակերտներին և թե՛ հրեա հանրությանը:

Մի օր Հիսուսը հարցրեց հրեաների կրոնական առաջնորդներին.

- Ի՞նչ է ձեր կարծիքը Մեսիայի մասին, ո՞ւմ որդին է:

Հարցը դյուրին էր, և գրեթե բոլորն անգիր գիտեին, ուստի պատասխանեցին.

- Դավթի:

- Սակայն ինչպե՞ս է, որ Դավիթը, Աստծո Հոգուց ներշնչված, Նրան հետևյալ սաղմոսում «Տեր» է կոչում. «Տերն իմ Տիրոջը (Մեսիա-

յիմ) ասաց. Գասիր իմ աջ կողմում, մինչև քո թշնամիներին ուրքերիդ համար պատվանդան դարձանք»: **Եթե Դավիթը Նրան Տեր է կոչում, - շարունակեց Հիսուսը, - ինչպե՞ս կարող է Նա նրա որդին լինել:**

Բոլորը մնացին պապանձված: Այդ ժամանակ Հիսուսը բացեց իր՝ բառացիորեն «օրհնյալ բերանը» և «վայերի» մի տեղատարափով տառացիորեն «լվաց» փարիսեցիների ու դպիրների դասակարգը՝ դուրս բերելով նրանց ներքին բրտացած տգիտությունն ու կեղծավորությունը (տե՛ս Մատթ. ԻԲ 41-ԻԳ): Իր այս տիրական ու բարոյական մտրակահարությունը Հիսուսը հաստատեց իր՝ ո՛վ և ինչ ո՛ւ աշխարհ եկած լինելը: Եկել էր ոչ միայն մարդկանց փրկարար ապաշխարանքի հրավիրելու, նրանց մտքերը և սրտերը լուսավորելու, այլ նաև անզիջող մեղավորներին դատապարտելու. «Դատելու համար եկա աշխարհ, որպեսզի չտեսնողները տեսնեն և տեսողները կուրանան»: **Փարիսեցիներից ոմանք, որ Նրա հետ էին, երբ այս լսեցին, ասացին.** «Մի՞թե մենք էլ ենք կույր»: **Հիսուսը պատասխանեց.** «Եթե կույր լիճեիք, հանցանք չէիք ունենա, բայց քանի որ ասում եք, թե տեսնում եք, դրանով ձեր մեղավոր լինելն էք հաստատում»:

տում» (հմմտ. Հովհ. Թ 39-41): **Օրվա ավետարանական երկար հատվածի** (Ղուկ. ԻԱ 5-38, Մատթ. ԻԲ 34-ԻԳ 39) **միայն վերջին նախադասությունը կարելի է Քրիստոսի Երկրորդ Գալստյան ակնարկ նկատել.** «Ձեզ ասում եմ, որ այսուհետև Իմ ալլևա չեք տեսնի, մինչև որ ասեք՝ օրհնյալ է Նա, Ով գալիս է Տիրոջ ամուսնով»:

Երկրորդ Գալուստը

Որ քրիստոնեական Եկեղեցին հավատում է Քրիստոսի Երկրորդ Գալստյանը, այս մասին, նախ, տարակույսի ոչ մի նշույլ չի թողնված Ավետարաններում, ուր երկար հատվածներ կան, որոնցում պատկերավոր ձևով նկարագրվում է, թե ինչ հանգամանքներում պետք է տեղի ունենա այդ Գալուստը: Երկրորդ՝ Պողոսի և մյուս առաքյալների թղթերը լի են այս մասին ակնարկներով, ուսուցումներով ու հորդորներով: **Ապա, վերջապես, այս հավատքը Եկեղեցին մտցրել է իր Հավատո հանգանակ.** «Գալուց է Գուլիմ մարմնով և փառք Հօր ի դատել գկեանդանիս և գմեռեալս»*: **Նախնական Եկե-**

* «Գալու է Գուլիմ մարմնով և Հոր փառքով՝ դատելու ողջերին և մեռյալներին»:

ղեցին հավատում էր, որ Հիսուսի Երկրորդ Գալուստը շատ չպիտի ուշանա: Մինչև իսկ աշակերտներն այնպես կարծեցին, որ Հիսուսի Երկրորդ Գալուստը Նրա Հարուժյամբ արդեն իսկ տեղի է ունեցել, ուստի հարցրեցին Հարուցյալին, երբ Նա տակավին իրենց հետ էր. «Տե՛ր, Մեսիական թագավորությունն ա՞յս ժամանակում պիտի վերահաստատես»: Հիսուսի պատասխանը ոչ միայն Նրան շրջապատող առաքյալների համար էր, այլ նաև բոլոր ժամանակների բոլոր քրիստոնյա սերունդների համար. «Ձեզ չի վերաբերում իմանալ այն ժամերը և ժամանակները, որոնք Հայրն իրեն է վերապահել: Սակայն դուք պիտի զորություն ստանաք, երբ Սուրբ Հոգին ձեզ վրա իջնի, և ինձ համար վկաներ պիտի լինեք Երուսաղեմում ու աշխարհի տարբեր ծայրերում» (Ռմմտ. Գործք Ա 6-8): Նույն գաղափարը Հիսուսը հայտնել էր նաև իր երկրավոր կյանքի ընթացքում: Ակնարկելով վերստին իր Գալուստը՝ ասել էր. «Այդ օրվա և ժամի սասիմ ոչ ոք չգիտի. ոչ երկնքի հրեշտակները, ոչ էլ Մարդու Որդին (ակնարկելով Իրեն), այլ միայն Հայրը» (Ռմմտ. Մատթ. ԻԴ 36):

Հակառակ այս հստակ հայտնությունը, բո-

լոր դարերում և բոլոր ժամանակներում գտնվել են մարդիկ և քրիստոնեական խմբակներ, որոնք ճշտել են Հիսուսի Երկրորդ Գալուստյան օրը և թվականը: Օրինակ՝ փրկչական 1000 թվականն այդպիսի եռուզեռի մի շրջան է եղել, և մարդիկ ահավոր անձկության են մատնվել Նրա վերադարձի ակնկալությունում:

19-րդ դարում մեջտեղ եկան հատկապես «Գալստական» (ադվենտիստ) կոչված աղանդավորները, ովքեր 1840-ական թվականներին տակնուվրա արեցին մարդկանց ներաշխարհը: Մինչև օրս էլ այս մարդկանց արմատը չի չորացել, ովքեր շեշտը դնում են Քրիստոսի Երկրորդ Գալուստյան վրա և խղճահար հոգիներին պահում հոգեկան տագնապի մեջ՝ շարունակ փողհարելով, թե «մոտ է» Տիրոջ Գալուստը:

Եկեղեցին արդարև հավատում է, թե օրերից մի օր Քրիստոսը «գալոց է նովին մարմնով և փառօք Հօր ի դատել զկենդանիս և զմեռեալս», այսինքն՝ պետք է գա և վերջ դնի ներկա կարգուսարքին և պետք է բացի փրկված մարդկություն հարուցյալ ու փառավորյալ կյանքի վարագույրը, սակայն ոչ ոք

չի կարող իմանալ Նրա վերըստին Գալստյան ստույգ թվականը: Հիսուսը զանազան պատկերներով բացատրում է իր Գալստյան հանկարծակիի թյունը: Փայլակի նման կլինի, որը հանկարծ տեսանելի կդառնա երկնքում: Կնամանվի գողի, որի ժամանակը ոչ ոք չի կարող իմանալ, հեռու աշխարհ գնացած տանտիրոջ, ով օրերից մի օր հանկարծ վերադառնում է, երբ ոչ ոք չի ակնկալում նրա վերադարձը (տե՛ս Մատթ. ԻԴ 27, Ղուկ. ԺԲ 39, 46, Մարկ. ԺԳ 34-36):

Երկրորդ Գալստյան նախանշանները

Թեև Հիսուսը չի ասում, թե երբ պետք է տեղի ունենա իր Գալուստը, բայց հաստատում է, թե ինչե՛ր պետք է պատահեն նախքան իր վերադարձը:

Հիսուսի Երկրորդ Գալուստից առաջ, ըստ Ավետարանի, բարոյական ու Ֆիզիկական տազնապի և կործանումի դեպքերի շարք կլինի:

Նախ կերևան «սուտ մարգարեներ», ովքեր կքարոզեն և կհայտարարեն, թե՝ «ես եմ Քրիստոսը և շատերին կմոլորեցնեն»: Նրանց թակար-

դից ազատվողները Քրիստոսի թշնամիներից կենթարկվեն հալածանքների. «Զեզ մեղույթյան պիտի մատնեն և պիտի սպանեն ձեզ... Անօրենության շատանալուց՝ շատերի սերը պիտի ցամաքի»: Երրորդ՝ պատերազմներ և պատերազմական պատրաստություններ կլինեն. «Ազգ ազգի դեմ պիտի ելնի... և պիտի լինեն համաճարակներ»: Եվ, վերջապես, երկնքի վիճակը կխանգարվի. «Արեգակը պիտի խավարի, և լուսինն իր լուսը չպիտի տա, և աստղերը երկնքից պիտի ընկնեն»: Աշխարհը տակնուվրա պիտի լինի, և մարդիկ ահավոր շվարումի ու շփոթմունքի պիտի մատնվեն (տե՛ս Մատթ. ԻԴ 3-31):

Այս նախանշաններից շատերը Եկեղեցու հիմնումից մինչև մեր օրերը պատահել և շարունակում են ու կշարունակեն պատահել մինչև աշխարհի վախճանը: Բոլոր հերետիկոսները, Ավետարանում հիշվածներից մինչև եկեղեցական պատմության մեջ ի հայտ եկած «հարյուր հիսունինը» հերձվածողներն ու ազանգավորները, ըստ մեր ձեռնադրության Մաշտոցի թվարկման, մինչև մեր օրերի եհովայականները, գալիս են «հանուն Քրիստոսի», և եթե նույնիսկ բացեիքաց չեն հայտարարում՝ «ես եմ Քրիստոսը», սակայն խոսքով ու գործով դրան են միտում: Քրիստոսն է

«ճանապարհը, ճամարտությունը և կյանքը» (Հովհ. ԺԳ 6): Եվ բոլոր հերետիկոսներն անխտիր հայտարարում են, թե իրենց քարոզածն է «ճամարտությունը», իրենք է, որ ցույց են տալիս ուղիղ «ճանապարհը», և, վերջապես, իրենց ուսուցումն է, որ պարզեցում է հավիտենական «կյանք»: Ուրիշ խոսքով՝ իրենք իրենց ուղղակի կամ անուղղակի հուշակել են «փրկության առաքյալ», ինչը նշանակում է գողանալ Քրիստոսի տեղը և դերը:

Սրանց համար է, որ Քրիստոսն ասում է. «Զգո՛ւյ՛շ եղեք, գուցե մեկը ձեզ խաբի, որովհետև շատերը կգան իմ անունով և շատերին կմոլորեցնեն. մի՛ հավատացեք նրանց» (հմմտ. Մարկ. ԺԳ 5, Դուկ. ԻԱ 8): Սրանք այն մարդիկ են, ովքեր շարունակ Ավետարանից են ճառում, սակայն իրականում չեչտում են իրենց հատուկ ինչ-ինչ ուսուցումները՝ մերժելով ավետարանական կամ ավանդական այլ ուսուցումներ, ամեն ինչ անում են «մոլորեցնելու համար, եթե հնարավոր է, նաև ընտրյալներին: Մի՛ գնացեք նրանց ետևից», - եզրակացնում է Հիսուսը:

Բացի սրանցից, բոլոր նրանք, ովքեր ասել և շարունակում են ասել, թե մարդու անհատական կամ ընկերության հավաքական

փրկությունը Քրիստոսի քարոզած ավետարանական սկզբունքներից տարբեր միջոցների կիրառման մեջ է, գիտակցաբար կամ անգիտակցաբար մոլորեցնող են: Պատմությունը այս հավաստման վկան է, որը ճամարտված է գրեթե բոլոր հերետիկոսների կյանքում և քարոզության, ինչպես նաև բոլոր ընկերային նոր սկզբունքների ու նոր փիլիսոփայությունների կիրառման փորձերի ընթացքում:

Սխալ չհասկանանք: Չենք ցանկանում ասել, որ բոլոր հերետիկոսները և բոլոր ընկերային (սոցիալական - թարգմ.) նոր համակարգերի քարոզիչներն անպատճառ և, ի վերջո, ամբողջությամբ սխալվում են, ոչ: Հերետիկոսության էությունը մասնակի ինչ-որ ճամարտության շեշտումն է՝ ի հեճուկս հիմնական ճամարտությունների: Արիտք կամ նեստորը երբ շեշտը դնում էին Հիսուսի մարդկային բնության վրա, բոլորովին սխալ բան չէին քարոզում. նրանց մոլորությունը Քրիստոսի աստվածությունն ուրանալու մեջ էր: Նույնն է ընկերային նոր համակարգերի պարագան, որոնք Ավետարանից դուրս կամ ի հեճուկս Ավետարանի փորձում են մարդուն կամ ընկերությունը բարեկարգել: Ֆրանսիական հե-

ղափոխությունը երբ «Հավասարություն, եղբայրություն, ազատություն» նշանաբանով ճանապարհ էր ընկնում, ավետարանական հիմնական սկզբունքներն էր, որ փորձում էր իրագործել ընկերության մեջ, բայց՝ առանց Աստծո գաղափարի: Իբրև տեսություն այնպես է թվում, թե առանց Աստծո գաղափարի կարելի է ընկերությունը բարեկարգել, և կարելի է «Հավասարությունը, եղբայրությունը, ազատությունը» ընկերության մեջ իրագործել, սակայն փորձարարական ու պատմական իրողությունները գալիս են հաստատելու, որ դա անկարելի է՝ առանց ընկերությունը կազմող անհատների ներքին և հոգեկան փոփոխություն: Եվ առանց Աստծո մասնավոր միջամտության, անկարելի է ներքին փոփոխություն: Դրա համար է, որ այդ հոյակապ նշանաբանը՝ «Հավասարություն, եղբայրություն, ազատություն», այսօր գրեթե միայն մնացել է դրամների վրա, որը բոլոր անհավասարությունների, բոլոր եղբայրադավ կռիվների և, վերջապես, բոլոր ազատությունների այլասերման ու կաշկանդման տևական խորհրդանշանն է:

Նույնն է մարքսիզմի և լենինիզմի պարա-

զան: Երբ սրանք համայնավարություն (կոմունիզմ - թարգմ.) են քարոզում և փորձում այն կիրարկել՝ երբեմն իդեալիստի այնքան եռանդով, սխալ բան չէ, որ անում են, ընդհակառակը, քրիստոնեական եկեղեցու առաջին օրերի կիրարկած սկզբունքներից մեկն է, որ ընկերային վարդապետության և հասարակարգի են վերածում: Բայց մոռանում են, որ այդ սկզբունքը չի պարտադրվում, այլ գործադրվում է ինքնահոգևոր միմյանց հասկանալով: Պարտադրությամբ ճշմարիտ և իսկական համայնակեցություն հաստատել անկարելի է: Պարտադրությունը ենթադրում է բռնություն և անխուսափելիորեն առաջնորդում բռնակալության: Իսկ բռնակալությունը, ի վերջո, եղծում է ամեն ինչ՝ ամենից առաջ մարդու ազատությունը, որը բանականության հետ մարդուն մարդ դարձնող հիմնական չափանիշն է: Իսկական համայնակեցությունն իբրև հիմք ունի ավետարանական այն վարդապետությունը, թե Աստված բոլորիս Հայրն է, մարդկությունը, առանց գույնի, ցեղի և լեզվի խտրության, Նրա գավակները, ամբողջ մարդկությունը կազմում է մեկ ընտանիք, և, հետևաբար, ինչպես նահապետական

ընտանիքում ամեն ինչ՝ արտ, այգի, կահկարասի, տունուտեղ, պատկանում է ընտանիքին, և ոչ ոք մտքով չի անցկացնում ընտանիքի որևէ անդամի շահագործել, այլ բոլորը կան և աշխատում են բոլորի համար, այդպես պիտի լինի նաև ընկերություն մեջ. այդ ժամանակ կտիրապետի իրական և ճշմարիտ համայնական հասարակարգը: Նման հասարակարգը, սակայն, չի իրականանա առանց Աստծո կամքի և մարդու կյանքում Նրա օրենքի տիրակալության: Հոգեկան իրողություններն ուրանալով՝ ընկերային բարեկարգ դրություն հաստատել անկարելի է: Նյութապաշտության վրա անկարելի է հիմնել իմացական և ոգեղեն բարձր քաղաքակրթություն: Այդ է պատճառը, որ քիչ տեղերում է անհավասարությունը, բռնակալությունը և ատելությունը այնքան դյուրին հող գտել, որքան, օրինակ, ստալինյան համայնավարական հասարակարգում: Քիչ տեղերում են ազատ շարժվելու, ազատ խոսելու, ազատ գրելու և սեփական քաղաքական ճակատագիրն անկաշկանդ որոշելու մարդկային տարրական իրավունքներն այնքան բրտորեն կոխկրտված, որքան մեր օրերի այն ընկերային հասար-

ակարգերում, որոնք ասպարեզ էին իջել մարդուն նրա երազած իրավակարգը՝ ազատությունը, հավասարությունը և եղբայրությունը պարզեցրելու... Ընկերային այս հասարակարգերն արդարև անուղղակի կերպով ասացին՝ «ես եմ», որ եկել եմ «մեսիական» թագավորությունը երկրի վրա հիմնելու: Հիսուսն ասում է. «Նրանց պտուղից կճանաչեք նրանց» (Ռմմտ. Մատթ. Է 16-20): Եվ ընկերային «բարի պտուղները» թվանշաններ չեն՝ քանի Ֆաբրիկա, քանի գիտական ու տեխնիկական հաստատություններ և արտադրություններ, քանի օդանավ, մարտանավ ու տանկ ունի ընկերվարական (սոցիալիստական - թարգմ.) հասարակարգը: Այլևս չենք հիշում ատոմային զենքերը, հրթիռները, սուզանավերը և այլն, և այլն: Դրանցից որոշները զուտ վնաս են՝ ի հաշիվ մարդկանց ընկերային երջանկության, ուրիշները՝ կրակ, որով խաղում է ստեղծված նոր հասարակարգը: Էական հարցը, որը կարոտ է լուծումի, այն է, թե դրանք որչափով են նպաստում աշխարհի խաղաղությանը և մարդկանց երջանկությանը, այսինքն՝ մտքին, հոգուն և ընկերային առողջ ազատությանը:

Սակայն սա երբեք չի նշանակում, որ մեր

ժամանակների «մեսիա» հասարակարգերին հակադրվածները՝ «կապիտալիզմը», «գեմուկրատիան» կամ «սոցիալիզմը» և այլ բազմաթիվ «իզմեր», դեռ ու դարման են տառապող, կեղեքվող ու կաշկանդված զանգվածներին: Տարակույսից վեր է, որ ամերիկյան, ֆրանսիական, չվեյցարական կամ անգլիական սահմանադրույթները մարդկային, ընկերային ու բարոյական առաջադիմության հոյակապ փաստաթղթեր են և բացահայտորեն հիմնված են ավետարանական սկզբունքների վրա: Բայց այդքանը բավական չէ, որ «Աստծո թագավորությունը» հիմնված հռչակվի երկրի վրա: Կարևորը այդ սահմանադրույթները գործադրելու կոչված մարդկանց հոգին է, որովհետև «հոգին է կենդանարարը, մարմինը մեծ օգտակարություն չունի» (տե՛ս Հովհ. Զ 64): Կամ՝ «հոգին է կյանք տալիս, իսկ տառը [լոկ որին էթե մարդը կառչի] սպանում է» (տե՛ս Բ Կորնթ. Գ 6):

Որպեսզի այդ սահմանադրույթները կարողանան իրենց նպատակին ծառայել, անհրաժեշտ է, որ գերանք գործածելու կանչված անհատները մշտապես Ավետարանի առողջ ու սուցումներով սնվեն և աճեն, որպեսզի այդ պետական փաստաթղթերը արդարև գործիք-

ները լինեն Աստծո կամքի, որը տիրում է «երկնքում», տիրել տալու համար նաև «երկրի վրա»*: Անհավասարությունը և դասակարգային խտրականությունը, ցեղային անհանդուրժողականությունն ու օտարների հանդեպ արհամարհանքը գլուխ բարձրացրած՝ քայլում են լավագույն սահմանադրույթներն ունեցող երկրներում: Այստեղ էլ կան ազատությունների բիրտ սանձարձակություններ և չարաչար գործածություններ, անդեռ խոր անհավասարություններ՝ նման մեծ քաղաքների երկնաքերերի և հեռավոր գյուղերի սևամորթների քայքայված հյուղակների միջև եղած անկամրջելի տարբերություններին: Ատելույթյան խարույկներ են մխում՝ սևամորթներին այրելու և դաշույններ շողում՝ սպիտակամորթների սրտերին մխվելու...

Ուրեմն, իրականացած և իրականանալու վրա է մեր Փրկչի այն կանխատեսությունը, թե բոլոր նրանք, ովքեր խոսքով կամ գործով հայտարարում են՝ «ես եմ» մարդկանց փրկություն բերողը, մոլորվածներ և մոլորեցնողներ

* Ակնարկ «Հայր մեր»-ի «Թող Քո կամքը լինի ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա» խոսքի:

են, որովհետև մեր ընկերային հասարակարգում առանց Քրիստոսի կենդանի ներկայության, ոչ մի բարիք չի կարող գոյանալ. «Որովհետև առանց Ինչ ոչինչ չեք կարող անել», ~ ասում է Քրիստոսը: Նրա կրոնական և ընկերային ուսուցումից զուրս մարդկության համար փրկություն չկա: Սրա վկան մարդկային ողջ պատմությունն է: Հերետիկոսները և ընկերային անաստված բարեկարգիչները եթե ճիշտ ու օգտակար ինչ-որ ուսուցում էլ ունեն, դա էլ է Ավետարանից ներշնչված: Դրա գործադրության միջոցները և մանրամասնությունները նրանց ստեղծագործություններն են. զուտ մարդկային հնարքներ՝ հակադրված աստվածային և բարոյական օրենքներին ու սկզբունքներին, և, հետևաբար, նաև մարդկային այդ անկատար մեթոդների մեջ են նրանց վրիպումների պատճառն ու գաղտնիքը:

Իսկ հալածա՞նքը... որը երկրորդ նշանը պետք է լիներ Քրիստոսի Գալուստը կանխող ժամանակաշրջանի: Ե՞րբ է, սակայն, եղել, որ քրիստոնեությունը, իսկական և իրական քրիստոնեությունը, չի հալածվել: Բոլորիս ծանոթ են «Գործք առաքելոցում» նկարագր-

ված դեպքերը: Ծանոթ են առաջին երեք դարերի գրեթե անընդմեջ հալածանքները քրիստոնեական Եկեղեցու դեմ՝ Ներոնից մինչև Դիոկղետիանոս, Սանատրուկից մինչև Տրդատ: Ծանոթ են «երկաբնակների» հալածանքները «միաբնակների» դեմ: Պապական Եկեղեցու հավատաքննության հալածանքներն ազատ ու ավետարանական հիմքերի վրա խորհողների և գրողների դեմ: Կաթոլիկների՝ բողոքականների, բողոքականների՝ կաթոլիկների դեմ հալածանքները: Հեղափոխությունների և համայնավարության հալածանքներն ընդդեմ ընդհանրապես Եկեղեցու: Էլ չենք հիշում հեթանոսների և այլադավանների հալածանքները նրանց մեջ ցրված և նրանց իշխանությունը ենթարկված քրիստոնյաների դեմ... Հալածանքներ, որոնք մինչև այս վայրկյանը շարունակվում են Չինաստանում, Սուդանում կամ աշխարհի այլ երկրներում: «Եթե Ինչ հալածեցին, ապա ձեզ էլ կհալածեն» (Հովհ. ԺԵ 20), ~ ասում է Տերը: «Բոլոր Արամք, ովքեր ցանկանում են ապրել աստվածպաշտությամբ, ի Քրիստոս Հիսուս, պիտի հալածաքի ենթարկվեն» (հմմտ. Բ Տիմ. Գ 12), ~ պատգամում է Պողոս առաքյալը:

Պատերազմե՞րը... Եղե՞լ է, արդյոք, մի շրջան,

երբ մարդկությունն ապրած լինի առանց պատերազմների՝ ավետարանական ժամանակների «Տրեական պատերազմից» սկսած, երբ Երուսաղեմը հիմնահատակ կործանվեց, մինչև համամարդկային համայնակույթ երկու պատերազմները: Մարդն իր սուրբ երբեք պատյան չի դրել: Սուր է վերցրել և սրից ընկել: «Լսելու եք պատերազմների ձայներ և պատերազմների լուրեր» (Մատթ. ԻԴ 6), - ավելացնում է Հիսուսը: Ներկա սերնդի կյանքի ընթացքում տեսնված ու լսված պատերազմներն այսօր շարունակվում են Վիետնամում և Միջին Արևելքում: Նաև հսկաների՝ Արևելքի ու Արևմուտքի միջև «պատերազմների լուրեր» ենք լսում և տակավին՝ փսփսուքներ «երրորդ համաշխարհայինի» մասին, որը բոլոր հնարավորություններն ունի երկրագնդի վրայից ամբողջ կյանքը, մարդկայինն էլ հետը, ոչնչացնելու: Եվ «ազգ ազգի վրա ելնելը», «սովը և սրածուծությունները», «երկնքից աստղեր թափվելը» տառացիորեն պիտի իրականանան ատոմային ռումբերի ու այլ դժոխային զենքերի պայթյունի և շողարձակման ձևով, որոնց արձակած միայն ճառագայթը համատարած մահ է սփռում՝ եթե նույնիսկ չհիշենք ամ-

բողջ մթնոլորտի բռնկման հավանականություն մասին:

Այս բոլորից ցանկանում ենք հետևություն անել, որ աշխարհը դեպի Երկրորդ Գալուստ է ընթանում այն գծերով, որոնք նախատեսված են Ավետարանի հայտնութենական կանխասացություն մեջ:

Մնում է տիեզերական կարգի խանգարումը: Նրա էլ նախօրյակին չե՞նք արդյոք: Մարդու թափանցումն արտամթնոլորտային տարածություն, դեպի մոլորակներ նրա արշավանքները չնախատեսված ինչ-որ սխալի հետևանքով արեգակնային համակարգում տիրող ներդաշնակությունը խանգարելու պատճառ չե՞ն դառնա արդյոք...

Մահկանացուներին տրված է «գիտենալ ժամերն ու ժամանակները» (Ռմմտ. Մատթ. ԻԴ 42, Մարկ. ԺԳ 32) Քրիստոսի Երկրորդ Գալստյան: Բայց բավական նախանշաններ են տրված, որոնց հիման վրա կարող ենք ասել, թե ժամանակների երկրորդ լրումից հեռու չենք: Չգիտենք, թե ամառը ո՞ր օրը կգա, բայց գիտենք, որ անպատճառ պիտի գա: Թ՛ղենու՝ տերևներ արձակելն ինքնին նշան է, որ ամառը մոտ է (Ռմմտ. Մատթ. ԻԴ 32-33):

Հիսուսը գուշակեց նաև Երուսաղեմ քաղաքի «կատարածը» և կործանումը: Նրա խոսքերից շուրջ 40 տարիներ հետո Նրա սաճները տառացիորեն իրականացան: 70 թվականին հռոմեացիները հիմնահատակ կործանեցին այս ապստամբ քաղաքը, որը չիմացավ իր փրկության ժամը և սպանեց իրեն ընդառաջ եկած Փրկչին: Սա աշխարհի կործանման նախապատկերն էր: Պատմությունը պետք է կրկնվի ավելի լայն և համապարփակ չափերով: Մեկի իրականացումը մյուսի իրականացման հավաստիքն է: Երկուսի կործանման պատճառներն էլ նույնն են լինելու. մարդու ապստամբությունն Աստծո դեմ:

«Խորհուրդ մեծ և սքանչելի» է Քրիստոսի Առաջին Հայտնությունը՝ Աստվածհայտնությունը: Նույնքան «մեծ», սակայն «սոսկալի» խորհուրդ է Քրիստոսի Երկրորդ Հայտնությունը: Առաջին Հայտնությունը լավագույնս հասկանալի և ըմբռնելի է Ավետարանի առաջին էջերում պատմվող սրտագրավ ու պարզունակ ղրվագներով: Երբ մտնում ենք աստվածաբանության բավիղները, երբ փորձում ենք ոտք դնել «բնությունների» և «փրկագործության» իմաստասիրական հաս-

կացությունների լաբիրինթոս, տառացիորեն փակուղու ենք հանդիպում և դուռ բացում այնպիսի վեճերի, որոնք իրապես վերջ չունեն: Այդպես էլ, եթե փորձենք Երկրորդ Գալստյան «գիտական», «հոգեբանական» կամ «պատմական» որակվող մեկնաբանությունների մեջ մխրճվել, տառացիորեն փակուղու կհանգենք: Ավետարանում ասվածները բավական հստակ են և ավելի քան թափանցիկ՝ մեզ պատմության ներկա շրջանի վախճանը բացատրելու համար: Պատմության նոր շրջանն սկսվեց Քրիստոսի Առաջին Գալստյամբ, որից սկսած՝ հաշվում ենք պատմությունը թվագրող ներկա թվականը՝ «Յամի Տեառն»-ը*: Եվ այս շրջանն իր վախճանին կբերվի Քրիստոսի Երկրորդ Գալստյամբ:

Ինչպես պատմության հին շրջանը՝ «նախքան Քրիստոսը», նախապատրաստությունն է նոր շրջանի և նոր թվականի, այնպես էլ Քրիստոսի Ծննդյանը հաջորդող ամբողջ պատմությունը նախապատրաստությունն է Երկրորդ Գալստյան ու դրան հաջորդող շրջանի: Հետաքրքրական նմանություն կա պատմու-

* Գրաբ.՝ Տիրոջ տարում (թվականի):

Թյան երկու շրջանների առաջընթացների կերպերի մեջ: Որքան մոտենում ենք «ժամանակների լրումին», այնքան ավելի է արագանում պատմության առաջխաղացման «տեմպը»: Պատմության բեմի վրա մարդու երևալուց՝ նրա «ստեղծումից», մինչև իբրև բանական էակ ձևավորվելը և մինչև ընկերային կազմակերպություն հազարավոր, բյուրավոր և, թերևս, միլիոնավոր տարիներ անցան: Բայց մարդն իր կրոնական, մտավոր և վարչական նվաճումներն իրագործեց առավելաբար Քրիստոսի Առաջին Հայտնությունը կանխող հազար տարիների ընթացքում: Եբրայական միաստվածություն կրոնը, որը «Մեսիային» ընդունելու և ըմբռնելու նախապատրաստություն էր, անհիշելի ժամանակներ ապրեց իր նախնական վիճակում, բայց լիովին կազմավորվեց մարգարեներով, իմաստուններով ու քահանաներով, ովքեր հետզհետե, նախքան Քրիստոսը 1000-ական թվականներից մինչև առաջին դար, այս ժողովրդին տվեցին Աստծո խոսքը, իմաստությունը և Օրենքը: Հունական իմաստասիրությունը, գրականությունը և գեղարվեստը, խարխափումի երկար շրջան բոլորելուց հետո, իրենց զենիթին հասան

նախքան Քրիստոսը 5-6-րդ դարերի ընթացքում: Հռոմեական վարչական հոյակապ համակարգն իր կատարելությունը հասավ նախքան Քրիստոսի Մյունխենը 100 թվականին՝ գելպտական, ասորաբաբելական, պարսկական և հունական կայսրությունների հազարավոր տարիների փորձերից հետո: Այս բոլորը նախապատրաստություն էր Աստծո ստեղծելիք նոր մարդկության՝ քրիստոնեական եկեղեցու համար, որը հաստատվեց «առաքյալների և մարգարեների հիման վրա», գործածեց հունական իմաստասիրական եզրերը, գրական սեռերը և գեղարվեստը՝ ինքն իրեն, սեփական աստվածաբանությունն ու պաշտամունքը արտահայտելու համար, և իր եկեղեցական կազմակերպության համար որդեգրեց հռոմեական վարչական համակարգը:

Նույն երևույթը կրկնվում է «նոր» ժամանակներում: Անցնող 50 տարում շատ ավելի առաջադիմություն է եղել, քան նախորդ 1900 տարիների ընթացքում: Եվ այսօր, անցնող հինգ-տասը տարիների ընթացքում պատմությունն այնքան և ավելի ճանապարհ է կտրել, որքան՝ նախորդ 50 տարիների ընթացքում, որոնք պատմության ամենաարա-

գավազ տարիներն էին: Այս բոլորը նշանակում է, որ մենք գահավիժորեն կամ տիեզերանավերի խելացնոր արագությամբ դիմում ենք դեպի ժամանակների վախճան...

Տիեզերքի մեծագույն դրամայի հիշատակումով է փակվում Մեծ պահքի կիրակիների այս՝ այնքան իմաստալից ոսկե շղթան: Քրիստոսի Երկրորդ Գալստյամբ բացվում է մի նոր դարաշրջանի՝ «նոր երկնքի ու նոր երկրի» (Բ Պետ. Գ 13, Հայտն. ԻԱ 1) վարագույրը, ուր Մեծ պահք այլևս չպիտի գոյություն ունենա, ոչ էլ այն ժխտական երևույթները և պատճառները, որոնք անհրաժեշտ դարձրեցին Մեծ պահքը: Այս նոր միջավայրում ուրախությունը, ցնծությունը և «արդարությունը պիտի բնակվեն» (Ռմմտ. Բ Պետ. Գ 13): Եվ նրա բնակիչները «հաղթողները» (Ռմմտ. Հայտն. ԻԱ 7) պիտի լինեն...

Շարական Գալստյան կիրակիի (Բ պատկեր)

Ըստ ատենաց մարգարեի,
Որ առ փրկելաքս արեսմբ Գառինդ,
Ցնծամք և մեք՝ ծառք անտառի
Ընդ գալուստ Տեսունդ Կրկնակի.
Ծնորհեա՛ մեզ, Տէր, ընդ արդարոցն
Ընդ առ ի Քէն տնկեալ ծառոցն,
Այժմ յուսով զուարճանալ
Եւ յԵրկրորդին ընդ Քեզ ցնծալ:

Սմին աման տայ ատեսիս
Զաքարիաս Նոր Սիովնի,
Եթէ՛ ուրախ լեր, ահա գայ
Առ Քեզ խոնարհ և հեզ Արքայ.
Նստեալ ի յէշ և յաւանակ՝
Կրկին ազանց գոլ օրինակ.
Նստեալդ յաթոռ Քերովբէից
Նիստ գթութեամբ ի մեր հոգիս:

Զահեղ փառաց Քոց երևումն,
Որ լինելոց է յԵրկրորդումն,
Ետես Դաւիթ յառաջագոյն,
Ծանոյց կանխաւ ազդմամբ Հոգոյն,
Թէ յայտնապէս Աստուած գայցէ.
Հուր առաջի Իւր բորբոքէ.

Յայնժամ, Յիսո՛ւս, ի մեզ խնայեա՛,
Գթա՛, Քրիստոս և ողորմեա՛:
Աստուածածի՛ն անհարսնացեալ,
Յերկրէ յերկինս Հարսն ընծայեալ,
Յորժամ բազմիս լուսոյ աման,
Քո Միածնիդ յաջակողմեան,
Յայնժամ մաղթեա՛ ընդ մեր զնոյն՝
Փրկել զմեզ յահեղ բոցոյն,
Համադասիլ ընդ արդարոցն,
Երգել քեզ զփառս ընդ երկնայնոցն:

Թարգմանութիւն.

*Մարգարեի ավետիսով
Փրկվածներս արչամբ Քո
Յնծում ենք իբրև ծառ անտառի,
Գալուստովդ, Տե՛ր, վերստին.
Ընորհիր մեզ սրբերիդ՝
Քեզնից տնկված ծառերի հետ,
Այժմ հույսով ուրախանալ,
Իսկ Երկրորդին Քեզ հետ ցնծալ:*

*Սրա անան ավետիս է տալիս
Նոր Սիոնին հին Զաքարիան.
«Ուրախ եղիր, ահա գալիս է
Դեպի Քեզ խոնարհ և հեզ արքան՝
Նստած էջին, ավանակին՝*

Օրինակները երկու ազգերի.
Քերովբեական աթոռին Նստա՛ծդ,
Գթով բազմի՛ր մեր հոգուն:
Երևումը ահեղ փառքիդ,
Որ լինելու է Երկրորդ Գալուստիդ,
Տեսալ Դավիթը նախապես,
Հայտարարեց Հոգու ազդումով,
Թե հայտնապես Աստված է գալիս,
Հուրը Նրա առջևից բորբոքվում է,
Այնժամ, Հիսո՛ւս, գթա՛ մեզ,
Ողորմի՛ր, Տեր, և մեր մասին հոգա՛:
Աստվածածին անհարսնացյալ,
Երկրից երկինք Հարս տրվեցիր,
Երբ լույսի անան բազմես
Միածնիդ աջակողմում,
Այնժամ մաղթիր մեր փոխարեն,
Փրկելու մեզ ահեղ բոցից,
Դասելու արդարների հետ,
Զայնակցելու հրեշտակներին:*



* Այսինքն՝ հրեաների և հեթանոսների (հեղ.):

Բովանդակություն

Երկու խոսք	5
Մուտք	7
Պահքի մասին ընդհանրապես	9
Բարեկենդան. երջանկություն	49
Արտաքսման կիրակի. դրախտի կորուստը	61
Անառակի կիրակի. դարձը	83
Անառակի կիրակի. վատնում	97
Անառակի կիրակի. ավագ անառակը	117
Տնտեսի կիրակի. նյութական հարստության տնօրհնումը	133
Դատավորի կիրակի. աղոթք	153
Գալստյան կիրակի. Քրիստոսի Երկրորդ Գալստյան խորհուրդը	179

Շնորհք պատրիարք ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

Մեծ պահքի կիրակիների
ոսկե շղթան

Արևմտահայերենից
փոխադրությունը՝ *Գ. ԱՆՏՈՆՅԱՆԻ*

Խմբագիրներ՝ *Ղևոնդ քահանա*
ՄԱՅԻԼՅԱՆ,
Ս. ՍՏԱՄԲՈԼՅԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին - 2008